The study of emotional (professional) burnout syndrome shows that it is a state of deep psychological and physical exhaustion caused by chronic stress, which directly affects a person's cognitive functions, memory and concentration. Being at the forefront of the information society, librarians face unique stressors in their daily work: rapid technological changes, limited budgets, high responsibilities, and constant communication with users. While in a number of leading European countries (Sweden, Netherlands, Germany) this problem is regulated at the state level, legally recognized as a medical diagnosis and guaranteeing a long rehabilitation leave, in the library system of Armenia the problem still remains little studied and neglected. This research conducted among Armenian librarians is one of the first steps to diagnose and highlight the psycho-emotional problems in the field, the impact of working conditions and personal perceptions of employees. As effective ways to overcome the problem, modern management and psychological concepts offer both individual conscious rehabilitation and protection of personal boundaries, as well as drastic organizational changes. Implementing new management models in library systems, reducing bureaucratic hassles, and using flexible methodologies can significantly reduce employee stress, balance demands and resources, and prevent professional burnout, ensuring sustainable and efficient library operations.

Հավելված 1. Հարցում

Քաժին 1. Ընդհանուր հարցեր

1. Ներկայումս աշխատո՞ւմ եք գրադարանային ոլորտում
 - Այո
 - Ոչ
2. Քանի՞ տարեկան եք
 - 20-24 տարեկան
 - 25-29 տարեկան
 - 30-34 տարեկան
 - 35-39 տարեկան
 - 40-44 տարեկան
 - 45-49 տարեկան
 - 50-54 տարեկան
 - 55-59 տարեկան
 - 60+ տարեկան
3. Սեռ
 - Իգական
 - Արական
4. Քանի՞ տարի եք աշխատում գրադարանային ոլորտում
 - մինչև 5 տարի
 - 6-9 տարի
 - 10-14 տարի
 - 15-19 տարի
 - 20-24 տարի
 - 25 և ավելի տարի
5. Ունե՞ք գրադարանային գործի բարձրագույն կրթություն
 - Այո
 - Ոչ

Բաժին 2. Աշխատանքային պայմաններ⁹

6. Գրադարանի բյուջեն բավարար չէ մեր կարիքների համար

- Շատ սխալ
- Սովորաբար սխալ է
- Ինչ-որ չափով սխալ
- Հավասարապես ճշմարիտ և սխալ
- Ինչ-որ չափով ճշմարիտ
- Սովորաբար ճիշտ է
- Շատ ճշմարիտ

7. Գրադարանավարները սովորաբար չեն խորհրդակցում, երբ աշխատանքային փոփոխությունների անհրաժեշտություն կա

8. Գրադարանավարները լավ աշխատավարձ չեն ստանում

9. Գրադարանավարներն չունեն անհատական աշխատանքային տարածք

10. Գրադարանի ընդհանուր ֆիզիկական միջավայրը գրավիչ չէ և անհարմար է

11. Գրադարանում լիազորությունների և պատասխանատվության սահմանները հստակ չեն

12. Գրադարանավարներն քիչ փոփոխականություն ունեն աշխատանքային առաջադրանքներում

13. Գրադարանում երկարաժամկետ նպատակները հստակ չեն

14. Չկա պարզևատրման (խրախուսման) արժանիքների համակարգ՝ լավ աշխատանքը շրջափելիորեն ճանաչելու համար

15. Գրադարանավարների համար կարիերայի սանդուղք չկա

16. Գրադարանային կանոնավոր շարունակական կրթության համար քիչ գումար կա, և այլ վերապատրաստումների համար խնդրանքները հազվադեպ են աջակցվում

Բաժին 3. Անձնական հոգեբանական տվյալներ

⁹ Մնացյալ հարցերի դեպքում առաջարկվել են պատասխանի նույն տարբերակները:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

17. Երբ նպատակ եմ դնում, սովորաբար հասնում եմ դրան, անկախ ամեն ինչից

18. Ես դժվարանում եմ մտածել, երբ նյարդայնանում եմ

19. Իմ աշխատաժամանակը գերազանցում է իմ ազատ ժամանակին

20. Իմ աշխատանքը չափազանց կարևոր է ինձ համար

21. Ես հակված եմ պերՖեկցիոնիստ լինելու

22. Երբ վերջնաժամկետ ունեմ, ամենայն հավանականությամբ, բաց կթողնեմ ընդմիջումները և կաշխատեմ

23. Ես կարող եմ հաջողությամբ մեծ ծանրաբեռնվածություն կրել ավելի լավ, քան իմ ճանաչած մարդկանց մեծ մասը

24. Ես շատ կազմակերպված անձնավորություն եմ

25. Ես հակված եմ ամեն ինչ հետաձգել մինչև վերջին րոպեն, իսկ հետո խելագարի պես աշխատել, որպեսզի դրանք ավարտվեն

26. Ես կարծում եմ, որ գրադարանային աշխատանքը շատ կարևոր է հասարակության բարելավման համար

27. Ես հաճախ անձնական ժամանակ եմ տրամադրում աշխատանքային գործունեությանը

28. Ես բավականին մրցունակ եմ, թեև կարող եմ ավելի շատ մրցակցել ինքս ինձ, քան մյուսների հետ

Բաժին 4. Հոգնածություն կամ մասնագիտական այրում¹⁰

29. Աշխատանքային օրվա վերջում հոգնածություն զգո՞ւմ եք

- Միշտ
- Հաճախ
- Երբեմն
- Հազվադեպ
- Երբեք

30. Առավոտյան հոգնե՞լ եք աշխատանքային օրվա մասին մտածելուց

¹⁰ Մնացյալ հարցերի դեպքում առաջարկվել են պատասխանի նույն տարբերակները:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

31. Զգո՞ւմ եք, որ յուրաքանչյուր աշխատանքային ժամը հոգնեցուցիչ է Ձեզ համար

32. Ազատ ժամանակ բավականաչափ էներգիա ունե՞ք ընտանիքի և ընկերների համար

33. Արդյո՞ք Ձեր աշխատանքը հուզական առումով հոգնեցուցիչ է

34. Ձեր աշխատանքը հիասթափեցնո՞ւմ է Ձեզ

35. Դուք ուժասպառ եք զգում Ձեր աշխատանքի պատճառով

36. Ունենո՞ւմ եք ֆիզիկական ցավեր (գլխացավ, մեջքի ցավ կամ հաճախակի մրսածություն) լարված աշխատանք կատարելուց հետո:

Հավելված 2. Հարցման արդյունքները

| Բաժին 1. Ընդհանուր հարցեր | | | | | | | | | |
|--|-------------------|---------------|-----------------|-----------------|-----------------|----------------------|-------------|---------------|---------------|
| Հ./Պ. | <i>Այո</i> | | | | | <i>Ոչ</i> | | | |
| 1. Ներկայումս աշխատո՞ւմ եք գրադարանային ոլորտում | 74 անձ կամ 96,1% | | | | | 3 անձ կամ 3,9% | | | |
| Հ./Պ. | 20-24 մ. | 25-29 մ. | 30-34 մ. | 35-39 մ. | 40-44 մ. | 45-49 մ. | 50-54 մ. | 55-59 մ. | 60+ մ. |
| 2. Քանի՞ տարեկան եք | 1 (1.3%) | 2 (2.6%) | 6 (7.8%) | 9 (11.7%) | 12 (15.6%) | 16 (20.8%) | 4 (5.2%) | 11 (14.3%) | 16 (20.8%) |
| Հ./Պ. | <i>Արական</i> | | | | | <i>Բազմական</i> | | | |
| 3. Սեռ | 75 անձ կամ 97,4% | | | | | 2 անձ կամ 2,6% | | | |
| Հ./Պ. | <i>մինչև 5 մ.</i> | <i>6-9 մ.</i> | <i>10-14 մ.</i> | <i>15-19 մ.</i> | <i>20-24 մ.</i> | <i>25 և ավելի մ.</i> | | | |
| 4. Քանի՞ տարի եք աշխատում գրադարանային ոլորտում | 11 (14,3%) | 11 (14,3%) | 10 (13%) | 7 (9,1%) | 13 (16,9%) | 25 (32,5%) | | | |
| Հ./Պ. | <i>Այո</i> | | | | | <i>Ոչ</i> | | | |
| 5. Ունե՞ք գրադարանային գործի բարձրագույն կրթություն | 29 անձ կամ 37,7% | | | | | 48 անձ կամ 62,3% | | | |

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

| Բաժին 2. Աշխատանքային պայմաններ | | | | | | | |
|--|---------------|---------------|------------------|------------------|---------------------------------|---------------------|---------------|
| Խորհրդակցական | Պատասխան | | | | | | |
| | | Ըստ սկզբի | Մոտիվացար սիդա է | ԲՆ-ու ամեն սկզբի | Հանրապետության համարիչի և սկզբի | ԲՆ-ու ամեն համարիչի | Ըստ համարիչի |
| 1. Գրադարանի բյուջեն բավարար չէ ներ կարիքների համար | 2 (2,6%) | 2 (2,6%) | 2 (2,6%) | 11 (14,3%) | 15 (19,5%) | 11 (14,3%) | 34 (44,2%) |
| 2. Գրադարանում գրադարանավարների տվյալաբար չեն խորհրդակցում, նրբ աշխատանքային փոփոխությունների անհրաժեշտություն կա | 15 (19,5%) | 6 (7,8%) | 17 (22,1%) | 8 (10,4%) | 16 (20,8%) | 10 (13%) | 5 (6,5%) |
| 3. Գրադարանավարները լավ աշխատավարձ չեն ստանում | 1 (1,3%) | 1 (1,3%) | 2 (2,6%) | 5 (6,5%) | 6 (7,8%) | 13 (16,9%) | 49 (63,6%) |
| 4. Գրադարանավարներն չունեն անհատական աշխատանքային տարածք | 19 (24,7%) | 5 (6,5%) | 11 (14,3%) | 8 (10,4%) | 23 (29,9%) | 8 (10,4%) | 3 (3,9%) |
| 5. Գրադարանի ընդհանուր ֆինանսական միջավայրը գրավիչ չէ և անհարմար է | 30 (39%) | 8 (10,4%) | 7 (9,1%) | 14 (18,2%) | 8 (10,4%) | 6 (7,8%) | 4 (5,2%) |
| 6. Գրադարանում լիազորությունների և պատասխանատվության սահմանները հստակ չեն | 13 (16,9%) | 11 (14,3%) | 14 (18,2%) | 10 (13%) | 18 (23,4%) | 6 (7,8%) | 5 (6,5%) |
| 7. Գրադարանավարներն չիչ փոփոխականություն ունեն աշխատանքային առաջադրանքներում | 4 (5,2%) | 13 (16,9%) | 16 (20,8%) | 13 (16,9%) | 20 (26%) | 6 (7,8%) | 5 (6,5%) |
| 8. Գրադարանում նրկարաժամկետ նպատակները հստակ չեն | 4 (5,2%) | 10 (13%) | 16 (20,8%) | 9 (11,7%) | 22 (28,6%) | 5 (6,5%) | 11 (14,3%) |
| 9. Չկա պարզևստրման (խրախուսման) արժանիքների համակարգ լավ աշխատանքը շրջափնիչորեն նաևաչելու համար | 0 (0%) | 6 (7,8%) | 5 (6,5%) | 2 (2,6%) | 14 (18,2%) | 21 (27,3%) | 29 (37,7%) |
| 10. Գրադարանում գրադարանավարների համար կարիերայի անորոշք չկա | 2 (2,6%) | 2 (2,6%) | 7 (9,1%) | 10 (13%) | 23 (29,9%) | 15 (19,5%) | 18 (23,4%) |
| 11. Գրադարանային կանոնադրը շարունակական կրթության համար չիչ գույնար կա, և սլ վերապատրաստումների համար խնդրանքները հազվադեպ են առկայում | 1 (1,3%) | 8 (10,4%) | 8 (10,4%) | 9 (11,7%) | 14 (18,2%) | 17 (22,1%) | 20 (26%) |

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Բաժին 3. Անձնական տվյալներ

| Տարբերակ | Պատասխան | Պատասխաններ | | | | | | |
|---|----------|---------------|--------------|--------------|---------------------|--------------------|----------------|---------------|
| | | Շատ քիչ | Մոտրաբար քիչ | Բացարձակ քիչ | Տանկաբարձ քիչ և քիչ | Բացարձակ և անսովոր | Մոտրաբար և քիչ | Շատ և անսովոր |
| 1. Երբ նպատակ է ունենում, սովորաբար հասնում եմ դրան, անկախ ամեն ինչից | | 2 (2,6%) | 1 (1,3%) | 2 (2,6%) | 8 (10,4%) | 15 (19,5%) | 26 (33,8%) | 23 (29,9%) |
| 2. Ես դժվարանում եմ մտածել, երբ կարդայնալուս եմ | | 7 (9,1%) | 7 (9,1%) | 9 (11,7%) | 16 (20,8%) | 13 (16,9%) | 14 (18,2%) | 11 (14,3%) |
| 3. Բոլ աշխատաժամանակսը գերազանցում է իմ ազատ ժամանակին | | 8 (10,4%) | 4 (5,2%) | 6 (7,8%) | 7 (9,1%) | 15 (19,5%) | 16 (20,8%) | 21 (27,3%) |
| 4. Բոլ աշխատանքը չափազանց կարևոր է ինձ համար | | 1 (1,3%) | 0 (0%) | 3 (3,9%) | 3 (3,9%) | 12 (15,6%) | 11 (14,3%) | 47 (61%) |
| 5. Ես հավիված եմ պերժեկցիոնիստ լինելու | | 1 (1,3%) | 2 (2,6%) | 4 (5,2%) | 16 (20,8%) | 19 (24,7%) | 13 (16,9%) | 22 (28,6%) |
| 6. Երբ վերջնաժամկետ ունենում, ամենայն հավանականությամբ բաց կտրդեմ ընթացիկները եւ կաշխատեմ | | 2 (2,6%) | 1 (1,3%) | 0 (0%) | 6 (7,8%) | 5 (6,5%) | 23 (29,9%) | 40 (51,9%) |
| 7. Ես կարող եմ հաջողությամբ մեծ ծանրաբեռնվածություն կրել ավելի լավ, քան իմ ճանաչած մարդկանց մեծ մասը | | 1 (1,3%) | 0 (0%) | 2 (2,6%) | 8 (10,4%) | 18 (23,4%) | 21 (27,3%) | 27 (35,1%) |
| 8. Ես շատ կազմակերպված անձնակազմություն եմ | | 0 (0%) | 0 (0%) | 1 (1,3%) | 2 (2,6%) | 13 (16,9%) | 21 (27,3%) | 10 (12,9%) |
| 9. Ես հավիված եմ ամեն ինչ հետաձգել մինչև վերջին րոպեն, իսկ հետո խելագարի պես աշխատեմ, որպեսզի դրանք անարդյուն | | 32 (41,6%) | 10 (13%) | 8 (10,4%) | 7 (9,1%) | 9 (11,7%) | 6 (7,8%) | 5 (6,5%) |
| 10. Ես կարծում եմ, որ գրառարկանային աշխատանքը շատ կարևոր է հասարակության բարեկեցության համար | | 0 (0%) | 0 (0%) | 0 (0%) | 2 (2,6%) | 10 (13%) | 14 (18,2%) | 51 (66,2%) |
| 11. Ես հաճախ անձնական ժամանակ եմ տրամադրում աշխատանքային գործունեությանը | | 1 (1,3%) | 7 (9,1%) | 2 (2,6%) | 7 (9,1%) | 26 (33,8%) | 16 (20,8%) | 18 (23,4%) |
| 12. Ես բավականին մրցունակ եմ, թեև կարող եմ ավելի շատ մրցակցել ինձ հանդիսանողներին | | 1 (1,3%) | 0 (0%) | 4 (5,2%) | 9 (11,7%) | 24 (31,2%) | 25 (32,5%) | 14 (18,2%) |

Բաժին 4. Հոգևածություն կամ մասնագիտական այրում

| Հարց | Պատասխան | Պատասխաններ | | | | |
|--|----------|---------------|---------------|---------------|-----------------|---------------|
| | | Միայն | Համարի | Երբեմն | Տանկաբարձ և քիչ | Երբեք |
| 1. Աշխատանքային օրվա վերջում հոգևածություն զգո՞ւմ եք | | 12 (15,6%) | 27 (35,1%) | 28 (36,4%) | 6 (7,8%) | 4 (5,2%) |
| 2. Անպիտան իրավիճակներ աշխատանքային օրվա մասին մտածելուց | | 1 (1,3%) | 6 (7,8%) | 19 (24,7%) | 23 (29,9%) | 28 (36,4%) |
| 3. Չզո՞ւմ եք, որ ուղարկանային աշխատանքային ժամը հոգևածուցի է Ձեզ համար | | 1 (1,3%) | 3 (3,9%) | 14 (18,2%) | 29 (37,7%) | 30 (39%) |
| 4. Ազատ ժամանակ բավականաչափ ենթերգիս ունե՞ք ընտանիքի և ընկերների համար | | 23 (29,9%) | 24 (31,2%) | 16 (20,8%) | 11 (14,3%) | 3 (3,9%) |
| 5. Արդյո՞ք Ձեր աշխատանքը հուզական առումով հոգևածուցի է | | 4 (5,2%) | 10 (13%) | 21 (27,3%) | 22 (28,6%) | 20 (26%) |
| 6. Չե՞ր աշխատանքը հիպոպոթիզոն ունի Ձեզ | | 2 (2,6%) | 2 (2,6%) | 21 (27,3%) | 17 (22,1%) | 35 (45,5%) |
| 7. Գու՞ր ուժասպառ եք զգում Ձեր աշխատանքի պատճառով | | 3 (3,9%) | 5 (6,5%) | 24 (31,2%) | 20 (26%) | 25 (32,5%) |
| 8. Ունե՞նում եք ֆիզիկական ցավեր (զիխազցավ, մեջքի ցավ կամ համախափի մրսածություն) ռարյա՞ծ աշխատանք կատարելուց հետո | | 8 (10,4%) | 18 (23,4%) | 26 (33,8%) | 23 (29,9%) | 2 (2,6%) |

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Հավելված 3. Անձնական այրման գործակիցը (ԱԱԳ)

Յուրաքանչյուր հայրաբարության համար օգտագործելով յոթ բալանոց սանդղակ, փորձեք գնահատել ինքներդ Ձեզ որքան հնարավոր է ազնիվ յուրաքանչյուր կետի վերաբերյալ: Ավարտելուց հետո ավելացրեք Ձեր բոլոր միավորները՝ ընդհանուր ԱԱԳ միավոր ստանալու համար:

| Պնդումներ/Պատասխաններ | <i>Դառ չեմ</i> | <i>Սովորաբար</i> | <i>Ինչ-իսկ</i> | <i>Հավատարմորեն</i> | <i>Ինչ-որ</i> | <i>Սովորաբար ճիշդ է</i> | <i>Իսկապես</i> |
|--|----------------|------------------|----------------|---------------------|---------------|-------------------------|----------------|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Երբ նպատակ եմ դնում, սովորաբար հասնում եմ դրան, անկախ ամեն ինչից: | | | | | | | |
| Ես դժվարանում եմ մտածել, երբ նյարդայնանում եմ: | | | | | | | |
| Իմ աշխատանքային գործունեությունը գերազանցում է իմ ազատ ժամանակի գործունեությունը | | | | | | | |
| Իմ կարիերան չափազանց կարևոր է ինձ համար | | | | | | | |
| Ես հակված եմ պերֆեկցիոնիստ լինելու | | | | | | | |
| Ես դիսկի եմ դիմում | | | | | | | |
| Ես միշտ ինձ համարել եմ «Ա րիպի» անձնավորություն | | | | | | | |
| Երբ վերջնաժամկետ ունեմ, ամենայն հավանականությամբ, բաց կթողնեմ ընդմիջումները կամ ճաշը և կաշխատեմ մեկժամ մեկ | | | | | | | |

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

| | | | | | | | |
|---|--|--|--|--|--|--|--|
| ժամ ինչ-որ բան անելու համար | | | | | | | |
| Ես մի փոսակ «աշխատանքային ձի» եմ՝ ես կարող եմ հաջողությամբ մեծ ծանրաբեռնվածություն կրել ավելի լավ, քան իմ ճանաչած մարդկանց մեծ մասը | | | | | | | |
| Ես շարք կազմակերպված անձնավորություն եմ | | | | | | | |
| Ես կարծում եմ, որ եթե Դուք ընդհանրապես ինչ-որ բան եք անում, Դուք պետք է դա լավ անեք | | | | | | | |
| Ես դժվարանում եմ հանգստանալ | | | | | | | |
| Ինձ համար դժվար է առաջադրանքներ պատվիրակել ուրիշներին | | | | | | | |
| Ես հակված եմ ամեն ինչ հեղափոխել մինչև վերջին րոպեն, իսկ հետո խելագարության պես աշխատել, որպեսզի դրանք ավարտվեն | | | | | | | |
| Ուրիշներն ինձ համարում են գերհաջողակ կամ կարծում են, որ ես պատվախնդիր եմ | | | | | | | |
| Ես ունեմ գլխացավ, մեջքի ցավ կամ հաճախակի մրսածություն | | | | | | | |
| Ես կարծում եմ, որ գրադարանային աշխատանքը շարք կարևոր է հասարակության բարելավման համար | | | | | | | |
| Ես հաճախ անձնական ժամանակ եմ փրամադրում աշխատանքային գործունեությանը | | | | | | | |
| Ինձանից որոշ ժամանակ է պահանջվում, որպեսզի «իջնեմ» ոգևորիչ իրադարձությունից հետո | | | | | | | |
| Ես բավականին մրցունակ եմ, թեև կարող եմ ավելի շարք մրցակցել ինքս ինձ հետ քան մյուսների հետ | | | | | | | |

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Պարասխաններ.

20-40 միավոր՝ Դուք մասնագիտական այրման վտանգի տակ չեք:

41-60 միավոր՝ Մասնագիտական այրման ռիսկը փոքր է. Դուք ստիպված կլինեք որոշ ժամանակ աշխատել բարձր ՄԱԳ միջավայրում, նախքան գուցե ստիպված լինեք անհանգստանալ մասնագիտական այրման մասին:

61-100 միավոր՝ Մասնագիտական այրման նորմալ ռիսկով հանգամանքները կարևոր գործոն կլինեն հաշվի առնելու համար: ՄԱԳ-ի բարձր մակարդակ ունեցող աշխատավայրում Դուք պետք է ուշադրություն դարձնեք մասնագիտական այրման վաղ փուլերի նշաններին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: Այլ իրավիճակներում սթրեսի կառավարման մի քանի մեթոդների օգտագործումը կօգնի Ձեզ կանխել աշխատանքի այրումը: Ուշադիր վերլուծեք Ձեր քեզ հարցերի պատասխանները: Եթե պատասխանների շրջանակը լայն է, և դրանցից մի քանիսը գնահատվում են 6 կամ 7 միավոր, ապա հատուկ ուշադրություն դարձրեք այս կետերին: Սրանք անհատականության այն հատկանիշներն են, որոնք, ամենայն հավանականությամբ, նպաստում են Ձեր հուզական այրմանը:

101-120 միավոր՝ Դուք մասնագիտական այրման մեծ ռիսկի տակ եք: Դուք պետք է սովորեք սթրեսի կառավարման մեթոդներ և դրանք պարբերաբար կիրառեք: Ուսումնասիրեք և դիտեք մասնագիտական այրման վաղ նշանները: Խուսափեք բարձր ՄԱԳ աշխատանքային միջավայրում աշխատելուց:

121-140 միավոր՝ Դուք ունեք մասնագիտական այրման շատ բարձր ռիսկ: Դուք պետք է սովորեք սթրեսի կառավարման մեթոդներ և դրանք պարբերաբար կիրառեք: գուցե ցանկանաք դիմել մասնագետի օգնությանը՝ Ձեր ուզած ապրելակերպի փոփոխություններին հասնելու համար: Ուսումնասիրեք և դիտեք մասնագիտական այրման վաղ նշանները: Խուսափեք բարձր JBQ աշխատանքային միջավայրում աշխատելուց:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Հավելված 4. Մասնագիտական այրման գործակիցը (ՄԱԳ)

Յուրաքանչյուր հայրաբարության համար օգտագործելով յոթ բալանոց սանդղակ, փորձեք հնարավորինս անկեղծ գնահատել Ձեր աշխատանքի պայմանները յուրաքանչյուր կետի համար: Ավարտելուց հետո ավելացրեք Ձեր բոլոր միավորները՝ ընդհանուր ՄԱԳ միավոր ստանալու համար:

| Պնդումներ/Պատասխաններ | Շատ վտույ | Կ' լուրի սովորական վա | Լուրի խզիմ լի | Համապատասխան ճշմարիտ լուրի | Ինչ-որ չպիտի խզիմ ճշմարիտ | Կ' սովորական ճիշտ | Չար ճշմարիտ |
|--|-----------|-----------------------|---------------|----------------------------|---------------------------|-------------------|-------------|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Այս գրադարանը կարծ աշխատակազմ ունի | | | | | | | |
| Այստեղ գրադարանավարները սովորաբար չեն խորհրդակցում, երբ քաղաքականության փոփոխությունների անհրաժեշտություն կա | | | | | | | |
| Գրադարանի բյուջեն բավարար չէ մեր կարիքների համար | | | | | | | |
| Գրադարանային հավաքածուները լավ չեն զարգացել: | | | | | | | |
| Սա ստատիկ, ոչ թե դինամիկ գործողություն է: | | | | | | | |
| Այստեղ գրադարանավարները լավ աշխատակարձ չեն ստանում: | | | | | | | |
| Գրադարանավարներն այստեղ չունեն մասնավոր աշխատանքային տարածք: | | | | | | | |

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

| | | | | | | | |
|---|--|--|--|--|--|--|--|
| Այստեղ գրադարանավարները բավականին մրցունակ են միմյանց հետ: | | | | | | | |
| Գրադարանի ընդհանուր ֆիզիկական միջավայրը գրավիչ չէ: | | | | | | | |
| Գրադարանի ընդհանուր ֆիզիկական միջավայրը անհարմար է: | | | | | | | |
| Գրադարանավարների գրասենյակները գրավիչ չեն: | | | | | | | |
| Գրադարանավարների գրասենյակային կահույքը անհարմար է: | | | | | | | |
| Գրադարանում աղմուկի մակարդակը բարձր է: | | | | | | | |
| Այս գրադարանում լիազորությունների և պատասխանատվության գծերը հստակ չեն: | | | | | | | |
| Գրադարանավարներն այստեղ քիչ փոփոխականություն ունեն աշխատանքային առաջադրանքներում: | | | | | | | |
| Գրադարանավարներն այստեղ քիչ ինքնավարություն ունեն: | | | | | | | |
| Գրադարանային կանոնավոր շարունակական կրթության համար քիչ գումար կա, և կոնֆերանսների խնդրանքները հազվադեպ են աջակցվում: | | | | | | | |
| Սա շատ առումներով «ավանդական» գրադարան է: | | | | | | | |
| Այս գրադարանի երկարաժամկետ նպատակները հստակ չեն: | | | | | | | |
| Գրադարանավարների կարարողականի գնահատման չափանիշները հստակ նշված չեն: | | | | | | | |
| Այստեղ չկա պարզևսպորման/խրախուսման/արժանիքների համակարգ՝ լավ | | | | | | | |

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

| | | | | | | | |
|---|--|--|--|--|--|--|--|
| աշխատանքը շրջափելիորեն ճանաչելու համար: | | | | | | | |
| Հաղորդակցությունը անուղղակի է և հաճախ անցանկալի է ինչպես վերև, այնպես էլ ներքև: | | | | | | | |
| Գրադարանավարներն այսօրեղ ունեն համընկնող պարզականություններ: | | | | | | | |
| Այսօրեղ գրադարանավարները պետք է գործ ունենան շարք հակասական առաջնահերթությունների հետ: | | | | | | | |
| Այս գրադարանում գրադարանավարների համար կարիերայի սանդուղք չկա: | | | | | | | |
| Գրադարանավարները պետք է երեկոյան և հանգստյան օրերին աշխատեն այս գրադարանում: | | | | | | | |
| Այսօրեղ գրադարանավարները չեն շփվում ճաշի կամ ընդմիջման ժամանակ: | | | | | | | |
| Այսօրեղ գրադարանավարները հազվադեպ են զրույցներ ունենում, եթե նրանք չեն խոսում: | | | | | | | |
| Այսօրեղ գրադարանի աշխատակազմում մեծ շրջանառություն է եղել: | | | | | | | |
| Իմ և գրադարանի գլխավոր ադմինիստրատորի միջև կան երկու կամ ավելի բարձր մակարդակի պաշտոններ: | | | | | | | |

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Պատասխաններ.

30-60 միավոր՝ Աշխատանքի ընթացքում այրումը խթանելու կամ ուժեղացնելու ներուժի բացակայություն: Այն կարծես զարմանալի, բարենպաստ միջավայր է: Եթե ունեք բարձր կամ շատ բարձր ԱԱԳ, սա լավ տեղ է Ձեզ համար:

61-90 միավոր՝ Ունի միայն աննշան ներուժ՝ հուզական այրումը զարգացնելու կամ ուժեղացնելու համար: Նման միջավայրը կարող է խնդրահարույց լինել, եթե վարչական զգալի փոփոխություններ են տեղի ունենում, կամ եթե ունեք շատ բարձր ԱԱԳ:

91-150 միավոր՝ Հուզական այրումը հրահրելու կամ ուժեղացնելու նորմալ կարողությունը մեծապես կախված է հանգամանքներից: Դա կարող է կախված լինել նաև Ձեզանից և Ձեր անհատական հատկություններից: Նայեք այն կետերին, որոնք Դուք գնահատել եք 6 կամ 7 միավոր և որոշեք, թե որն եք համարում առավել սթրեսային: Եթե Դուք ի վիճակի եք օգտագործել սթրեսի կառավարման համապատասխան մեթոդներ, որոնք կօգնեն Ձեզ խուսափել մասնագիտական այրումից, ապա Ձեզ կարող է հարմարավետ լինել այստեղ աշխատելը: Եղեք օբյեկտիվ Ձեր գնահատման մեջ: Եթե ունեք բարձր կամ շատ բարձր ԱԱԳ, սկսեք զարգացնել աջակցություն և իրականացնել սթրեսի կառավարման տեխնիկա հենց հիմա: Իմացեք մասնագիտական այրման վաղ նշանների մասին և հետևեք դրանց:

151-180 միավոր՝ Աշխատանքի ընթացքում հուզական այրումը զարգացնելու կամ ուժեղացնելու բարձր ներուժ: Երկու անգամ մտածեք այստեղ մնալուց կամ այստեղ տեղափոխվելուց առաջ: Եթե Ձեր ԱԱԳ-ն բարձրահասակ է կամ շատ բարձրահասակ, մտածեք չորս կամ հինգ անգամ, նախքան այստեղ մնալը կամ այստեղ տեղափոխվելը: Սա կարևոր ժամանակ է արդյունավետ աջակցության համակարգ ստեղծելու և պահպանելու համար՝ ինչպես անձնական, այնպես էլ մասնագիտական: Դուք պետք է սովորեք սթրեսի կառավարման մեթոդներ և դրանք պարբերաբար կիրառեք: Իմացեք և հետևեք մասնագիտական այրման վաղ նշաններին:

**ԹՎԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

*2015-2025 թթ.**

ՀՏԴ: 02(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2026.1(7)-49

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետ

**Թանգարանագիտության, գրադարանագիտության և
մատենագիտության ամբիոն
Բանասիրական գիտությունների թեկնածու**

ORCID: [0000-0001-7087-4465](https://orcid.org/0000-0001-7087-4465)

ՆԵԿՏԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետ

**Թանգարանագիտության, գրադարանագիտության և
մատենագիտության ամբիոն**

ORCID: [0009-0006-9742-269X](https://orcid.org/0009-0006-9742-269X)

Սույն ուսումնասիրության նպատակն է բացահայտել Հայաստանի թվային գրադարանների զարգացման հիմնական միտումները 2015–2025 թթ., վերլուծել զարգացումների պատճառները, բացահայտել թվային գրադարանների ուժեղ կողմերն ու բացերը, ինչպես նաև ձևակերպել հեռանկարային ուղղություններ: Նշված նպատակի իրականացման համար ուսումնասիրել ենք թվային գրադարանների ձևավորման միջազգային

* Հոդվածը ներկայացվել է 11.05.2026, գրախոսվել է 08.06.2026, ընդունվել է տպագրության 25.06.2026:

The article was submitted on 11.05.2026, reviewed on 08.06.2026, accepted for publication on 25.06.2026.

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

փորձն ու չափորոշիչները, ներկայացրել ենք Հայաստանում թվային գրադարանի ձևավորման գործընթացը, թվային գրադարանի ձևավորման ուղղությամբ համեմատել ենք Հայաստանի ազգային գրադարանի, Հիմնարար գիտական գրադարանի և Երևանի պետական համալսարանի գրադարանի ռազմավարությունները, բացահայտել ենք ընդհանրություններն ու տարբերությունները:

The purpose of this study is to identify the main trends in the development of digital libraries in Armenia during 2015–2025, analyze the factors driving these changes, reveal the strengths and gaps of the sector, and outline future directions for development. To achieve this objective, we examined international experience and standards related to the establishment of digital libraries, presented the process of digital library development in Armenia, and compared the strategies of the National Library of Armenia, the Fundamental Scientific Library, and the Yerevan State University library in the field of digital library development, highlighting both their similarities and differences.

Բանալի բառեր¹ Թվային գրադարան, բաց մատչելիություն, մշակութային ժառանգություն, տեղեկատվական հասարակություն, նիշաճանաչում:

Ինչպես հղել¹ Հակոբյան, Ա., Ավետիսյան Ն. (2026), Թվային գրադարանների զարգացման միտումները Հայաստանում. 2015-2025 թթ., *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(7), 49-77.

[https://doi.org/10.54503/2953-8092.2026.1\(7\)-49](https://doi.org/10.54503/2953-8092.2026.1(7)-49)

How to cite (APA style): Hakobjan, A., Avetisyan, N. (2026), Trends and Perspectives in the Development of Digital Libraries in Armenia, 2015–2025, *Herald of the Armenian Library Association*, 1(7), 49-77.

[https://doi.org/10.54503/2953-8092.2026.1\(7\)-49](https://doi.org/10.54503/2953-8092.2026.1(7)-49)

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ներածություն

21-րդ դարի երկրորդ տասնամյակում թվային գրադարանները դարձել են գիտելիքի պահպանման և տարածման կարևոր ենթակառուցվածք: Հայաստանում թվայնացման գործընթացը ձեռք է բերել ոչ միայն տեխնոլոգիական, այլև ազգային-մշակութային նշանակություն: 2015–2025 թթ. բնորոշվում են ոլորտի ակտիվ զարգացմամբ՝ ԱԼԵՖ-ից Կոհա համակարգի անցմամբ, նիշաճանաչման տեխնոլոգիայի կիրառման ընդլայնմամբ, Մարաքեշի պայմանագրի վավերացմամբ և «Մեդիա արխիվ»-ի ձևավորմամբ: Այս փոփոխությունների ուսումնասիրությունը կարևոր է Հայաստանի թվային գրադարանների զարգացման միտումները, ձեռքբերումներն ու առկա խնդիրները գնահատելու համար: Հետազոտության հիմնական ուշադրությունը կենտրոնացված է Հայաստանի ազգային գրադարանի, Հիմնարար գիտական գրադարանի և ԵՂՀ Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանի փորձի համեմատական վերլուծության վրա, որոնք ներկայացնում են հայաստանյան թվային գրադարանային դաշտի հիմնական զարգացումները:

Թվային գրադարանների ձևավորման տեսական և գործնական հիմքերը

Թվային գրադարանների ձևավորումն անմիջականորեն կապված է տեղեկատվական հասարակության զարգացման և տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացի հետ: Ալվին Թոֆլերի «երեք ալիքների» տեսության համաձայն՝ մարդկությունը անցել է գյուղատնտեսական, արդյունաբերական և տեղեկատվական փուլերով, որոնցից վերջինը բնութագրվում է գիտելիքի և տեղեկատվության գերակայությամբ (TOFFLER 1980): Մանուել Կաստելսը տեղեկատվական հասարակությունը բնորոշում է որպես «ցանցային հասարակություն», որտեղ տեղեկատվական հոսքերը և թվային կապե-

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

րը դառնում են սոցիալական ու մշակութային հարաբերությունների հիմնական հիմքը (CASTELLS 1996):

20-րդ դարի վերջին տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն տվեց գրադարաններին անցնել ավանդական պահպանման մոդելից դեպի թվային միջավայր: Ըստ Գրադարանային ասոցիացիաների և հաստատությունների միջազգային դաշնության զեկոյցների ժամանակակից գրադարանների հիմնական գործառույթը ոչ միայն տեղեկատվության պահպանումն է, այլ նաև դրա արդյունավետ կազմակերպումն ու հասանելիության ապահովումը: Այս համատեքստում ձևավորվեց «թվային գրադարան» հասկացությունը, որը ներառում է թվային ռեսուրսների հավաքագրումը, կազմակերպումը, պահպանումը և տարածումը:


20-րդ դարի վերջին քառորդից սկսած տեղեկատվական նոր տեխնոլոգիաների և ավտոմատացման համակարգերի զարգացումը ընդլայնել է նաև գրքի պահպանության, պահպանման որակի բարձրացման և հաջորդ սերունդներին փոխանցման հնարավորությունները (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002): Համակարգչային տեխնոլոգիաների ներմուծումը գրադարաններ և արխիվներ արմատապես փոխել է նախկին պատկերացումները, իսկ տպագիր նյութերի կողքին էլեկտրոնային գրքերի առաջացումը հնարավորություն է տվել ընդգրկել ընթերցողների ավելի լայն շրջանակ: Ներկայում թվայնացումը լայն կիրառություն է գտել մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտներում (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2015):

Թվային գրադարանը տեղեկատվական համակարգ է, որն ապահովում է թվային ձևաչափով ներկայացված տեղեկատվական պաշարների հավաքագրումը, կազմակերպումը, պահպանումը և օգտվողներին հասանելի դարձնելը: Այն կարելի է բնութագրել որպես կազմակերպված թվային միջավայր, որը ներառում է տեքստային,

21-րԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

պատկերային, ձայնային և տեսանյութային ռեսուրսներ, ինչպես նաև դրանց որոնման, կառավարման և օգտագործման համար նախատեսված տեխնոլոգիական միջոցներ: Ք.Բորգմանի սահմանմամբ՝ թվային գրադարանը տեղեկատվական ենթակառուցվածք է, որը միավորում է տեխնոլոգիաները, բովանդակությունը և ծառայությունները՝ ապահովելով տեղեկատվության արդյունավետ կազմակերպում և տարածում (BORGMAN 2000): Գրադարանագիտական մոտեցումներում առանձնացվում են նաև ինստիտուցիոնալ, թեմատիկ և թվային գրադարաններ, բաց մատչելիության (Open Access) համակարգեր, որոնք ապահովում են գիտական տեղեկատվության ազատ և լայն հասանելիություն (LESK, 2005): Այս բազմազանությունը պայմանավորված է թվային գրադարանների գործառույթներով, կազմակերպման սկզբունքներով և կիրառման ոլորտներով:

Թվայնացման գործընթացը սկսվում է թղթային նյութերի տեսաձրմամբ, այնուհետև ստացված պատկերներն մշակվում են համապատասխան թվային ձևաչափերով, որից հետո դրանք հասանելի են դառնում համացանցում:



Նկ. 1. Թղթային նյութի թվային փոխակերպման շղթան

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Թվայնացված նյութերի արդյունավետ պահպանման և օգտագործման կազմակերպման համար ընդունված է կիրառել երկաստիճան մոտեցում՝ ստեղծելով երկու տարբեր տեսակի թվային պատճեններ՝ երկարաժամկետ պահպանության և առօրյա օգտագործման նպատակներով: Այս մոտեցումը լայնորեն կիրառվում է աշխարհում և համապատասխանում է թվային նյութի պահպանման փորձին:

Երկարաժամկետ պահպանության համար նախատեսված պատճենը, որը հաճախ անվանվում է «հիմնական օրինակ», պետք է ստեղծվի առավելագույն որակով: Այն սովորաբար ներկայացվում է չսեղմված TIFF ձևաչափով պատկերների տեսքով, քանի որ այդ ձևաչափը ապահովում է բարձր որակ և տվյալների ամբողջականություն՝ առանց տեղեկատվության կորստի: Հիմնական օրինակը պետք է պահպանվի առանց որևէ խմբագրման կամ նախնական մշակման, քանի որ այն հանդիսանում է սկզբնական աղբյուրի առավել ճշգրիտ թվային վերարտադրությունը: Նման մոտեցումը կարևոր է հատկապես մշակութային ժառանգության պահպանման դեպքում, որտեղ յուրաքանչյուր մանրուք կարող է ունենալ գիտական արժեք:

Առօրյա օգտագործման համար ստեղծվում է «սպասարկման օրինակ», որը ձևավորվում է հիմնական օրինակի հիման վրա: Այս պատճենները նախատեսված են լայն օգտագործման համար և պետք է ապահովեն արագ հասանելիություն: Այդ պատճառով դրանք սովորաբար ներկայացվում են սեղմված ձևաչափերով (օրինակ՝ Jpeg, Pdf), ինչը թույլ է տալիս նվազեցնել նիշքի ծավալը և արագացնել բեռնման գործընթացը համացանցում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է պահպանել բավարար որակ, որպեսզի օգտվողը կարողանա հարմարավետ կարդալ նյութը ինչպես էկրանին, այնպես էլ տպված տարբերակով:

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հատկապես կարևոր է, որ առցանց հասանելի նյութերը լինեն ոչ միայն փոքր ծավալով, այլև որոնելի: Այդ նպատակով կիրառվում են նիշաճանաչման՝ OCR (Optical Character Recognition) տեխնոլոգիաները, որոնք հնարավորություն են տալիս պատկերային նիշքերը վերածել որոնելի տեքստի: Այս մոտեցումը լայնորեն կիրառվում է միջազգային նախագծերում, ինչպիսիք են Google Books-ը և Europeana-ն:

Թվային գրադարաններում տվյալների անվտանգ պահպանման համար կիրառում են բազմակի պատճենների պահպանման, ամպային տեխնոլոգիաներ և տվյալների պարբերական ստուգման միջոցները: Այս ոլորտում լայն կիրառություն ունի LOCKSS (Lots of Copies Keep Stuff Safe) համակարգը, որը ստեղծվել է Ստենֆորդի համալսարանում՝ թվային նյութերի երկարաժամկետ և անվտանգ պահպանությունն ապահովելու նպատակով: Համակարգը հիմնված է բազմակի պատճենների պահպանման սկզբունքի վրա, ինչը թույլ է տալիս կանխել տվյալների կորուստը տեխնիկական խափանումների դեպքում:

Թվային գրադարանի կառուցվածքը ներառում է մի շարք փոխկապակցված բաղադրիչներ՝ տեխնիկական միջոցներ, ծրագրային ապահովում, կապի և հաղորդակցության համակարգեր, տվյալների շտեմարաններ և մարդկային ռեսուրսներ: Այս բաղադրիչների համատեղ գործունեությունն ապահովում է թվային տեղեկատվության հավաքագրումը, կազմակերպումը, պահպանումը և հասանելիությունը օգտվողներին:

Տեխնիկական ենթակառուցվածքը ներառում է համակարգիչներ, հիշողության սարքեր և տվյալների պահպանման միջոցներ, մինչդեռ ծրագրային ապահովումը հնարավորություն է տալիս կազմակերպել և կառավարել թվային ռեսուրսները: Օրինակ՝ Կոհա և

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ալեֆ ավտոմատացված գրադարանային համակարգերը կիրառվում են էլեկտրոնային շտեմարանների կառավարման, մատենագիտական գրառումների մշակման և տեղեկատվական ծառայությունների կազմակերպման նպատակով: Միաժամանակ, ցանցային և հաղորդակցական տեխնոլոգիաները ապահովում են տեղեկատվության հեռավար հասանելիությունը և օգտվողների սպասարկումը առցանց միջավայրում:

Թվայնացման գործընթացում կարևոր դեր ունեն մուտքային և ելքային սարքերը: Մուտքային սարքերը՝ ստեղնաշարը, սկաները և այլն, ապահովում են տեղեկատվության թվային ձևաչափի վերածումը, իսկ ելքային սարքերը՝ մոնիտորը և տպիչը, ներկայացնում են տեղեկատվությունը օգտվողին: Հատկապես կարևոր նշանակություն ունի OCR տեխնոլոգիան, քանի որ այն հնարավորություն է տալիս սկանավորված պատկերները վերածել որոնելի տեքստերի, ինչը զգալիորեն բարձրացնում է թվային ռեսուրսների հասանելիությունն ու օգտագործման արդյունավետությունը:

Ծրագրային ապահովումը հանդիսանում է համակարգի կառավարման հիմքը: Այն ներառում է համակարգային, կիրառական և սպասարկող ծրագրեր: Կոմերցիոն տեսակետից համակարգչային ծրագրերը բաժանվում են երկու խմբի՝ վճարովի և ազատ տրամադրվող: Վերջիններս կոչվում են Ազատ/բաց կոդերով ծրագրեր (ԲԿԾ): Նման ծրագրաշարի կողմ հասանելի է բոլորին: Բաց կոդով ծրագրակազմն անվճար է և ցանկացած օգտագործողի կողմից կարող է ընդլայնվել կամ փոփոխվել: Օգտագործողը արդեն ստեղծված կոդը կարող է օգտագործել սեփական կարիքների համար, կարող է ձևափոխել այն, ինչպես նաև սկզբնական կամ արդեն ձևափոխված կոդը փոխանցել ուրիշներին՝ հետագա օգտագործման համար:

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանային ոլորտի համար ստեղծվել են ԲԿԾ-ի մի շարք համակարգեր: Կիրառական ծրագրերից ամենահայտնիներն են ինտեգրացված գրադարանային համակարգերը (Koha, Evergreen, Openbiblio), հավաքածուների կառավարումը (Greenstone, ePrints, DSpace, OJS-PKP), վեբ հանգույցներ (Plone, Drupal), հեռաուսուցումը (Moodle, Ilias, Sakai), նիշերի օպտիկական ճանաչումը (Tesseract /Google/): Համակարգային ապահովման ծրագրերից աշխատանքային կայանների համար հայաստանյան գրադարաններում ամենատարածվածներն են «Windows», իսկ սպասարկող կայանների համար՝ «Linux» համակարգերը:

Թվային իրականության մուտքը հայաստանյան միջավայր

Անկախությունից հետո հայաստանյան գրադարանային համակարգը կանգնած էր լուրջ մարտահրավերների առաջ՝ ֆինանսական խնդիրներ, տեխնիկական սահմանափակումներ և տեղեկատվության սահմանափակ հասանելիություն (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2015): 1991 թ. Հայաստանում սկսվեց համակարգչային և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ակտիվ զարգացումը: Ազատ շուկայի ձևավորումը նպաստեց համացանցի տարածմանը և տվյալների հաղորդման ժամանակակից ցանցերի ներդրմանը: Հենց այս նոր պայմաններում ՀՀ էկոնոմիկայի նախարարության պատվերով նախագծվեց գրադարանային գործընթացների ավտոմատացման մի համակարգ, որը պայմանականորեն կոչվեց ԲԻԲԼԻՈ (BIBLIO): Դրա փորձական շահագործումը հանձն առան երկու հաստատություններ՝ Հանրապետական գիտաբժշկական գրադարանը և Հանրապետական գիտատեխնիկական գրադարանը (լուծարվել է 2024 թ.), որոնք ունեին թե՛ մասնագիտացած գրադարանավարներ, թե՛ համակարգչային տեխնոլոգիաների բնագավառի ինժեներական անձնակազմ, և թե՛ անհատական համակարգիչներ: Մոտ մեկ տարվա փորձարկումից հետո

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

պարզ դարձավ, որ ԲԻԲԼԻՈ համակարգը չի համապատասխանում միջազգային գրադարանագիտական ստանդարտներին: Դա պայմանավորված էր նրանով, որ հայկական գրադարանային համակարգը հիմնված էր խորհրդային մոտեցումների վրա, որտեղ գրադարանների ավտոմատացման և մեքենաընթեռնելի մատենագիտական ստանդարտների կիրառումը բավարար զարգացում չէր ստացել: Այսպիսով, ԲԻԲԼԻՈ համակարգի փորձը ցույց տվեց միջազգային ստանդարտների՝ հատկապես MARC և AACR համակարգերի կարևորությունը:

1995–1997 թթ. «Բաց հասարակություն ինստիտուտ», «Եվրասիա», «Կառնեգի» կրթական, բարեգործական, միջազգային հիմնադրամների աջակցությամբ Հայաստանում սկսվեց գրադարանների համակարգչայնացման, ինտերնետ հասանելիության և գրադարանավարների վերապատրաստման ակտիվ գործընթացը: Հայ մասնագետները հնարավորություն ստացան ուսանել և վերապատրաստվել ԱՄՆ-ի ու եվրոպական երկրների համալսարաններում և գրադարաններում: Վերադառնալուց հետո նրանք ձևավորեցին այն մասնագիտական միջավայրը, որը կարևոր դեր ունեցավ Հայաստանի թվային գրադարանների զարգացման գործում: Նրանց մասնագիտական աճին նպաստեցին նաև ԻՖԼԱ-ի, Ամերիկայի գրադարանային միության և միջազգային գիտաժողովների շրջանակում ձեռք բերված փորձն ու համագործակցությունները:

Հրատարակվեցին նաև մեթոդական ուղեցույցներ, որոնք նպաստեցին ոլորտի զարգացմանը: Այս փուլում գրադարանների ավտոմատացումը դուրս եկավ փորձնական մակարդակից, և ակնհայտ դարձավ միջազգային ստանդարտներին ու նոր մոտեցումներին համապատասխանելու անհրաժեշտությունը:

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայաստանի թվային գրադարանների ստեղծման պատմության հաջորդ կարևոր փուլը կապված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ: Աշխարհի տարբեր երկրներում գրադարանների ավտոմատացման փորձի ուսումնասիրությունը ցույց էր տալիս, որ համացանցի տարածմանը զուգընթաց զարգացող երկրներում գրադարանների ավտոմատացման ընդհանուր պատկերը նման է զարգացած երկրների փորձին, սակայն ֆինանսական միջոցների պակասը մշտական խոչընդոտ է մնում: Հենց այս պատճառով առանձնահատուկ կարևոր դարձավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ստեղծված և անվճար տարածվող «Միկրո CDS/ISIS» համակարգը, որը 1985 թվականից սկսած առաջարկվում էր «Տեղեկատվության հասանելիություն» ծրագրի շրջանակում: Գործնականում այս համակարգը գրադարանավարին տալիս էր մեծ ճկունություն: Նույնիսկ ծրագրավորման գիտելիքներ չունեցող մասնագետը կարող էր անհատական համակարգչի հետ երկխոսության միջոցով ստեղծել իրեն անհրաժեշտ շտեմարանի մոդելը՝ լինի դա մատենագիտական գրառումների շտեմարան, ընթերցողների հաշվառման շտեմարան, համալրման շտեմարան կամ արխիվային նյութերի հաշվառման շտեմարան: Համակարգը լայն տարածում գտավ հատկապես զարգացող երկրներում: Այն կիրառվում էր Աֆրիկայում, ինչպես նաև Վրաստանի ազգային պառլամենտական գրադարանում: Տեխնոլոգիական զարգացման հետ մեկտեղ համակարգը 7-րդ և 8-րդ դարերի CDS/ISIS տարբերակից վերածվեց 8-րդ դարի micro CDS/ISIS-ի, այնուհետև՝ 16-րդ դարի WinISIS-ի և ավելի ուշ՝ 32-րդ դարի J-ISIS-ի:

1996 թ. Հայաստանի գրադարանային հանրությանը ներկայացվեց «Միկրո CDS/ISIS» համակարգը, որն անվճար էր, բոլոր լուծումները հիմնված էին միջազգային չափորոշիչների վրա, նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ն ապահովում էր դրա ընթացիկ զարգացումը: Երրորդ՝ համակարգի:

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Թվային գրադարանների զարգացման գործընթացը պահանջում էր հաղթահարել տեղային և միջազգային մարտահրավերները: Տեղային մակարդակում կարևոր էին «Հայաստանի էլեկտրոնային գրադարան» միավորման անդամների սինքրոն համագործակցությունը, տեխնիկական և ծրագրային ռեսուրսների համատեղ օգտագործումը, համահավաք գրացուցակի զարգացումը և մասնագետների շարունակական վերապատրաստումը: Միաժամանակ անհրաժեշտ էր արդիականացնել կրթական ծրագրերը, մասնակցել օրենսդրական գործընթացներին և ներկայացնել ոլորտի խնդիրները պետական կառույցներին: Այս ամենը ցույց է տալիս, որ թվային գրադարանների ստեղծումը ներառում էր տեխնիկական, ինստիտուցիոնալ, կրթական և իրավական վերափոխումներ:

Միջազգային մակարդակում հիմնական մարտահրավերը Հայաստանի գրադարանների ինտեգրումն էր գլոբալ գրադարանային միջավայրին: Այս տեսանկյունից բացառիկ արդյունավետ դարձավ 2004 թ. Եվրամիության «Տեմպուս» ծրագրի շրջանակում մեկնարկած երկամյա նախագիծը՝ «Երևանի պետական համալսարանի գրադարանում թվային կրթական ծառայությունների և բովանդակության ձևավորման կենտրոնի ստեղծում» (UM_JEP-25008-2004) անվամբ: Ծրագիրն իրականացվեց ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանի, Մեծ Բրիտանիայի Միդլսեքս համալսարանի և Գերմանիայի Հանովերի համալսարանական գրադարանի համագործակցությամբ: Այն կարևոր էր ոչ միայն տեխնիկական աջակցությամբ, այլև բարձրագույն կրթության համակարգում գրադարանների դերի վերաիմաստավորմամբ՝ համապատասխանեցնելով դրանք Բոլոնիայի գործընթացի պահանջներին: Դրա արդյունքում ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանում ստեղծվեց բաշխված տեղեկատվական միջավայր, որը հնարավորու-

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

թյուն տվեց ապահովել որակյալ թվային կրթական ռեսուրսներ և նպաստեց գրադարանի վերափոխմանը՝ դարձնելով այն նաև կրթական ծառայությունների կենտրոն:

Հայաստանի թվային գրադարանների զարգացման կարևոր ուղղություններից մեկը «Բաց մատչելիություն» էր նախաձեռնված «Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարաններին» կոնսորցիումի կողմից, որը հիմնված էր 2002 թ. Բուդապեշտի հռչակագրի վրա և նպատակ ուներ ապահովել գիտական տեղեկատվության ազատ հասանելիությունը՝ հակակշռելով կոմերցիոն հրատարակչական համակարգերին: Հռչակագրի հիմքում դրված էր այն գաղափարը, որ գիտական տեղեկատվության տարածումը չպետք է խիստ սահմանափակվի, քանի որ բաց հասանելիությունը նպաստում է գիտելիքի արագ շրջանառությանը և գիտական առաջընթացին, ինչի համար այն լայն աջակցություն ստացավ գիտնականների շրջանում:

Հայաստանում բաց մատչելիության գաղափարը լայն աջակցություն ստացավ, որի առաջատարներից էր Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանը: 2008 թ. «Բաց հասարակության հիմնադրամ» կազմակերպության դրամաշնորհային աջակցությամբ Գիտությունների ազգային ակադեմիայում սկսվեց երկու գրախոսվող էլեկտրոնային գիտական հանդեսների՝ «Հայկական մաթեմատիկական հանդեսի» և «Ֆիզիկայի հայկական հանդեսի» հրատարակումը, ինչը խթանեց գրադարանային աշխատանքի և հրատարակչական մտածողության արդիականացումը (ԳՐԻԳՈՐՅԱՆ 2025): Ծրագրի արդյունքները ակնհայտ են. Գիտությունների ազգային ակադեմիայի ամսագրերը սկսեցին ունենալ նաև էլեկտրոնային տարբերակներ, որոնք կազմակերպվեցին և հասանելի դարձան համացանցում: Միաժամանակ, դրանց թվայնացված տարբերակները տեղադրվեցին բաց մատչելիության պահոցում, ինչի

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

արդյունքում բաց մատչելիության գաղափարը Հայաստանում դարձավ գործնական իրականություն՝ նպաստելով գիտական տեղեկատվության հասանելիության ընդլայնմանը և գիտական հաղորդակցության զարգացմանը:

Բաց մատչելիության գաղափարի զարգացմանը զուգահեռ կարևորվեց բաց/ազատ կողերով ծրագրային համակարգերի կիրառումը, որոնք հնարավորություն էին տալիս գրադարաններին ինքնուրույն կառուցել թվային գրադարաններ՝ նվազեցնելով կախվածությունը կոմերցիոն ծրագրերից (ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 2023: 9): 2006 թվականից սկսած մասնագիտական քննարկումները նպաստեցին ազատ ծրագրային միջավայրի տարածմանը, ինչի արդյունքում ստեղծվեց «Գրադարանը հիշող սարքում» ծրագրային փաթեթը: Հայաստանի ազգային գրադարանը և ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը հաջողությամբ կիրառեցին բաց կողով ծրագրեր՝ ձևավորելով նոր մասնագիտական մշակույթ, որտեղ գրադարանավարը հանդես էր գալիս նաև որպես տեխնոլոգիական միջավայրի ակտիվ կազմակերպիչ:

Թվային գրադարանների զարգացման արդյունքում Հայաստանում ձևավորվեց տեխնոլոգիական հմտություններով օժտված գրադարանավարների նոր սերունդ, որը կարող էր աշխատել թվային տեղեկատվական միջավայրում: Ժամանակակից թվային գրադարանների արդյունավետ գործունեությունը պայմանավորված է ոչ միայն տեխնիկական ենթակառուցվածքներով, այլ նաև մասնագիտական պատրաստվածությամբ և մարդկային ռեսուրսներով: Այս պայմաններում ձևավորվեց գրադարանավարի նոր կերպար՝ որպես տեղեկատվական գիտության և գիտելիքի կառավարման մասնագետ, ինչը կարևորեց շարունակական կրթության, վերապատրաս-

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

տումների և բուհական ծրագրերի արդիականացման անհրաժեշտությունը:

Թվային գրադարանի ձևավորման ամենաբարդ և երկարաժամկետ փուլը բովանդակային շտեմարանների ստեղծումն է, որը ներառում է մատենագիտական, լրիվ տեքստային և տեղեկատվական պաշարների համակարգված ձևավորում: Այս գործընթացը պահանջում է շարունակական, մանրակրկիտ աշխատանք և ռեսուրսների արդյունավետ կառավարում: Հատկապես կարևոր է այս խնդիրը հայատառ նյութերի դեպքում, քանի որ առկա է մեծածավալ տպագիր ժառանգություն, որը պետք է կազմակերպված կերպով թվայնացվի և ներառվի թվային միջավայրում:

Այս ուղղությամբ խնդիրները ներառում էին տպագիր նյութերի թվայնացումը, դրանց հասանելիության ապահովումը տարբեր սարքերում, ինչպես նաև էլեկտրոնային քարտարանների և մատենագիտական կապերի ձևավորումը: Նախատեսվում էր ստեղծել «Հայ գիրք» և «Հայ մամուլ» թվային շտեմարանները և զարգացնել հայագիտական գիտական պաշարների համակարգը: Նյութերի մեծ ծավալի պատճառով առաջարկվող լուծումները հիմնվում էին ամպային տեխնոլոգիաների վրա, ինչը հնարավորություն էր տալիս ապահովել համակարգի մասշտաբայնությունը, ճկունությունը և երկարաժամկետ կայուն զարգացումը:

Այս մոտեցումները նպատակ ունեին ապահովել Հայաստանի գրադարանային համակարգի կայուն տեղը համաշխարհային տեղեկատվական զարգացումներում՝ ընդգծելով, որ թվայնացումը կարևոր է ոչ միայն տեխնիկական առաջընթացի, այլ նաև ազգային մշակութային և գիտական անվտանգության պահպանման համար, քանի որ թվային միջավայրում ներկայությունն այսօր դարձել է պետու-

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

թյունների և մշակույթների տեսանելիության ու մրցունակության կարևոր պայման:

Ծրագրային տեխնոլոգիական փոփոխությունները հայաստանյան թվային գրադարանների զարգացման համապեքստում 2015-2025 թթ.

2015–2025 թթ. թվային գրադարանների զարգացումը Հայաստանում առավել ընդգծված կերպով դրսևորվել է խոշոր գիտակրթական և մշակութային հաստատությունների՝ մասնավորապես Հայաստանի ազգային գրադարանի, Հիմնարար գիտական գրադարանի և Երևանի պետական համալսարանի գրադարանի գործունեության շրջանակներում:

Տվյալ ժամանակաշրջանում առաջին և առանցքային միտումը գրադարանային գործընթացների համակողմանի ավտոմատացումն էր: Այս փուլում ակտիվացան տպագիր փաստաթղթերի թվայնացման, թվային շտեմարանների ձևավորման, ինչպես նաև էլեկտրոնային գրացուցակների արդիականացման աշխատանքները: Նշված հաստատությունները սկսեցին համակարգված կերպով զարգացնել թվային հավաքածուներ՝ նպատակ ունենալով ապահովել գիտամշակութային ժառանգության պահպանությունը, երկարաժամկետ հասանելիությունն ու արդյունավետ օգտագործումը:

Երկրորդ կարևոր ուղղությունը գրադարանային ավտոմատացման համակարգերի արդիականացումն ու նոր տեխնոլոգիական լուծումների ներդրումն էր: Եթե նախորդ փուլում լայնորեն կիրառվում էին CDS/ISIS և IRBIS համակարգերը, 2015 թվականից լայն տարածում ստացավ Կոհա (Koha) բաց կոդով ինտեգրված գրադարանային համակարգը: Այս անցումը նշանակալի էր, քանի որ Կոհա համակարգն ապահովում է MARC21 և Unicode միջազգային չափորոշիչների աջակցություն՝ նպաստելով հայկական գրադարանների ին-

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

տեգրմանը գլոբալ տեղեկատվական միջավայրին: Արդյունքում բարձրացավ գրացուցակային տվյալների որակը, ինչպես նաև ընդլայնվեցին տվյալների փոխանակման և համատեղ օգտագործման հնարավորությունները:

Երրորդ կարևոր միտումը բաց մատչելիության քաղաքականության աստիճանական զարգացումն էր: Հայաստանի գիտական և ակադեմիական հաստատությունները ակտիվորեն ներգրավվեցին բաց գիտության միջազգային շարժման մեջ՝ զարգացնելով ինստիտուցիոնալ թվային պահոցներ: Դրանցում տեղակայվում էին գիտական հոդվածներ, ատենախոսություններ և հետազոտական այլ նյութեր՝ ապահովելով գիտելիքի ազատ և լայն հասանելիություն: Այս գործընթացի վրա զգալի ազդեցություն են ունեցել միջազգային նախաձեռնությունները, մասնավորապես Budapest Open Access Initiative-ը, ինչպես նաև UNESCO-ի թվային ժառանգության պահպանման քաղաքական ուղղությունները:

Մեկ այլ կարևոր ուղղություն 2015–2025 թթ. հանդիսացել է ազգային մշակութային ժառանգության թվայնացման գործընթացը: Այս ընթացքում իրականացվել է մամուլի հավաքածուների, ձեռագրերի, հազվագյուտ գրքերի և արխիվային փաստաթղթերի համակարգված թվայնացում: Նշված գործընթացը ունեցել է ռազմավարական նշանակություն, քանի որ այն ոչ միայն ապահովում է մշակութային արժեքների երկարաժամկետ պահպանումը, այլև նպաստում դրանց հասանելիությանը միջազգային գիտական հանրության համար: Այս ուղղությամբ առանձնահատուկ դեր են կատարել ազգային գրադարանները և գիտական հաստատությունները՝ հանդես գալով որպես թվային ժառանգության պահպանման հիմնական ինստիտուցիոնալ կենտրոններ:

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայաստանում գրադարանների թույլ կողմը ֆինանսավորումն է, ավելի ճիշտ՝ դրա բացակայությունը: Գրադարանների մեծ մասը գործում են սահմանափակ, երբեմն խիստ սեղմված բյուջեով, ինչի պատճառով չեն կարող բավարար միջոցներ հատկացնել նոր նյութերի, տվյալների շտեմարանների, երբեմն անգամ թվային ենթակառուցվածքների համար: Ոչ բավարար ֆինանսավորման հետևանքով սահմանափակվում է նաև հմուտ աշխատակիցների ընդունումն ու պահպանումը, ինչն իր հերթին հանգեցնում է անհամաչափ ծանրաբեռնվածության և ծառայությունների խափանումների: Աշխատակիցների հմտությունների պակասը և փոփոխություններին դիմադրելու մտածելակերպը ևս գրադարանների թույլ կողմերից է: Ավագ սերնդի ներկայացուցիչները երբեմն դժվարությամբ են հարմարվում նոր տեխնոլոգիաներին, տվյալների վերլուծությանը կամ թվային բովանդակության արխիվացմանը: Փոփոխությունների և վե-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

րապատրաստումների հանդեպ նրանց ունեցած վախը հաճախ խոչընդոտում է իրենց իսկ զարգացմանը, ներքին ծառայությունների, գործառույթների և ընդհանուր համակարգի բարելավմանը (KAPATEL, VAJA 2025: 308):

✓ *Հնարավորություններ:* Դրական ազդեցությամբ արտաքին այն գործոնները, որոնք իրենցից ներկայացնում են զարգացման հնարավորություններ (օրինակ՝ հայտնվող շուկաներ, հաճախորդների փոփոխվող պահանջներ և այլն):

Գրադարանի հնարավորությունները բացահայտելու համար կարելի է պատասխանել հետևյալ հարցերին՝

➢ Ի՞նչ կաներ ձեր գրադարանը, եթե ունենար դա անելու հնարավորություն:

➢ Ի՞նչ է կատարվում հիմա աշխարհում, որից դուք կցանկանայիք օգուտ քաղել:

➢ Ինչպե՞ս կարող են ձեր ուժեղ կողմերը ձեր գրադարանի համար բացել հնարավորությունների դռներ:

Տեղեկատվական այս դարաշրջանում գրադարանները շարունակում են փոխազդել բազմաթիվ նոր հնարավորությունների հետ: Անշուշտ, ամենակարևոր փոփոխությունը թվային վերափոխումն է և էլեկտրոնային ռեսուրսների օգտագործման աճող միտումը: Գրադարանները կարող են ստեղծել էլեկտրոնային գրքեր, պահոցներ, բաց կրթական ռեսուրսներ և առցանց տվյալների շտեմարաններ՝ ընդայնելով հասանելիությունը և դուրս գալով թիրախային լսարանի աշխարհագրական սահմանափակումներից (COX 2023: 263):

✓ *Սպառնալիքներ:* Արտաքին գործոններ, որոնք կարող են բացասաբար ազդել ձեր գործունեության վրա (օրինակ՝ նոր կարգա-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

վորումներ, տնտեսական ճգնաժամ, հակառակորդի նորարարություններ և այլն):

Գրադարանին սպառնացող վտանգներին կարելի է ծանոթանալ՝ պատասխանելով հետևյալ հարցերին՝

➤ Ի՞նչ է կատարվում աշխարհում, որը կարող է բացասաբար ազդել ձեր գրադարանի վրա:

➤ Ի՞նչ գրադարանային ծառայություններ կան այլ գրադարաններում, որոնք շատ ավելի հեշտ են տրվում ընթերցողներին:

➤ Ո՞ր թույլ կողմերն են ձեզ խոցելի դարձնում ձեր ծառայությունների մրցակցության դաշտում:

Տեխնոլոգիաների արագ զարգացումը մեծացնում է հնացման վտանգն այն հաստատությունների համար, որոնք գործում են առանց ծրագրային կամ սարքային թարմացումների: Սա իսկապես սպառնալիք է փոքր բյուջե ունեցող գրադարանների համար, քանի որ արդյունքում դրանք վերածվում են պարզապես տվյալների պահպանման կենտրոնների:

Մեկ այլ լուրջ վտանգ է գրադարանների հաճախելիության նվազումը: Որոնողական և բաց հասանելիության համակարգերի առկայության շնորհիվ օգտատերերից շատերը նախընտրում են օգտվել թվային միջոցներից՝ հրաժարվելով ֆիզիկական գրադարաններ այցելելու մտքից: Արդյունքում, էապես կարող է թուլանալ գրադարանի նկատմամբ աջակցությունն ու ֆինանսավորումը՝ նվազեցնելով նրա սոցիալական արժեքն ու նշանակությունը (KAPATEL, VAJA 2025: 309):

Պետք է նշել, որ կարելի է սպառնալիքը վերածել հնարավորության կամ այն ինչ թույլ կողմ է այսօր, կարելի է որոշակի քայլերի արդյունքում վերածել ուժեղ կողմի:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այժմ հասկանանք՝ երբ է պետք օգտագործել SWOT վերլուծությունը:

SWOT վերլուծությունը կարելի է օգտագործել տարբեր իրավիճակներում՝ ամբողջական գնահատման համար:

- Նոր ռազմավարություն զարգացնելիս: Պետք է վստահ լինել, որ ձեր ռազմավարությունն օգտագործում է ձեր ներուժը/ձեր ուժեղ կողմերը՝ միաժամանակ անդրադառնալով թույլ կողմերին և սպառնալիքներին:

- Նոր արտադրանք կամ ծառայություն թողարկելիս: Պետք է հաշվի առնել ոլորտի պատրաստվածությունը և պոտենցիալ մարտահրավերները:

- Մրցակցային դաշտը գնահատելիս:

- Փոփոխություններին պատասխանելիս: Պետք է հարմարվել տնտեսական փոփոխություններին և տեխնոլոգիական առաջընթացներին:

SWOT վերլուծության իրականացման փուլերը

SWOT վերլուծությունը կարելի է իրականացնել փուլերով՝ կամայական հերթականությամբ: Կազմակերպության արտաքին և ներքին իրավիճակների վերլուծության արդյունքներով կազմվում է SWOT մատրիցա: Ստացված տվյալները հաջորդ փուլով զուգորդվում են, ինչը հնարավորություն է տալիս որոշելու կազմակերպության ունակությունը, օգտագործելու իր հնարավորությունները (ՍՈՒՎԱՐ-ՅԱՆ 2016: 105-109): Հետագա ռազմավարությունը ձևավորվում է SWOT վերլուծությունից ստացված տվյալների հիման վրա:

Քայլ առ քայլ դիտարկենք, թե ինչպես կարող ենք իրականացնել SWOT վերլուծությունը:

Քայլ 1. Հավաքել բազմապրոֆիլ թիմ:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ձեր գործունեության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար պետք է հավաքել մի թիմ, որտեղ ընդգրկված են ներկայացուցիչներ տարբեր բաժանմունքներից: Այս բազմազանությունն օգնում է, որ հաշվի առնվեն տարբեր տեսանկյուններ՝ ապահովելով ընկերության ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների ամբողջական պատկերացում:

Քայլ 2. Մտքերի փոթորիկ և գործոնների ցանկ

Նշեք ձեր թիմի կողմից նույնականացվող ներքին բոլոր թույլ և ուժեղ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները: Խրախուսեք բաց քննարկումը և մանրակրկիտ ուսումնասիրությունը, որպեսզի համապատասխան բոլոր գործոնները հաշվի առնվեն: Գրանցեք յուրաքանչյուր գործոնը:

Քայլ 3. Առաջնահերթություն տվեք հիմնական գործոններին:

Ցանկը լրացնելուց հետո դասակարգեք յուրաքանչյուր խմբի կրիտիկական գործոնները: Կենտրոնացեք նրանց վրա, որոնք ունեն ամենամեծ ազդեցությունը ձեր գործունեության վրա: Այս առաջնահերթությունն օգնում է բացահայտել այն կրիտիկական ոլորտները, որոնք պահանջում են անհապաղ ուշադրություն:

Քայլ 4. Վերլուծեք ներքին գործոնները:

Մանրամասն վերլուծեք ներքին գործոնները /ուժեղ և թույլ կողմերը/: Դիտարկեք այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են ռեսուրսները, կարողությունները, գործընթացները և կազմակերպչական մշակույթը: Սա կօգնի ձեզ օգտագործել ուժեղ կողմերը և արդյունավետորեն հաղթահարել թույլ կողմերը:

Քայլ 5. Վերլուծեք արտաքին գործոնները:

Իրականացրեք շուկայի հետազոտություն արտաքին գործոնների /հնարավորություններ և սպառնալիքներ/ ուսումնասիրության համար: Ուսումնասիրեք ոլորտի թրեյդները, փոփոխությունները և

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

տնտեսական պայմանները: Այս վերլուծություններն կօգնեն բացահայտել աճի պոտենցիալ հնարավորությունները և սպառնալիքները, որոնք կարող են ազդել ձեր գործունեության վրա:

Քայլ 6. Զարգացրեք ռազմավարական գործողություններ:

Օգտագործեք ձեր SWOT վերլուծության արդյունքները ռազմավարական գործողությունների զարգացման համար: Ստեղծեք ռազմավարություններ, որոնք կօգտագործեն ձեր ուժեղ կողմերը, կհաղթահարեն թույլ կողմերը, կօգտագործեն հնարավորությունները և կմեղմեն սպառնալիքները: Համոզվեք, որ յուրաքանչյուր ռազմավարություն կիրառելի է և համապատասխանում է ձեր նպատակներին: Ճիշտ ռազմավարություն ստեղծելու համար կազմակերպության արտաքին միջավայրի և դրա ներքին իրավիճակի վերլուծության արդյունքներով կազմվում է SWOT մատրիցա, որտեղ առաջին դաշտում ընդգրկվում են այն ռազմավարությունները, որոնք օգտագործում են կազմակերպության ուժեղ կողմերը՝ արտաքին միջավայրում ի հայտ եկած հնարավորություններն իրականացնելու համար: Երկրորդ դաշտում այն ռազմավարություններն են, որոնք օգտագործում են ուժեղ կողմերը՝ սպառնալիքները վերացնելու նպատակով: Երրորդ դաշտում ընդգրկվող ռազմավարությունները նվազեցնում են կազմակերպության թույլ կողմերը՝ օգտագործելով իրավիճակի հնարավորությունները: Չորրորդ դաշտում այն ռազմավարություններն են, որոնք նվազեցնում են կազմակերպության թույլ կողմերը և արտաքին միջավայրում ի հայտ եկած սպառնալիքները:

Քայլ 7. Կիրառեք և վերահսկեք փոփոխությունները:

Երբ ռազմավարությունները մշակվեն, արդյունավետորեն կիրառեք դրանք ընկերության ներսում: Հստակեցրեք պատասխանատվությունները և սահմանեք ժամանակացույց յուրաքանչյուր գործողության համար: Շարունակաբար վերահսկեք առաջընթացը և ան-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

հրաժեշտության դեպքում կատարեք ճշգրտումներ՝ ձեր ռազմավարական նպատակներին համապատասխան մնալու համար:

Քայլ 8. Կանոնավոր կերպով դիտարկեք և թարմացումներ արեք:

SWOT վերլուծությունը մեկանգամյա գործողություն չէ: Արտաքին և ներքին միջավայրում փոփոխություններն արտացոլելու համար պարբերաբար վերանայեք և թարմացրեք ձեր SWOT վերլուծությունը: Սա ապահովում է, որ ձեր ռազմավարությունները մնան համապատասխան և արդյունավետ ձեր նպատակներին հասնելու համար:

SWOT վերլուծություն իրականացնելիս տարածված սխալներ

SWOT վերլուծությունը կարող է անգնահատելի արժեք ունենալ միայն, եթե այն ճիշտ է արվում: Առանց ճիշտ մոտեցման, այն կարող է օգտակար լինելու փոխարեն առաջացնել շփոթություն: Դիտարկենք մի քանի տարածված սխալներ և դրանցից խուսափելու եղանակներ:

1. Ոչ հստակ շրջանակ կամ նպատակ

Առաջնահերթ ինչու՞ ես կատարում այս վերլուծությունը: Եթե չկա սահմանված նպատակ, ձեր թիմը կարող է կորցնել կենտրոնացումը կես ճանապարհին՝ վստահ չլինելով՝ ինչ են իրականում փորձում բացահայտել իրենք: Այդ ժամանակ գործընթացը սկսում է թվալ ցրված և անարդյունավետ:

2. Օբյեկտիվության բացակայություն

Կողմնակալություններ լինում են, լինի դա անձնական կարծիք, ներքին քաղաքականություն թե պարզապես խմբային մտածողություն: Բայց երբ դրանք գերակշռում են, ձեր վերլուծությունը կորցնում է իր արժեքը:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենակարևորը, հարցրեք՝ «Սա հիմնավորվա՞ծ է տվյալնե-
րով, թե՞ պարզապես ներքին զգացում է»:

Ձեր SWOT վերլուծությունն արժեքավոր է դառնում այն իրա-
կանության վրա հիմնելով, ոչ թե պարզապես տեսական մասով:

3. Արտաքին գործոնների անտեսում

Սա սովորաբար արտահայտվում է սպառնալիքի թերագնա-
հատմամբ: Թիմերը սովորաբար հակված են կենտրոնանալ ներքին
դինամիկայի վրա, ինչը միանգամայն հասկանալի է, քանի որ դա
ավելի վերահսկելի է թվում:

Ամբողջական պատկեր ստանալու համար, կախված ձեր
ռազմավարական ուղղությունից, ձեր SWOT վերլուծությունը զուգոր-
դեք այլ վերլուծությունների հետ (*PESTLE, Porter's 5 Forces, or the
TOWS matrix*):

5. Չափազանց լավատես և պաշտպանողական մտրեցում

Բնական է մտածել, որ դուք ամեն բան անում եք ճիշտ: Թի-
մերի մեծամասնությունն այդպես էլ մտածում է: Բայց եթե կենտրո-
նանաս միայն ուժեղ կողմերի վրա, ինքնագոհության ռիսկ կստեղ-
ծես: Մյուս կողմից, եթե շատ կենտրոնանաս թույլ կողմերի վրա,
կսպանես լավատեսությունը: Պետք է պահպանել հավասարակշռու-
թյուն:

6. Թույլ կողմերը սպառնալիքների հետ շփոթելը

Սա տարածված սխալ է: Ահա տարբերությունը՝

- Թուլությունները ներքին են: Դուք անմիջապես կարող եք քայլեր ձեռնարկել դրանց ուղղությամբ:

- Սպառնալիքներն արտաքին են: Դուք չեք կարող կառա-
վարել դրանք, բայց կարող եք քայլեր ձեռնարկել դրանց պատրաստ-
վելու համար:

7. Վերլուծությունը չափազանց բարդացնելը

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Չափազանց շատ ինֆորմացիան կարող է նույնքան խանգարել, որքան չափազանց քիչ ինֆորմացիան: Պետք է մնալ կենտրոնացած և առաջնահերթ դիտարկել այն գործոնները, որոնք իսկապես ազդում են արդյունքների վրա:

8. SWOT վերլուծությունը որպես անփոփոխ վերլուծություն դիտարկելը

Մեր գործունեության մեջ ոչինչ անփոփոխ չէ, և SWOT վերլուծությունը ևս չպետք է մնա անփոփոխ: Պետք է կանոնավոր կերպով վերանայել այն, նշել փոփոխությունները, հասկանալ՝ արդյո՞ք այդ փոփոխությունները պահանջում են նոր քայլեր, թե՛ ոչ: SWOT վերլուծությունն ամենաուժեղ գործիքն է, եթե այն զարգանում է կազմակերպության հետ միասին, ոչ թե մնում անփոփոխ:

SWOT վերլուծություն հպարհ գրադարանի օրինակով

Կատարվել է SWOT վերլուծություն Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանի օրինակով, որտեղ նշված են ՀՊՏՀ գրադարանի 4-ական ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և սպառնալիքներ, որոնցով այնուհետև կազմվել է SWOT մատրիցան:

Ուժեղ կողմեր

1. Տալիս է նեղ մասնագիտական գրքեր և այլ նյութեր
2. Թվային ռեսուրսներ
3. Տեխնիկական ռեսուրսներ
4. Ուսանողներին հասանելի է յուրաքանչյուր վայրից

Թույլ կողմեր

1. ՀՊՏՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների և տվյալագիտության ֆակուլտետը իր ընթերցասարահով հեռու է համալսարանի գլխավոր շենքից

2. Աշխատակիցների քանակը փոքր է

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3. Բացի մեր ուսանողներից և աշխատակիցներից ոչ ոք չի կարող օգտվել մեր գրադարանից

4. Կա ֆինանսավորման սահմանափակում

Հնարավորություններ

1. 24/7 հասանելիություն և հետադարձ կապ

2. Գրքերի թվային տեխնոլոգիաների պրակտիկ կիրառում

3. DSpace պահոցի առկայություն

4. Համագործակցություն միջազգային համալսարանների և գրադարանների հետ

Սպառնալիքներ

1. Մրցակցություն այլ նմանատիպ գրադարանների հետ

2. Օրենսդրական խոչընդոտներ /չունենք առանձին բյուջե, գնումների գործընթացը սահմանափակում է ինքնուրույն գործելու հնարավորությունը/

3. Աշխատանք վնասակար պայմաններում

4. Գրապահոցում ԱԻ պայմանների և օդափոխության խնդիր

Ունենալով ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները՝ կազմվում են զուգորդություններ՝ ուժեղ կողմերը հնարավորությունների հետ, ուժեղ կողմերը սպառնալիքների հետ, թույլ կողմերը հնարավորությունների հետ և թույլ կողմերը սպառնալիքների հետ: Ուժեղ կողմերը հնարավորությունների հետ զուգորդելը թույլ է տալիս օգտագործել ուժեղ կողմերը՝ հնարավորությունները լավագույնս իրագործելու համար, իսկ սպառնալիքների հետ դրանց զուգորդումը հնարավորություն է տալիս հնարավորինս նվազեցնել սպառնալիքների շեմը: Թույլ կողմերը հնարավորությունների հետ զուգորդելը թույլ է տալիս հնարավորությունների օգտագործմամբ շտկել և վերացնել թույլ կողմերը, իսկ սպառնալիքների հետ դրանց

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

զուգորդումը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել թույլ կողմերը և կանխել սպառնալիքները:

| | | |
|--|---|--|
| <p>Հնարավորություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. 24/7 հասանելիություն և հետադարձ կապ 2. Թվային տեխնոլոգիաների պրակտիկ կիրառում 3. dspace առկայություն 4. Համագործակցություն միջազգային համալսարանների և գրադարանների հետ | <p>Սպառնալիքներ</p> <ol style="list-style-type: none"> 1. Մրցակցություն այլ նմանատիպ գրադարանների հետ 2. Օրենսդրական խոչընդոտներ /չունենք առանձին բյուջե, գնումների գործընթացը/ 3. Վտանգավոր պայմաններում աշխատանք 4. Ար պայմանների և օդափոխության խնդիր | |
| <p>Ուժեղ կողմեր</p> <ol style="list-style-type: none"> 1. Տալիս է նեղ մասնագիտական գրքեր և այլ նյութեր 2. Թվային ռեսուրսներ 3. Տեխնիկական ռեսուրսներ 4. Ուսանողներին հասանելի է յուրաքանչյուր վայրից | <p>Հնարավորություններ- ուժեղ կողմեր</p> <p style="text-align: center;">I դաշտ</p> | <p>Սպառնալիքներ- ուժեղ կողմեր</p> <p style="text-align: center;">II դաշտ</p> |

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| Թույլ կողմեր | Հնարավորություններ- թույլ կողմեր | Սպառնալիքներ-թույլ կողմեր |
|---|-------------------------------------|------------------------------|
| 1. Զեյթունի մասնաճյուղը հեռու է 2. Աշխատակիցների քանակը փոքր է 3. Բացի մեր ուսանողներից և աշխատակիցներից ոչ ոք չի կարող օգտվել մեր գրադարանից 4. Ֆինանսավորման սահմանափակում | III դաշտ | IV դաշտ |

Եզրակացություն

SWOT վերլուծությունը հանդիսանում է ռազմավարական կառավարման կարևոր և արդյունավետ գործիք, որը հնարավորություն է տալիս կազմակերպություններին համակողմանիորեն գնահատել իրենց ներքին և արտաքին միջավայրը: Այն օգնում է բացահայտել կազմակերպության ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև գնահատել արտաքին միջավայրում առկա հնարավորություններն ու սպառնալիքները՝ նպաստելով առավել հիմնավորված և արդյունավետ ռազմավարական որոշումների կայացմանը:

Հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ SWOT վերլուծությունը կիրառելի է ոչ միայն բիզնես ոլորտում, այլ նաև կրթական և գրադարանային համակարգերում: ՀՊՏՀ գրադարանի SWOT վերլուծությունը ցույց տվեց, որ գրադարանը ունի մի շարք կարևոր առավելություններ՝ մասնագիտական ռեսուրսների, թվային տեխնոլոգիաների և հասանելիության տեսանկյունից, սակայն միաժամանակ առկա են նաև որոշ սահմանափակումներ՝ կապված ֆինանսա-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

վորման, մարդկային ռեսուրսների և կազմակերպչական խնդիրների հետ:

Արտաքին միջավայրում առկա հնարավորությունները՝ թվայնացումը, միջազգային համագործակցությունները և տեխնոլոգիական զարգացումները, կարող են նպաստել գրադարանի հետագա զարգացմանը, սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև առկա սպառնալիքներին, մասնավորապես մրցակցությանը, օրենսդրական սահմանափակումներին և տեխնիկական խնդիրներին:

Այսպիսով, SWOT վերլուծության կիրառումը գրադարանային համակարգերի համար համապարփակ մեթոդ է դրանց գնահատման նպատակով: Եթե գրադարանները ռազմավարորեն օգտագործեն իրենց ուժեղ կողմերը, ուշադրություն դարձնեն թուլություններին և նվազեցնեն դրանց ազդեցությունը, խուսափեն հնարավոր վտանգներից և ակտիվորեն օգտվեն առկա հնարավորություններից, ապա կկարողանան ավելի ճշգրիտ պլանավորել և զարգացնել իրենց գործունեությունը ժամանակակից տեղեկատվական շուկայում:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ՍՈՒՎԱՐՅԱՆ 2016 – Սուվարյան, Յ. (խմբ.) (2016), Մենեջմենթ: Դասագիրք բուհերի տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար, Երեւան, Տնտեսագետ, 672 [Suvaryan, Yu. (ed.) (2016), Management: Dasagirq buheri tntesagitakan masnagitutyunneri usanoghneri hamar, Yerevan, Tntesaget, 672];

COX 2023 – Cox, J. (2023), The Position and Prospects of Academic Libraries: Weaknesses, Threats and Proposed Strategic Directions, *New Review of Academic Librarianship*, 3(29), 263-287;

GÜREL, TAT 2017 – Gürel, E., Tat, M. (2017), SWOT Analysis: A Theoretical Review, *Journal of International Social Research*, 10(51), 994-1006. Doi: 10.17719/jisr.2017.1832;

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

KAPATEL, VAJA 2025 – Kapatel, P., Vaja, Dr. (2025). Empowering Libraries through SWOT Analysis: A Pathway to Growth and Innovation. *Multidisciplinary Cosmopolitan Journal of Research*, 3(6), 305-315;

KUMAR, PRAVEENA 2023 – Sharath Kumar, S.R., Praveena, K.B. (2023), SWOT analysis, *International Journal of Advanced Research*, 11(09), 744-748. Doi: 10.21474/IJAR01/17584.

Էլեկտրոնային աղբյուրներ

Are You Doing the SWOT Analysis Backwards? –
<https://hbr.org/2021/02/are-you-doing-the-swot-analysis-backwards> (18.06.2026)

Library SWOT Analysis Overview –
<https://www.scribd.com/document/7692666/Swot> (18.06.2026)

How to Perform a SWOT Analysis for your Enterprise
<https://quantive.com/resources/articles/swot-analysis> (18.06.2026)

Marketing Theories – Swot Analysis –
<https://www.techtarget.com/searchcio/definition/SWOT-analysis-strengths-weaknesses-opportunities-and-threats-analysis> (18.06.2026)

SWOT Analysis – <https://www.eda.gov/resources/comprehensive-economic-development-strategy/content/swot-analysis> (18.06.2026)

THE KEY OF STRATEGIC THINKING SWOT ANALYSIS

VARSENİK SARGSYAN
Armenian State University of Economics

*Բանալի բաներ*¹ Digital Repository, Academic Library, Brusov State University, Open Access, Scholarly Visibility, Metadata.

SWOT analysis is an important and effective strategic management tool that enables organizations to comprehensively assess their internal and external environment. It helps identify the organization's strengths and weaknesses, as well as evaluate the opportunities and threats present in the external environment, thereby contributing to more effective strategic decision-making.

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

The research revealed that SWOT analysis is applicable not only in the business sector but also in educational and library systems. The SWOT analysis of the library of the Armenian State University of Economics demonstrated that the library possesses a number of significant advantages in terms of professional resources, digital technologies and accessibility. However, there are also certain limitations related to funding, human resources, and organizational issues.

The opportunities present in the external environment (digitalization, international cooperation, technological advancements) may contribute to the further development of the library. Nevertheless, attention should also be paid to the existing threats, particularly competition, legislative restrictions and technical problems.

Thus, the application of SWOT analysis serves as a comprehensive method of evaluating library systems. Once libraries strategically use their strengths, address and minimize the impact of their weaknesses, avoid potential threats and actively take advantage of existing opportunities, they will be able to plan and develop their activities more effectively in the modern information market.

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ*

ՀՏԴ: 02(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2026.1(7)-110

ՌՈՒԶԱՆՆԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կոտայքի մարզային գրադարան

ORCID: 0009-0007-6939-5265

Սույն հոդվածում ներկայացվում են ՀՀ Կոտայքի մարզում գործող գրադարանները՝ նպատակ ունենալով գնահատել վերլուծական պատկերը: ներկա վիճակը, զարգացման միտումները, նյութապրեհնիկական ապահովվածությունը, գրքային ֆոնդի որակական և քանակական բնութագրերը, ընթերցողների ներգրավվածության մակարդակը, ծառայությունների մատուցման մատչելիությունը, էլեկտրոնային սպասարկման և թվայնացման գործընթացները: Վերլուծության արդյունքում բացահայտվել են ոլորտի հիմնական խնդիրներն ու մարտահրավերները, ներառյալ՝ տեխնիկական ռեսուրսների սահմանափակությունը, թվային ծառայությունների ոչ լիարժեք զարգացվածությունը և որոշ համայնքներում գրադարանների հասանելիության անհավասարությունը: Միևնույն ժամանակ արձանագրվել են դրական միտումներ՝ կապված գրադարանների՝ որպես հանրային և մշակութային կենտրոնների վերափմաստարկման, համայնքային կյանքի ակտիվացման և նոր ծառայությունների ներդրման հետ:

Հոդվածը նաև անդրադառնում է այն հարցին, թե որքանով են ժամանակակից գրադարանները նպաստում կրթական, մշակութային և սոցիալական փոխգործակցությանը: Արդյունքները կարող են ծառայել ոլորտի հետագա զարգացման ռազմավարությունների մշակման և գրադարանային համակարգի արդյունավետության բարձրացման համար:

* Հոդվածը ներկայացվել է 29.04.2026, գրախոսվել է 30.05.2026, ընդունվել է տպագրության 15.06.2026:

The article was submitted on 06.11.2025, reviewed on 30.05.2026, accepted for publication on 15.06.2026.

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

This article presents the libraries operating in the Kotayk region of the Republic of Armenia, with the aim of assessing their current condition, development trends, material and technical resources, and the qualitative and quantitative characteristics of their collections. The study also examines the level of reader engagement, the accessibility of library services, and the processes of digitalization and electronic service provision. The analysis identifies the major challenges facing the sector, including limited technical resources, the incomplete development of digital services, and unequal access to libraries in certain communities. At the same time, positive trends have been observed, particularly in the reconceptualization of libraries as public and cultural centers, the activation of community life, and the introduction of new services.

The article further addresses the extent to which contemporary libraries contribute to educational, cultural, and social interaction. The findings may serve as a basis for developing future strategies for the advancement of the library sector and enhancing the effectiveness of the library system.

Բանալի բառեր¹ Մարզային և համայնքային գրադարաններ, Կոտայքի մարզ մշակութային քաղաքականություն, թվայնացում, տեղեկատվական հասանելիություն:

Ինչպես հղել¹ Ներսիսյան, Ռ. (2026), Կոտայքի մարզի գրադարանները, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(7), 110-123. [https://doi.org/10.54503/2953-8092.2026.1\(7\)-110](https://doi.org/10.54503/2953-8092.2026.1(7)-110)

How to cite (APA style): Nersisyan, R. (2026), Libraries of Kotayk Region, *Herald of the Armenian Library Association*, 1(7), 110-123. [https://doi.org/10.54503/2953-8092.2026.1\(7\)-110](https://doi.org/10.54503/2953-8092.2026.1(7)-110)

Ներածություն

Գրադարանները դարեր ի վեր մշակույթի զարգացման վկաներն են եղել և մարդուն իմաստության հետ հաղորդակցվելու հնարավորություն են տվել: Այսօր դրանք հանդիսանում են տեղեկատվու-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

թյուն կուտակող և տարածող կառույցներ, որոնք կարևոր դեր ունեն հասարակության կրթական, մշակութային զարգացման գործում, ինչպես նաև ծառայում են որպես հանրային տարածքներ՝ ապահովելով ընթերցողների աճ, ներգրավվածություն և մոտիվացիա: Գրադարանները տեղեկատվական հասարակության կարևորագույն ինստիտուտներն են, գիտելիքի հասանելիության, կրթական գործընթացների աջակիցներ:

Գիտատեխնիկական առաջընթացի, բնակչության կրթական մակարդակի բարձրացման, տեղեկատվական հոսքերի կտրուկ աճի ներկա պայմաններում գնալով մեծանում է տեղեկատվական ծառայությունների մատուցումը, հավաքածուների թվայնացումը:

ՀՀ մարզերում գործող գրադարանները կարևոր դեր են խաղում մարզաբնակ բնակչության համար, որոնք իրականացնում և ապահովում են մարզի բնակչության գրադարանային-տեղեկատվական մատչելիությունը, տեղեկատվական ռեսուրսների հասանելիությունն ու բազմազանությունը:

Կոտայքի մարզը վարչական միավոր է Հայաստանի կենտրոնում: Այն զբաղեցնում է 2089 կմ² տարածք, բնակչությունը կազմում է 294.900 մարդ: Ներառում է 42 համայնքներ, այդ թվում՝ 7 քաղաքային և 35 գյուղական: Կոտայքի մարզը, ունենալով ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական համայնքներ, ներկայացնում է գրադարանային համակարգի բազմաշերտ պատկեր, որի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու ոլորտի զարգացման միտումները և խնդիրները:


2024 թ. Կոտայքի մարզում գործել է 54 գրադարան, որոնցից 13-ը՝ քաղաքային, 40-ը՝ գյուղական, 1-ը՝ Կոտայքի մարզային¹:

¹ Տվյալները վերցված են ՀՀ վիճակագրական կոմիտեի հաշվետվություններից՝ <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/> (15.06.2026)

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Պետք է նշել, որ մարզում ընթերցողների ընդհանուր թիվը կազմել է 29.144 մարդ, որից 18.056-ը սպասարկվել են քաղաքներում:

Գրաֆիկով ներկայացնում ենք ընթերցողների թիվը՝ ըստ տարիքային խմբերի:



Գրաֆիկից ելնելով՝ կարելի է նշել, որ մարզում ավելի շատ են կարդում մինչև 25 տարեկանները: 56-ից բարձր ընթերցողների թիվը շատ քիչ տոկոս է կազմում, ինչը կարող է կապված լինել զբաղվածության հետ:

Պարմական ակնարկ

Կոտայքի մարզի տարածքում գրադարանների պատմությունը սկսվում է դեռևս վաղ շրջանից: 8-րդ դարում Գրիգոր Այրիվանեցին Աթենքի և Արևմուտքի շատ դպրոցներ ու գրադարաններ այցելելուց հետո վերադարձել է Այրիվանք և հիմնել դպրոց: Իսկ Գոզիկ վարդապետի ջանքերով ծաղկում է ապրել գրչատունը, որը մեծ ու ծավալուն, բազմաբովանդակ գրապահոց էր: Այստեղից մեզ են հասել հայերեն շատ ձեռագրեր, որոնց մի մասը պահվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Գրադարաններն ուշադրության կենտրոնում են հայտնվել հատկապես 20-րդ դարի սկզբին: Դեռևս 1922 թ. մարզի տարածքում գործել են խրճիթ-ընթերցարաններ, օդա-ընթերցարաններ, որոնց հիման վրա էլ հետագայում ստեղծվել են գրադարանները:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Ըստ արխիվային տեղեկությունների՝ Ախտայի² տարածքում գործող խրճիթ-ընթերցարանները գործել են առավոտյան 8-ից երեկոյան 6-ը, որպեսզի հնարավոր լինեին գյուղացիների այցելությունները: Այստեղ կազմակերպվել են ընթերցումներ բնակչության համար: Կարողացել են գյուղատնտեսության տարբեր ոլորտների վերաբերյալ գրքույկներ, իրազեկել են գյուղացիությանը, որպեսզի նրանք հասկանան խրճիթ-ընթերցարանների կարևորությունն ու դերը:

1923 թ. Ախտայում բացվել է կենտրոնական գրադարան, որը շրջակա գյուղերին ապահովել է ամսագրերով և գրքերով:

1926-1927 թթ. շրջանում առաջին անգամ կառուցվել է 150-160-տեղանոց ակումբի շենքը, և ամբողջ գրադարանը՝ շուրջ 5000 կտոր գրականությամբ, տեղափոխվել է նոր շենք: Աճել է ընթերցողների քանակը:

Կոլեկտիվացման տարիներին մարզի տարածաշրջանում տարբեր շինություններին կից բացվել են գրադարաններ: Դրանցից կարելի է առանձնացնել Զովունիի մշակութային կենտրոնի գրադարանը, որը գործում է անցած դարի 40-ական թվականներից: Քառասունից ավելի տարիներ գրադարանի վարիչ է եղել գյուղացիների կողմից հարգված ՀԽՍՀ վաստակավոր գրադարանավար, երջանկահիշատակ Արտաշ Բարսեղյանը: 1965 թ. գյուղի՝ ներկայիս տարածքում տեղափոխվելու պահին գրադարանն ունեցել է 5000-5500 կտոր գրականություն: Այժմ ունի մոտ 15.500 կտոր գրականություն, իսկ տարվա ընթացքում գրադարանից օգտվել է 800-900 ընթերցող: Կառույցն ապահովված է տեխնիկական միջոցներով, համացանցով և այլ կապերով:

1965 թվականից առ այսօր գործում է նաև Պռոշյան գյուղի գրադարանը, որը վերանորոգված է, լուսավոր, հարմարավետ, ունի

² Ախտա – ներկայում՝ Հրազդան քաղաքը:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ջեռուցման համակարգ: Գրականությունը բավարարում է ընթերցողների պահանջները: Գրադարանը անվանվել է արցախյան հերոս Կարոտ Մկրտչյանի անունով:

1966-1967 թթ. Տարածաշրջանում գործել են Հրազդանի մանկական գրադարանը: Գրադարաններ են գործել նաև Կոտայք գյուղում և Արզականում: Բացի գործող գրադարաններից, սպասարկման ոլորտը ակտիվացնելու նպատակով որոշվել է ստեղծել տացքակետեր: Կազմակերպվել են համապատասխան թեմատիկ գրականությամբ փոքր գրադարաններ կարի արտադրամասերում, ֆաբրիկաներում:

1970-1980-ական թվականներին գրադարան է գործել նաև Ծաղկաձորում, որը սպասարկել է ոչ միայն տեղի բնակիչներին, այլև հովելիներին: Այս թվականներից ստեղծվել է գրադարանների կենտրոնացված համակարգը (ԳԿՀ): Եթե մինչ այս ուշադրություն չէին դարձնում գրադարաններում աշխատողների կրթությանը, ապա ԳԿՀ-ի ստեղծվելուց հետո դրան մեծ ուշադրություն է դարձվել: ԳԿՀ-ի աշխատանքները մշտապես վերահսկվել են, կազմակերպվել են տարբեր միջոցառումներ թե՛ կենտրոնում, թե՛ մասնաճյուղերում (27 մասնաճյուղ): Հետաքրքիր են եղել թեմատիկ բնույթ կրող միջոցառումներն ու ցուցահանդեսները՝ «Հովվի տոն», «Բերքի տոն», «Մեղվապահ» և այլ միջոցառումներ, որոնց մասին գրել է նաև «Հրազդան» թերթը:

1980 թ. գրադարանների կենտրոնացված համակարգ ստեղծելու կապակցությամբ շրջանային և քաղաքային գրադարանները Աբովյանի տարածաշրջանում միավորվել են՝ ստեղծելով տարբեր բաժիններ, ունենալով ակտիվ գործունեություն:

1997 թ. փետրվարի 1-ից Աբովյանի գրադարանների կենտրոնացված համակարգը լուծարվել է՝ անվանվելով Աբովյանի համայն-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

քային գրադարան: Գրադարանների կենտրոնացված համակարգի գյուղական 32 մասնաճյուղեր իրենց գույքով և գրքային ֆոնդով հանձնվել են տվյալ տարածքների համայնքների տնօրինությանը:

2023 թ. հունվարի 10-ից կազմակերպությունը վերանվանվել է Արևյան համայնքի «Արևյանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն: Արևյան համայնքի խոշորացման արդյունքում համայնքային գրադարանին է փոխանցել Կամարիս, Բալահովիտ, Մայակովսկի և Առինջ բնակավայրերի գրադարանային գործունեության կառավարումը:

Գրադարանի շենքն այսօր վերանորոգված է, ունի ընթերցասրահ և տարբեր բաժիններ:

Կամարիսի գրադարանն այսօր ունի 159 ընթերցող, Բալահովիտի գրադարանը՝ 239, Առինջի գրադարանը՝ 145: Առինջի գրադարանում տարեկան տացքը կազմել է 6400, այսինքն՝ 1 ընթերցողը կարդացել է միջինում 44 գիրք:

Սույն հոդվածի սահմաններում չենք կարող մանրամասն անդրադառնալ համայնքային բոլոր գրադարաններին, ուստի առավել մանրամասն ներկայացնենք Կոտայքի մարզային գրադարանի պատմությունը:

Գրադարանը ստեղծվել է 1930-ական թթ. ընդամենը մի քանի հարյուր կտոր գրականության հիման վրա: 1965 թ. այն դարձել է քաղաքային և ընդլայնել գործունեության սահմանները: 1979 թ., երբ կազմավորվել է Հրազդանի շրջանի ԳԿՀ-ն, քաղաքային գրադարանը դարձել է ԳԿՀ-ի կենտրոնական գրադարան: 1997 թ. «ՀՀ տեղական ինքնակառավարման մասին» օրենքով կենտրոնական գրադարանը վերակազմավորվել է Կոտայքի մարզային գրադարանի: Այն տեղակայված է բնակելի շենքի առաջին հարկում, զբաղեցնում է մոտ 592 քմ տարածք: «Կոտայքի մարզային գրադարան» պետական

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է մշակութային, տեղեկատվական, կրթական գործունեություն իրականացնելու նպատակով: Կոտայքի մարզային գրադարանը, որը մարզի ամենամեծ գրադարանն է, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպություն է: Գրքային հավաքածուն առ 22.04.2026 թ. կազմում է 84659 միավոր:

Գրադարանի հիմնական ֆոնդը ներառում է հայերեն և օտարալեզու գեղարվեստական գրքեր, ուսումնական, մեթոդական ձեռնարկներ, ամսագրեր, բառարաններ, ատլասներ և այլն:

Գրադարանն ունի 4 բաժին՝

1. սպասարկման և միջոցառումների կազմակերպման բաժին
2. մանկական բաժին
3. գրադարանային հավաքածուի պահպանման, համալրման, մշակման, մատենագիտական աշխատանքների բաժին
4. Մեդիագրագիտության բաժին:

Առանձնագատուկ ուշադրության է արժանի Մեդիագրագիտության բաժինը, որը ստեղծվել է գրադարանի և ընթերցողների մեդիագրագիտության մակարդակի բարձրացման նպատակով: Այն գործում է նախօրոք կազմված աշխատանքային պլանով: Ձեռք են բերվել մեդիային և տեխնոլոգիական կրթությանը վերաբերող համապատասխան նյութեր՝ խաղեր, ձեռնարկներ, պաստառներ: Կազմակերպվել են կլոր սեղաններ, մեդիահիփենային նվիրված վերապատրաստման դասընթացներ: Կազմակերպվել է նաև մեդիագրագիտության շաբաթ, որի շրջանակներում սեմինարներ են անցկացվել տարեցների, համայնքային գրադարանների աշխատակիցների

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

համար, իսկ հանրակրթական դպրոցների սովորողների հետ իրականացվել են մեդիախաղեր:

Մարզային գրադարանում կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ՝ գրքերի ցուցահանդեսներ, գրական երեկոներ, նոր գրքերի շնորհանդեսներ, հանդիպումներ անվանի մարդկանց հետ, քննարկումներ, տեսալսողական նյութերի դիտումներ, տարաբնույթ դասընթացներ և այլն: Արդեն ավանդույթ են դարձել «Ընթերցում են հայտնիները» և «Մերոնք» միջոցառումները:

«Ընթերցում են հայտնիները» խորագրի ներքո հանրապետության նշանավոր մարդիկ հեքիաթներ կամ փոքրիկ պատմվածքներ են կարդում մանուկ ընթերցողների համար, զրուցում նրանց հետ:

«Մերոնք» շարքի միջոցառումներում ներկայացվում են Կոտայքի մարզի մշակութային կյանքում ավանդ ունեցող մարդիկ՝ գրողներ, նկարիչներ, դերասաններ և ուրիշներ:

2016 թվականից գրադարանում գործում է տիկնիկային թատրոն, որի դերասանները գրադարանավարներն են:

2025 թ. ամռանից գրադարանում գործում է ամառային դպրոց: Իրականացվում են դասապատրաստումներ, մի շարք կրթական ծրագրեր: Գործում են անգլերենի, կորեերենի, ընթերցանության և ինտելեկտուալ խաղերի խմբակները:

Գրադարանը մասնակցում է հայաստանյան գրադարանների էլեկտրոնային համահավաք գրացուցակի ստեղծման աշխատանքներին, ինչպես նաև համագործակցելով Ազգային գրադարանի հետ՝ զբաղվում է պարբերական մամուլի թվայնացված էջերի մշակմամբ:

Գրադարանը ապահովում է ընթերցողական բոլոր խմբերի տեղեկատու-մատենագիտական սպասարկումը, վարում է թեմատիկ և հանձնարարական քարտարաններ, կազմում է թեմատիկ հիշար-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ժան տարեթվերի հանձնարարական ցանկեր, վարում է Երկրագիտական քարտարան, որը հանդիսանում է Կոտայքի մարզին նվիրված տպագիր բոլոր երկերի մասին տեղեկությունների ամենամաքողջական աղբյուրը:

Համայրումը իրականացվում է ընթերցողական պահանջով, պետական ֆինանսավորմամբ և նվիրատվությամբ: Գրադարանի սպասարկման և մանկական բաժիններ ընթերցողներն ունեն ազատ մուտք. կարող են ընտրել գրականությունը՝ համապատասխան իրենց ճաշակին և նախասիրությանը:

Գրադարանը համարվում է մեթոդական կենտրոն մարզում գործող բոլոր համայնքային գրադարանների համար: Կազմակերպում է սեմինար-խորհրդակցություններ, կլոր սեղաններ, մեթոդական օգնություն ցուցաբերելու և գրքեր նվիրելու նպատակով հաճախակի այցելություններ է կատարում համայնքային գրադարաններ:

Գրադարանն իրականացնում է «Ընտանեկան գրադարանավար» ծրագիրը, որի շրջանակում սպասարկվում են տեղաշարժման սահմանափակում ունեցող անձինք: Այսօր կրթական կարիքների և նոր չափորոշիչների իրականացման ճանապարհին գրադարանն աջակցում է կրթությանը՝ զարգացնելով տեղեկատվությունը ինքնուրույն գտնելու կարողություն, վերլուծական մտածողություն, համեմատելու և եզրակացություններ անելու հմտություններ, ընթերցանության մշակույթի ձևավորում, թվային ռեսուրսների կիրառում:

Վիճակագրական վերլուծություն

Ներկայացնենք Կոտայքի մարզի գրադարանների վիճակագրական տեղեկությունները 3 տարվա կտրվածքով (2002-2024 թթ.)՝ ըստ Վիճակագրական կոմիտեի տվյալների:

2022 թ. Կոտայքի մարզում գործել է 51 գրադարան, որոնցից 15-ը՝ Հրազդանի տարածաշրջանում, 25-ը՝ Արմավանի, 11-ը՝ Նաիրիի:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Գրքային ֆոնդը կազմել է 713.990, տացքը՝ 523.263, ընթերցողները՝ 34.033: 2024 թ. Կոտայքի մարզում գործել են 54 գրադարաններ, որոնցից 14-ը՝ քաղաքային, 40՝ գյուղական համայնքներում: Ֆոնդը կազմել է 695,5 հազար միավոր գրականություն տարբեր լեզուներով և բովանդակության: Տացքը կազմել է 500.9 հազար: Ընթերցողների թիվը եղել է 29.144, որից 20.167-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներն են: Գրադարանային աշխատողների թիվը՝ 128, որոնցից միայն 40%-ն ունի մասնագիտական բարձրագույն կրթություն:

Սույն ուսումնասիրության շրջանակում հավաքագրել ենք որոշ տվյալներ Կոտայքի մարզի գործող գրադարանների մասին, որոնք ներկայացնում ենք ընթերցողին: 2026 թ. տվյալներով Կոտայքի մարզում գործում է 42 գրադարան, որոնցից 10-ը՝ Հրազդան համայնքում, 2-ը՝ Ծաղկաձոր համայնքում /մեկը քաղաքային, մյուսը՝ Մեղրաձոր բնակավայրի մարզամշակութային կենտրոնում/, 4-ը՝ Չարենցավան համայնքում /1-ը՝ քաղաքային, 3-ը՝ գյուղական բնակավայրերի՝ Կարենիսի, Ալափարսի, Արազականի/, Աբովյան համայնքում՝ 7 գրադարան, որից 1-ը՝ քաղաքային, 6-ը՝ գյուղական բնակավայրերում / Կամարիս, Բալահովիտ, Մայակովսկի, Առինջ, Գեղաշեն, Արամուս/: Առանձին գրադարան է գործում Բալահովիտում, 3 գրադարան Ակունք համայնքում, 1-ը՝ Գառնիում, 9-ը՝ Նաիրիի տարածաշրջանում, որից 3-ը՝ Եղվարդում, 4-ը՝ գյուղական բնակավայրերում: 5 գրադարան գործում է Նոր Հաճն համայնքում: Նոր են բացվել Բուժականի գրադարանը և Քանաքեռավանի գրադարանը:

Եզրակացություն

Կոտայքի մարզի գրադարանային համակարգի վերլուծությունը վկայում է ոլորտում ընթացող կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների մասին: Հետազոտված ժամանակահատվածում արձանագրվել է գրադարանների ընդհանուր թվի նվազում՝

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

2024 թ. գրանցված հարաբերական աճից հետո կտրուկ անկմամբ: Այս հանգամանքը պայմանավորված կարող է լինել ինչպես վարչատարածքային օպտիմալացման գործընթացներով, այնպես էլ ֆինանսական, կազմակերպչական և ժողովրդագրական գործոններով:

Գրքային ֆոնդի և գրքերի տացքի ցուցանիշների նվազման միտումները վկայում են գրադարանների գործունեության արդյունավետության նվազման մասին: Թեև 2024 թ. գրադարանների թվի աճ է արձանագրվել, այն չի ուղեկցվել ֆոնդի համարժեք համալրմամբ կամ ընթերցողական ակտիվության բարձրացմամբ, ինչը ենթադրում է, որ քանակական աճը չի վերածվել որակական զարգացման: 2022 թ. համեմատությամբ նկատվում է ֆոնդի, տացքի կրճատում, ինչը շարունակական բնույթ է կրում նաև հետագա տարիներին:

Ընթերցողների թվի նվազումը հանդիսանում է առավել մտահոգիչ ցուցանիշներից մեկը, քանի որ այն անմիջականորեն արտացոլում է գրադարանների հասարակական դերի և պահանջարկի անկումը: Հատկանշական է, որ ընթերցողների կազմում գերակշռում են իզական սեռի ներկայացուցիչները, ինչը կարող է մատնանշել ընթերցողական վարքագծի գենդերային առանձնահատկությունները և պահանջում է լրացուցիչ սոցիոլոգիական ուսումնասիրություն:

Մարդկային ռեսուրսների վերլուծությունը ցույց է տալիս, որ գրադարանային համակարգում աշխատողների զգալի մասը չունի մասնագիտական բարձրագույն կրթության, ինչը բացասաբար է անդրադառնում նորարարական ծրագրերի ներդրման և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման վրա: Սա ոլորտում մասնագիտական վերապատրաստման և կարողությունների զարգացման անհրաժեշտության կարևոր ցուցիչ է:

2026 թ. արձանագրված նոր գրադարանների բացումը վկայում է ոլորտում որոշակի ակտիվացման և զարգացման ներուժի առ-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

կայության մասին: Սակայն այս դրական միտումները դեռևս չեն փոխհատուցում ընդհանուր նվազման միտումները և պահանջում են համակարգային, երկարաժամկետ ռազմավարական մոտեցում: Գործող գրադարանների հիմնական մասը ապահովված է ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներով: Դրանց մեծ մասը նաև վերանորոգվել է վերջերս: Բոլոր գրադարաններն իրականացնում են էլեկտրոնային ծառայություններ, իսկ մարզային գրադարանը՝ նաև թվային նյութերի մշակման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ, կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ Կոտայքի մարզի գրադարանային համակարգը գտնվում է վերափոխման փուլում, որտեղ առկա են ինչպես ռիսկեր, այնպես էլ զարգացման հնարավորություններ: Արդյունավետ զարգացման ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ՝ ուղղված գրադարանների նյութատեխնիկական բազայի արդիականացմանը, գրքային ֆոնդերի համալրմանը, ընթերցողական մշակույթի խթանմանը, ինչպես նաև մասնագիտական կադրերի պատրաստման և վերապատրաստման համակարգի բարելավմանը: Միայն այս պարագայում հնարավոր կլինի ապահովել գրադարանների՝ որպես գիտակրթական և մշակութային կարևորագույն հաստատությունների դերի վերականգնումն ու ամրապնդումը ժամանակակից հասարակությունում: Իսկ մարզային գրադարանն, այսօր գործում է որպես ամբողջ համակարգի կենտրոնական հանգույց՝ նպաստելով քաղաքային և համայնքային գրադարանների մասնագիտական և մեթոդական աջակցությանը: Ճիշտ է, գրադարանում դեռևս կան խնդիրներ, սակայն այն ծառայում է հանրային տարածք, տեղեկատվական կենտրոն, և կրթական միջավայր ամբողջ մարզի համար:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՄՈՒՐԱԴՅԱՆ 2023 – Մուրադյան, Պ., Գրիգորյան, Մ., Մարգային գրադարանների զարգացման միտումները, *Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու* (Երևան), 14, 404-418 [Muradyan, P., Grigoryan, M. (2023), Development Trends of Regional Libraries, *Collection of Scientific Articles of Gavar State University* (Yerevan), 14, 404-418]:

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002 – Թվային գրադարաններ, Երևան, Հեղ. հրատ., 168 [Zargaryan, T. (2002), *Tvayin Gradaranner*, Yerevan, Hegh. Hrat., 168];

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՄԱՆՎԵԼ 2013, Քարվանսարա, Երևան, 435 [Rafayelyan Manvel(2013), Qarvansara, Yerevan, 435];

LIBRARIES OF KOTAYK REGION

RUZANNA NERSISYAN *Kotayk Regional Library*

Բանալի բաներ՝ Regional and community libraries, Kotayk region, cultural policy, digitization, information accessibility.

In general, the analysis shows that the library system of Kotayk region is in the transformation phase, where there are both risks and development opportunities. To ensure effective development, it is necessary to implement complex measures aimed at modernizing the material and technical base of libraries, replenishing book collections, promoting reading culture, as well as improving the system of training and retraining of professional personnel. Only in this case will it be possible to ensure the restoration and strengthening of the role of libraries as important scientific, educational and cultural institutions in modern society. And the regional library today acts as a central hub of the entire system, contributing to the professional and methodological support of city and community libraries. True, there are still problems in the library, but it serves as a public space, information center and educational environment for the entire region.

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ*

ՀՏԴ: 02(479.25)

ԶԱՐՈՒՀԻ ՏՈՆՈՅԱՆ

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետ

**Թանգարանագիտության, գրադարանագիտության և
մատենագիտության ամբիոն
Բանասիրական գիտությունների թեկնածու**

ORCID: [0000-0003-3738-7416](https://orcid.org/0000-0003-3738-7416)

ԷԼՄԻՐԱ ՂԱՆԴԻԼՅԱՆ

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետ

**Թանգարանագիտության, գրադարանագիտության և
մատենագիտության ամբիոն**

Սույն հոդվածի նպատակն է ընթերցողին և հեղափոխական ուսումնասիրողներին փոխանցել Թալինի համայնքային գրադարանների վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք հավաքել ենք սույն հեղափոխության շրջանակում: Այս նյութերը թույլ կտան հեղափոխում իրականացնել փարաբնույթ վերլուծություններ: Փորձել ենք ներկայացնել փարաձառյուղի բոլոր համայնքները, սակայն ոչ բոլոր համայնքներն են արձագանքել կամ պատասխանել հարցումներին:

Համայնքային գրադարանները կարևոր դեր ունեն բնակչության տեղեկատվական պահանջների բավարարման, մշակութային ժառանգության

* Հոդվածը ներկայացվել է 09.05.2026, ընդունվել է տպագրության 25.06.2026:

The article was submitted on 09.05.2026, accepted for publication on 25.06.2026.

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

պահպանման, թվային գրագիտության զարգացման և համայնքային ակտիվության խթանման գործընթացներում:

Տվյալները խոսում են նաև խնդիրների մասին, որոնք առնչվում են նյութատեխնիկական սահմանափակությանը, թվային ենթակառուցվածքների թերի զարգացմանը, մասնագիտական վերապատրաստման անհրաժեշտությանը և ֆինանսներին: Հոդվածում ընդգծվում է, որ համայնքային գրադարանների հերազա արդյունավետ զարգացումը պահանջում է պետական համակարգված ռազմավարական քաղաքականություն, թվային տեխնոլոգիաների ընդլայնված կիրառում և մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում:

The aim of this article is to present readers and future researchers with the information on the community libraries of the Talin region that was collected within the framework of this study. These materials provide a valuable basis for future analyses and comparative research. We sought to include all communities in the region; however, not all communities responded to our inquiries or participated in the survey.

Community libraries play a vital role in meeting the information needs of the population, preserving cultural heritage, promoting digital literacy, and fostering community engagement. They serve as important centers for education, lifelong learning, and social inclusion.

The findings also reveal a number of challenges, including limited material and technical resources, underdeveloped digital infrastructure, the need for professional training, and financial constraints. The article emphasizes that the effective future development of community libraries requires a coherent national strategic policy, broader implementation of digital technologies, and the continuous enhancement of professional competencies.

Բանալի բաներ՝ Համայնքային գրադարան, գրադարանային ծառայությունների արդիականացում, մշակութային ժառանգություն, կրթամշակութային կենտրոն, թվային գրագիտություն:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Ինչպես հղել՝ Տոնոյան, Զ., Ղանդիլյան, Է. (2025), Արագածոտնի մարզի համայնքային գրադարանները, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(7), 124-144. [https://doi.org/10.54503/2953-8092.2026.1\(7\)-124](https://doi.org/10.54503/2953-8092.2026.1(7)-124)

How to cite (APA style): Tonoyan, Z., Ghandilyan, E. (2025). Community libraries of Aragatsotn region, *Herald of the Armenian Library Association*, 1(7), 124-144. [https://doi.org/10.54503/2953-8092.2026.1\(7\)-124](https://doi.org/10.54503/2953-8092.2026.1(7)-124)

Ներածություն

Համայնքային գրադարանները Հայաստանի մշակութային և կրթական համակարգի կարևոր բաղադրիչներից են, որոնք ապահովում են բնակչության տեղեկատվական հասանելիությունը, նպաստում են ընթերցանության զարգացմանը և համայնքային կյանքի ակտիվ կենտրոններ են: Դրանք հատկապես կարևոր դեր են կատարում գյուղական և փոքր բնակավայրերում՝ դառնալով ոչ միայն գրքային ֆոնդերի պահպանման վայրեր, այլև կրթական, մշակութային և սոցիալական նախաձեռնությունների հարթակներ:

Վերջին տասնամյակներում համայնքային գրադարանների գործունեությունը զգալի փոփոխությունների է ենթարկվել՝ կապված վարչական բարեփոխումների, համայնքների խոշորացման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ: Սակայն միաժամանակ ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, որոնք առնչվում են նյութատեխնիկական բազայի անբավարարությանը, շենքային պայմանների վատթար վիճակին, ֆոնդերի թարմացման սահմանափակ հնարավորություններին և մասնագիտական զարգացման անհրաժեշտությանը:

Այս համատեքստում առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքի գրադարանային համակարգի ուսումնասիրությունը, որտեղ նե-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

րառված են մի շարք համայնքային գրադարաններ՝ իրենց պատմությամբ, գործունեությամբ և ընթացիկ խնդիրներով:

«Հ համայնքային գրադարանները

1996 թ. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ¹ ընդունմամբ համայնքային գրադարանները անցան համայնքապետարանների ենթակայության ներքո: Օրենսդրական այս փոփոխությունը սահմանեց, որ գրադարանները պետք է շարունակեն իրենց գործունեությունը տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության շրջանակում, միաժամանակ պարտավորեցնելով համայնքապետարաններին ապահովել դրանց նյութատեխնիկական բազայի կազմակերպումը, շահագործումը և անհրաժեշտ նորոգման աշխատանքները:

Վերջին տարիներին համայնքային գրադարաններում նկատվում են մի շարք հիմնախնդիրներ, որոնք պահանջում են համակարգված մոտեցում և լուծումներ: Դրանց մի մասը կապված է շենքային պայմանների և նյութատեխնիկական ապահովվածության հետ, ինչպես նաև գրքային ֆոնդերի թարմացման և ժամանակակից պահանջներին համապատասխանեցման անհրաժեշտության հետ: Դրական օրինակ կարելի է համարել համայնքային գրադարանների վերանորոգման նախաձեռնությունները, ինչպիսիք են համայնքային միջոցներով իրականացվող արդիականացման աշխատանքները, որոնք նպաստում են գրադարանային միջավայրի բարելավմանը:

Համայնքային գրադարանները ներկայում իրականացնում են բազմաբնույթ գործառույթներ՝ ընդգրկելով ոչ միայն ընթերցողների սպասարկումը, այլև կրթական, մշակութային և սոցիալական նախաձեռնությունները: Դրանց հիմնական գործառույթներից են՝ նյու-

¹ ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենք, 30 հունիսի 1997 թ. <https://www.arlis.am/hy/acts/325>

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

թերի հավաքումը, կազմակերպումը և պահպանումը, գրացուցակների ստեղծումը, տեղեկատվական համակարգերի հասանելիության ապահովումը, որակյալ գրադարանային ծառայությունների մատուցումը, ընթերցանության խթանումը, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների ներդրումը:

Համայնքային գրադարանների ֆինանսավորումն իրականացվում է հիմնականում տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների հաշվին, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Խորհրդային Միության փլուզումից հետո գրադարանային ֆոնդերի համալրման գործընթացը զգալիորեն թուլացել է: Շատ գրադարաններ հիմնականում համալրվում են նվիրատվությունների միջոցով, որոնք հաճախ բաղկացած են անձնական գրադարաններից փոխանցված հին հրատարակություններից և չեն ապահովում արդի տեղեկատվական պահանջները:

Այս իրավիճակում գրքային ֆոնդերի թարմացումը մնում է արդիական խնդիր: Գրադարանային միությունների և հաստատությունների խորհուրդ է տալիս ապահովել տարեկան առնվազն 10 տոկոս ֆոնդի թարմացում, ինչը հնարավորություն կտա պահպանել գրադարանների տեղեկատվական արդիականությունը և բարձրացնել դրանց ծառայությունների որակը:

Թալինի համայնքային կենտրոնական գրադարան: Թալինի համայնքային կենտրոնական գրադարանը հանդիսանում է քաղաքի կարևոր մշակութային և կրթական հաստատություններից մեկը՝ ապահովելով Թալին քաղաքի և հարակից բնակավայրերի բնակչության համար գրականության և տեղեկատվության հասանելիությունը: Այն ներկայանում է որպես տեղական մակարդակում գործող

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

կարևոր կառույց, որը համադրում է կրթական, տեղեկատվական և մշակութային գործառույթներ:

Թալինի գրադարանի ձևավորումն ունի երկար և բազմափուլ պատմություն: 1930 թ. Թալինում՝ «Հուշարձան» կոչվող աղբյուրի հարակից տարածքում, տեղի բնակիչ Հմայակ Մանուկյանի նախաձեռնությամբ հիմնադրվում է խրճիթ-ընթերցարան, որը տեղի բնակչության կողմից ստանում է «խրճիթավար Համո» անվանումը: Նրա անձնական գրադարանային հավաքածուն դառնում է ընթերցարանի հիմքը, իսկ ինքը՝ հիմնադիրը, գործունեություն է ծավալում բնակչության գրագիտության բարձրացման ուղղությամբ:

1945–1950 թթ. ընթերցարանի գրքային ֆոնդը աստիճանաբար համալրվում է, ինչի արդյունքում այն վերանվանվում է «Թալինի գյուղական գրադարան», այնուհետև՝ «Թալինի շրջանային գրադարան»: Վերջինս ժամանակի ընթացքում վերածվում է գրադարանային կադրերի պատրաստման և մասնագիտական զարգացման կարևոր կենտրոնի:

1975 թ. կառավարության որոշմամբ ստեղծվում է Թալինի գրադարանների կենտրոնացված համակարգը (ԳԿՀ), որը ներառում է 44 մասնաճյուղ-գրադարաններ: 1997 թ. համակարգը լուծարվում է, ինչի արդյունքում մասնաճյուղերը փոխանցվում են համայնքների տնօրինությանը, իսկ կենտրոնական գրադարանը վերակազմավորվում է որպես քաղաքային գրադարան՝ մանկական բաժնով:

Ներկայում Թալինի համայնքային կենտրոնական գրադարանը շարունակում է իր գործունեությունը՝ չնայած շենքային պայմանների արդիականացման անհրաժեշտությանը: Գրադարանը ապահովում է բնակչության գրքային և տեղեկատվական սպասարկումը՝ ցուցաբերելով բարձր մասնագիտական մոտեցում:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Գրադարանի հիմնական գործառույթը գրքային ֆոնդի պահպանումն ու ընթերցողների սպասարկումն է: Ֆոնդում ընդգրկված են հայ և համաշխարհային գրականության նմուշներ, ինչպես նաև մանկական, գեղարվեստական, գիտական, պատմական և ուսումնական գրքեր: Ընթերցողները կարող են օգտվել ինչպես ընթերցարահից, այնպես էլ գրքային նյութերը վերցնել տուն՝ սահմանված կարգով:

Բացի գրքային սպասարկումից, գրադարանն իրականացնում է նաև կրթական և մշակութային գործունեություն: Դրանց թվում են գրական քննարկումները, ընթերցանության խթանման միջոցառումները, թեմատիկ ցուցադրությունները և հիշատակի օրերին նվիրված նախաձեռնությունները: Հատուկ ուշադրություն է դարձվում երեխաների և երիտասարդների ներգրավմանը՝ ստեղծելով ընթերցողական ծրագրեր և ստեղծագործական հանդիպումներ, որոնք նպաստում են ընթերցանության մշակույթի զարգացմանը և համայնքային կրթական միջավայրի ձևավորմանը:

Արագածավանի համայնքային գրադարան

Արագածավան համայնքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի արևմտյան հատվածում: Համայնքային գրադարանը գործում է 1960-ական թվականներից: Սկզբնական շրջանում այն տեղակայված է եղել գյուղական ակումբին կից և ունեցել է շուրջ 1000 միավոր գրականություն: 1975 թ. շահագործման է հանձնվել մշակույթի տան նոր շենքը, ուր գրադարանին հատկացվել է երկրորդ հարկի չորս սենյակ՝ շուրջ 140 քմ ընդհանուր տարածքով, որտեղ այն գործում է մինչ օրս: Տարբեր ժամանակահատվածներում համայնքում գործել են երեք առանձին գրադարաններ, սակայն 1998 թ. «Պետլիտ» գործարանի և «Ալագյազի ոչխարաբուծական սովխոզի» գրադարաններ:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

րի լուծարումից հետո դրանց գրքային ֆոնդերը փոխանցվել են Արագածավանի համայնքային գրադարանին:

Խորհրդային տարիներին գրադարանի ֆոնդի համալրումն իրականացվել է Թալինի գրադարանների կենտրոնացված համակարգի միջոցով: Ներկայում գրքային ֆոնդը համալրվում է Արագածոտնի մարզային գրադարանի, Հայաստանի ազգային գրադարանի, համայնքապետարանի, ինչպես նաև անհատ նվիրատուների աջակցությամբ: Գրադարանի ֆոնդը կազմում է 14.359 միավոր գրականություն, որոնք դասակարգված են ըստ բաժինների և լեզուների: Գրադարանում առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային գրացուցակներ և գրքամատյաններ, որոնք ապահովում են տեղեկատվության արագ որոնումն ու արդյունավետ սպասարկումը:

Արագածավանի գրադարանը համագործակցում է համայնքի կրթական և մշակութային հաստատությունների հետ, այդ թվում՝ թիվ 1 և թիվ 2 միջնակարգ դպրոցների, երաժշտական դպրոցի, գեղարվեստի կենտրոնի և նախակրթարանի հետ: Գրադարանը սպասարկում է շուրջ 600 ընթերցողի՝ տարբեր տարիքային խմբերից: Այստեղ գործում է «Գրքասերներ» խմբակը, որի շրջանակում կազմակերպվում են բազմաբովանդակ միջոցառումներ, ստեղծագործական հանդիպումներ, ցերեկույթներ և մաշված գրքերի վերականգնման աշխատանքներ:

Գրադարանի զարգացման գործում կարևոր նշանակություն է ունեցել միջազգային համագործակցությունը: 2014 թ. «Քաունթերփարթ Ինթերնեշնլ» կազմակերպության հետ համագործակցության արդյունքում գրադարանը շահել է 700.000 դրամ արժողությամբ դրամաշնորհային ծրագիր, որի շրջանակում ձեռք է բերվել համակարգիչ, տպիչ, շարժական ինտերնետ կապ, գրասենյակային գույք,

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ինչպես նաև «Մուղնի» հրատարակչության կողմից տրամադրվել են նոր հրատարակված գրքեր:

Այսօր Արագածավանի համայնքային գրադարանը հանդիսանում է համայնքի կրթամշակութային զարգացման կարևոր կենտրոններից մեկը: Ընթերցողների զգալի մասը ուսանողներ են, որոնք երկար ժամանակ անցկացնում են ընթերցասրահում: Սակայն գրադարանը շարունակում է բախվել նյութատեխնիկական և ենթակառուցվածքային խնդիրների: Մասնավորապես, ծեռային ամիսներին ընթերցասրահի չջեռուցվելու պատճառով այն լիարժեք չի ծառայում իր նպատակին, ինչը բացասաբար է անդրադառնում ընթերցողների աշխատանքի արդյունավետության վրա:

Գրադարանը հանդես է գալիս նաև որպես կամավորական գործունեության կենտրոն: Հայաստանի տարբեր բուհերի ուսանողներից կազմված կամավորների թիմը մասնակցում է համայնքային միջոցառումների և կրթամշակութային ծրագրերի կազմակերպմանը՝ նպաստելով համայնքի հասարակական ակտիվության զարգացմանը:

Գրադարանի առջև ծառայած կարևոր խնդիրներից են շենքային պայմանների բարելավումը, ընթերցասրահի և սպասարկման սրահի մասնակի վերանորոգումը, նոր գույքի ձեռքբերումը, ինչպես նաև ժամանակակից պահանջարկ ունեցող գրականության համալրումը: Հատուկ ուշադրություն է դարձվում նաև տեխնիկական հագեցվածությանը, քանի որ արդյունավետ սպասարկման համար անհրաժեշտ է համակարգիչների առկայություն:

Գրքային ֆոնդի թարմացման խնդիրը լուծելու նպատակով գրադարանում ձևավորվել է ակտիվ ընթերցողների խորհուրդ, որի անդամները միմյանց են տրամադրում իրենց անձնական գրքերը «Հանդիպման վայրը՝ գրադարան» նախաձեռնության շրջանակում:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Այս հանդիպումների ընթացքում կազմակերպվում են ընթերցված գրքերի քննարկումներ, որոնք նպաստում են ընթերցանության խթանմանը, սոցիալական կապերի ձևավորմանը և գրադարանի նկատմամբ հետաքրքրության պահպանմանը:

Արագածավանի համայնքային գրադարանը նաև ակտիվորեն մասնակցում է Թալինի կենտրոնական գրադարան ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպվող մասնագիտական սեմինարներին՝ կիսվելով իր փորձով և աշխատանքային մեթոդներով մյուս գյուղական գրադարանների հետ: Այս համագործակցությունը դրական ազդեցություն է ունենում տարածաշրջանի գրադարանային համակարգի վրա:

Արտենիի համայնքային գրադարան Արտենիի համայնքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում: Համայնքում գործում են մշակույթի տունն ու գրադարանը: Արտենիի համայնքային գրադարանը հանդես է գալիս որպես ներհամայնքային նշանակության մշակութային օջախ, որն ապահովում է բնակչության գրական և տեղեկատվական ռեսուրսների հասանելիությունը:

Գրադարանը կարևոր դեր ունի համայնքի կրթամշակութային զարգացման գործընթացում: Այստեղ կազմակերպվում են միջոցառումներ, որոնք նպաստում են ընթերցանության խթանմանը և համայնքային մշակութային կյանքի ակտիվացմանը: Գրադարանը սերտորեն համագործակցում է տեղի դպրոցի և մշակույթի տան հետ՝ իրականացնելով համատեղ կրթական և մշակութային նախաձեռնություններ, որոնք նպաստում են նոր ընթերցողների ներգրավմանը և համայնքային մասնակցության ընդլայնմանը:

Արտենիի գրադարանը գործում է 1979 թվականից: Սկզբնական շրջանում այն եղել է Թալինի գրադարանների կենտրոնացված համակարգի մասնաճյուղ, իսկ 1997 թվականից՝ գյուղապետարանի ենթակայության ներքո գործող հաստատություն: Ներկայում գրադա-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

րանը գործում է որպես «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի համակարգի մաս: Գրադարանը տեղակայված է մշակույթի տան երկրորդ հարկում: Դրա շենքային պայմանները բարելավվել են World Vision Armenia կազմակերպության իրականացրած բարեգործական ծրագրի շրջանակում:

Գրադարանի գրքային ֆոնդը կազմում է ավելի քան 6000 միավոր, որը հիմնականում համալրվում է նվիրատվությունների միջոցով: Գրադարանի շուրջ ձևավորված ընթերցողական համայնքը ներառում է մոտ 400 ընթերցող, որոնց հիմնական մասը կազմում են դպրոցականները և ուսանողները:

Աշնակի համայնքային գրադարան

Աշնակ բնակավայրը հիշատակվում է դեռևս 5-րդ դարից: Պատմականորեն այն եղել է Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի կարևոր բնակավայրերից մեկը: Ունի մշակութային առանձնահատուկ կարգավիճակ. ՀՀ կառավարության որոշմամբ Աշնակի պարսիումբը ճանաչվել է որպես ոչ նյութական մշակութային արժեք, ինչը ընդգծում է համայնքի մշակութային ինքնության պահպանման կարևորությունը:

Աշնակի գրադարանային համակարգ ձևավորվել է 1933 թ., երբ գյուղում գործել են երկու առանձին գրադարաններ՝ գյուղխորհրդին և կոլտնտեսությանը պատկանող: Այդ շրջանում գյուղխորհրդի գրադարանի աշխատանքները ղեկավարել է Սանդուխտ Գասպարյանը, իսկ կոլտնտեսության գրադարանը՝ Հրաժին Խաչատրյանը: 1947 թ. այս երկու կառույցները միավորվել են՝ ձևավորելով միասնական գրադարանային համակարգ:

1975 թվականից Աշնակի գրադարանը ընդգրկվել է Թալինի գրադարանների կենտրոնացված համակարգի կազմում, իսկ 2021 թ. համայնքների խոշորացումից հետո դարձել է «Թալինի կենտրոնա-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

կան գրադարան» ՀՈԱԿ-ի ենթակայության հաստատություն: Գրադարանի գրքային ֆոնդը կազմում է շուրջ 5600 միավոր և պարբերաբար համալրվում է Արագածոտնի մարզային գրադարանի, ինչպես նաև անհատ նվիրատուների կողմից:

Գրադարանում ստեղծվել է տեղի հեղինակների ստեղծագործություններին նվիրված անկյուն, որը ծառայում է որպես ինքնության պահպանման և մշակութային հիշողության փոխանցման միջոց:

Կաթնաղբյուրի համայնքային գրադարան

Կաթնաղբյուրի համայնքային գրադարանի ստեղծման ստույգ տարեթիվը հստակ չի արձանագրված, ինչը պայմանավորված է խորհրդային շրջանի տեղական մշակութային հաստատությունների մասնակի կամ ոչ լիարժեք փաստագրմամբ: Այնուամենայնիվ, առկա տվյալների համաձայն՝ 1956–1960 թթ. գյուղում գրադարանը գործել է ակումբին կից՝ տեղակայված լինելով դպրոցի հին շենքում: Այդ շրջանում գրադարանի աշխատանքները ղեկավարել է գրադարանավար Ազգանուշ Առաքելյանը:

Գրադարանը ներկայում տեղակայված է մշակույթի տան երկրորդ հարկում: Այն համայնքային մշակութային ենթակառուցվածքների շարքում է: Չնայած պատմական տվյալների սակավությանը՝ գրադարանը պահպանել է իր շարունակական գործունեությունը՝ ծառայելով որպես համայնքի տեղեկատվական և կրթամշակութային կենտրոն:

Կաթնաղբյուրի համայնքային գրադարանի գրքային ֆոնդը կազմում է շուրջ 6100 միավոր, որը պարբերաբար համալրվում է տարբեր աղբյուրների միջոցով՝ ներառյալ Արագածոտնի մարզային գրադարանը, Հայաստանի ազգային գրադարանը, «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ը, ինչպես նաև անհատ նվիրատուներ:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

րը: Այս բազմադրյուր համալրումը նպաստում է գրադարանի ֆոնդի բազմազանությանը և տեղեկատվական արժեքի պահպանմանը:

Մաստարա համայնքի գրադարան

Մաստարայի մշակույթի տունն ու գրադարանը ձևավորվել են խորհրդային շրջանում: Մշակույթի տան շինարարությունը մեկնարկել է 1942 թ., ավարտվել 1947 թ.: 1950 թվականից այդ կառույցում սկսել է գործել գրադարանը: Առաջին գրադարանավարներից է եղել Շիրակ Մնացականյանը, ով համայնքային մշակութային կյանքի կազմակերպման գործում ունեցել է կարևոր դեր:

Մաստարայի համայնքային գրադարանը ներկայում գործում է որպես տեղական նշանակության մշակութային և կրթական կենտրոն: Այն ապահովում է բնակչության գրադարանային սպասարկումը և իրականացնում է ընթերցանության խթանման ծրագրեր: Այստեղ գործում են թեմատիկ գրական խմբակներ (4–6 տարեկանների համար), կազմակերպվում են ճանաչողական այցեր նախադպրոցական և տարրական դասարանների համար, ինչպես նաև կազմակերպվում է «Ամառային դպրոց»:

1975 թվականից Մաստարայի գրադարանը ընդգրկվել է Թալինի գրադարանների կենտրոնացված համակարգի կազմում՝ որպես մասնաճյուղ, իսկ 2023 թ. համայնքների խոշորացումից հետո վերակազմավորվել և անվանակոչվել է ծնունդով մաստարեցի, գրաքննադատ և բանասեր Թեռլիկ Մակույջյանի անունով: Գրադարանի գրքային ֆոնդը կազմում է շուրջ 59005 միավոր, որը պարբերաբար համալրվում է «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի, Արագածոտնի մարզային գրադարանի, Հայաստանի ազգային գրադարանի, ինչպես նաև անհատ նվիրատուների միջոցով: Հատկանշական է, որ ֆոնդի հարստացման գործընթացին նպաստել է նաև

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Թեոլիկ Մակուչյանի ընտանիքը՝ նվիրաբերելով նրա անձնական գրադարանի մի մասը:

Վերին Բազմաբերդի համայնքային գրադարան

Վերին Բազմաբերդի գրադարանը գյուղի կարևոր մշակութային և կրթական հաստատություններից է: Գրադարանը սպասարկում է տարբեր տարիքային խմբերի ընթերցողներին՝ ապահովելով հասանելիություն գեղարվեստական, գիտահանրամատչելի, մանկական և ուսումնական գրականությանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գյուղական ակումբին կից սկսել է գործել գրադարան, որի առաջին գրադարանավարը եղել է Խաչիկ Խաչատրյանը: 1975 թվականից այն գործել է որպես Թալինի կենտրոնացված համակարգի մասնաճյուղ, իսկ 2023 թ. համայնքների խոշորացման արդյունքում վերակազմավորվել է որպես Վերին Բազմաբերդի համայնքային գրադարան:

Ներկայում գրադարանի գրքային ֆոնդը կազմում է 4096 միավոր: Այն պարբերաբար համալրվում է Արագածոտնի մարզային գրադարանի, Հայաստանի ազգային գրադարանի, «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի, ինչպես նաև անհատ նվիրատուների աջակցությամբ: Այս գործընթացը նպաստում է գրադարանի տեղեկատվական ներուժի պահպանմանն ու զարգացմանը՝ ապահովելով համայնքի բնակիչների շարունակական կրթամշակութային ներգրավվածությունը:

Ներքին Բազմաբերդի համայնքային գրադարան

Ներքին Բազմաբերդ գյուղում գործում են մի շարք համայնքային հաստատություններ, այդ թվում՝ դպրոց, համայնքային գրադարան, մշակույթի տուն և բուժկետ: Այս կառույցները կարևոր դեր ունեն համայնքի կրթական, մշակութային և սոցիալական կյանքի կազմակերպման գործում: Գյուղում գրադարանային գործունեություն-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Նը սկսվել 1928 թվականից, երբ հիմնադրվում է լիկկայանը, որի հիմնական նպատակը մեծահասակների անգրագիտության վերացումն էր: 1930 թվականից լիկկայանը վերակազմավորվում է որպես գյուղական ակումբին կից ընթերցարան:

Ներկայում համայնքային գրադարանը շարունակում է իր գործունեությունը՝ սպասարկելով տարբեր տարիքային խմբերի ընթերցողներին: Հատկապես ակտիվ օգտվողներ են գյուղի դպրոցականները: Գրադարանում առկա են գեղարվեստական, մանկական, դպրոցական և տեղեկատու գրքեր:

Գրադարանը ժամանակ առ ժամանակ կազմակերպում է գրքի շնորհանդեսներ, գրական հանդիպումներ և դպրոցական միջոցառումներ, որոնք նպաստում են ընթերցանության մշակույթի ձևավորմանն ու համայնքային մշակութային կյանքի ակտիվացմանը:

Գրադարանի գրքային ֆոնդը կազմում է շուրջ 3900 միավոր: Այն պարբերաբար համալրվում է Արագածոտնի մարզային գրադարանի, Հայաստանի ազգային գրադարանի, ինչպես նաև «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի աջակցությամբ: Այս համագործակցությունը կարևոր նշանակություն ունի գրադարանի ֆոնդի արդիականացման և տեղեկատվական ռեսուրսների համալրման տեսանկյունից:

Կաքավաձորի համայնքային գրադարան

Կաքավաձորը միշտ աչքի է ընկել ընթերցասիրության և մշակութային ակտիվության բարձր մակարդակով: Այդ մասին վկայում է դեռևս 1937 թվականից գործող ակումբ-գրադարանը, որը տեղակայված էր հին ջրաղացի հարակից տարածքում: Գրադարանի առաջին գրադարանավարը եղել է Միսակ Խաչատրյանը, իսկ 1939 թվականից նրա գործունեությունը շարունակել է եղբայրը՝ Կարմեն Խաչատրյանը:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

1965–1967 թթ. գյուղում կառուցվել է նոր մշակույթի տուն, որտեղ տեղակայվել է նաև համայնքային գրադարանը: Այն շարունակում է գործել մինչ այսօր՝ ծառայելով որպես համայնքի կրթամշակութային կարևոր կենտրոն:

Ինչպես Թալինի տարածաշրջանի մյուս գրադարանները, Կաքավաձորի գրադարանը ևս 1975 թվականից ընդգրկվել է Թալինի կենտրոնացված գրադարանային համակարգի կազմում՝ որպես մասնաճյուղ: 2023 թ. համայնքների խոշորացման արդյունքում այն ներառվել է «Թալինի կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքում:

Ներկայում Կաքավաձորի գրադարանի գրքային ֆոնդը կազմում է շուրջ 2800 միավոր: Այն պարբերաբար համալրվում է Արագածոտնի մարզային գրադարանի, Հայաստանի ազգային գրադարանի, ինչպես նաև «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի աջակցությամբ: Գրադարանի ֆոնդի շարունակական համալրումը նպաստում է համայնքի տեղեկատվական և կրթամշակութային պահանջների բավարարմանը:

Թաթուլի /Արեգ/ համայնքային գրադարան

Թաթուլ գյուղը գտնվում է Հայաստանի Արագածոտնի մարզում, Արտենի լեռան հարավ-արևելյան ստորոտին: Գյուղի նախկին անունը եղել է Փիրմալակ, հետո Արեգ: Լինելով Հայաստանի ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի ծննդավայրը՝ 2006 թ. ապրիլի 7-ին վերանվանվել է Թաթուլ:

Գյուղում 1968 թվականից ակումբին կից գործել է գրադարան, որի գրադարանավարը եղել է Կառլեն Հարոյանը: Թաթուլի գրադարանը նույնպես 1975-ից եղել է Թալինի գրադարանների կենտրոնացված համակարգի մասնաճյուղ: 2023 թ. համայնքների խոշորացումից հետո գործում է «Թալինի կենտրոնական գրադա-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

րան» ՀՈԱԿ-ի կազմում: Թաթուլի գրադարանի գրքային ֆոնդը 3010 միավոր է, որը պարբերաբար համալրվում է Արագածոտնի մարզային, Հայաստանի ազգային գրադարանի և «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի կոմից:

Իրինդի համայնքային գրադարան

Իրինդ գյուղը Արագածոտնի մարզի Թալին համայնքում է: Այն հիմնադրվել է 1921 թ. առաջին աշխարհամարտից հետո, երբ հայոց ցեղասպանությունից հետո փրկված հայ ընտանիքները՝ հիմնականում Սասունից և Մուշից, հաստատվել են այստեղ: Իրինդցիները հայտնի են իրենց մշակույթով և ընթերցասիրությամբ: 1961 թ. գյուղում ակումբին կից գործել է գրադարան՝ Խնկանոս Քոթանյանի վարմամբ: Այժմ գրադարանը վերանորոգված է և տեղակայված գյուղապետարանի երկրորդ հարկում: Գրադարանի գրքային ֆոնդը 6412 միավոր է, որը պարբերաբար համալրվում է Արագածոտնի մարզային, Հայաստանի ազգային գրադարանի և «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի կոմից:

Դաշտադեմի համայնքային գրադարան

Դաշտադեմ գյուղը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքում՝ Արտենի լեռան հարավային ստորոտում: Գյուղը նախկինում հայտնի է եղել Ներքին Թալին անվամբ, իսկ 1979 թ. վերանվանվել է Դաշտադեմ:

Գյուղի գրադարանը սկզբնական շրջանում հիմնականում կենտրոնացած էր տեղական և դասական գրականության հավաքածուների վրա, սակայն հետագայում ավելացվել են նաև ժամանակակից գրքեր և գիտական հրատարակություններ: Գրադարանը կարևոր դեր ունի համայնքի մշակութային կյանքում:

1975 թվականից գործել է որպես Թալինի կենտրոնացված համակարգի մասնաճյուղ, 2023 թվականից՝ որպես «Թալինի կենտ-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

րոնական գրադարան» ՀՈԱԿ-ի ենթակա կառույց: 2023 թ. անվանակոչվել է Վոսան Հովսեփյանի անունով: Գրքային ֆոնդը 3902 միավոր է, որը պարբերաբար համալրվում է Արագածոտնի մարզային, Հայաստանի ազգային գրադարանի և «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի կոմից:

Ակունքի համայնքային գրադարան

Ակունք գյուղը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական տարածքում՝ Թալինից 7 կմ հեռավորության վրա: 1941 թ. գյուղը Գյուղուից անվանափոխվել է Ակունքի: Ակունք գյուղում 1829 թ. վերաբնակվել են Կարսից, Մուշից, Խոյից, Ալաշկերտից տեղահանված հայերը: Գյուղում գործում են դպրոց, մանկապարտեզ, գրադարան, մշակույթի տուն:

Գրադարանը կրթական և մակույթային կենտրոն է գյուղում: Այստեղ գործում է ընթերցասրահ, ընթերցանության խմբակ, անցկացվում են միջոցառումներ:

Գրադարանի գործունեությունը սկսվել է 1946 թվականից՝ որպես ակունքին կից կառույց, Մայրանուշ Գրիգորյանի ղեկավարությամբ: 1975 թվականից եղել է Թալինի Թալինի գրադարանների կենտրոնացված համակարգի մասնաճյուղ: 2023 թվականից գործում է «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի կազմում: Գրքային ֆոնդը 2511 միավոր է, որը պարբերաբար համալրվում է Արագածոտնի մարզային, Հայաստանի ազգային գրադարանի և «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի կոմից:

ՆՈՐ ԱՐԹԻԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Նոր Արթիկ գյուղը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքի վարչական տարածքում: Գյուղը հիմնադրվել է 19-րդ դարի վերջում /մոտ 1880-1890 թթ./: Բնակություն են

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

հաստատել Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից՝ Էրզրումից, Իգդիրից և այլ շրջաններից եկած հայերը:

1949 թվականից գյուղի ակումբին կից գործում է գրադարանը: Այն նպաստում է բնակիչների կրթության, ընթերցանության, մշակույթի զարգացմանը և հատկապես մեծ դեր ունի երեխաների և դեռահասների դաստիարակության գործում: Գրադարանն ունի ընթերցասրահ, ուր բնակիչները կարող են կարդալ, պատրաստվել դասերին կամ պարզապես անցկացնել իրենց ազատ ժամանակը: Գրադարանում հաճախ կազմակերպվում են միջոցառումներ, գրքերի քննարկումներ, գրական երեկոներ, հանդիպումներ գրողների կամ հայտնի մարդկանց հետ:

Գրադարանը 1975 թվականից գործել է որպես Թալինի գրադարանների կենտրոնացված համակարգի մասնաճյուղ, իսկ 2023 թվականից՝ որպես «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի մաս: Գրադարանի գրքային ֆոնդը 5200 միավոր է, որը պարբերաբար համալրվում է Արագածոտնի մարզային, Հայաստանի ազգային գրադարանի և «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի կողմից:

Ազարակավանի համայնքային գրադարան

Ազարակավան գյուղը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքի վարչական կազմում: Այն ձևավորվել է 20-րդ դարում, երբ այստեղ բնակություն են հաստատել տարբեր շրջաններից տեղափոխված հայ ընտանիքներ:

Ազարակավանում գործում է գրադարան, որը կարևոր կրթամշակութային կենտրոն է: Գրադարանը նպաստում է ընթերցանության տարածմանը և օգնում է գյուղի երեխաներին, երիտասարդներին ու մեծահասակներին ձեռք բերել նոր գիտելիքներ: Հաճախ կազմակերպվում են մշակութային միջոցառումներ, գրական ընթերցում-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ներ, հանդիպումներ, հիշատակի օրեր և այլ հետաքրքիր ծրագրեր: Ազարակավանի գրադարանը 1975 թվականից եղել է Թալինի գրադարանների կենտրոնացված համակարգի մասնաճյուղ, իսկ 2023 թվականից գործել է «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի կազմում: Գրքային ֆոնդը 4245 միավոր է, որը պարբերաբար համալրվում է Արագածոտնի մարզային, Հայաստանի ազգային գրադարանի և «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի կողմից:

Եզրակացություն

Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքի գրադարանային ցանցի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքային գրադարանները ձևավորվել են պատմականորեն երկարատև գործընթացների արդյունքում և զարգացել են սոցիալ-քաղաքական տարբեր փուլերում՝ սկսած խորհրդային շրջանի ակումբ-ընթերցարաններից մինչև ներկայիս համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ: Գրեթե բոլոր գրադարանները սկզբնավորվել են ակումբներին կից ընթերցարանների կամ փոքր գրադարանների ձևով՝ հիմնականում 1930–1960-ական թվականներին: 1975 թվականից համայնքային գրադարանները կազմել են Թալինի գրադարանների կենտրոնացված համակարգի մաս, իսկ 2023 թվականից ներառվել են «Թալինի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի համակարգում:

Գրադարանների ֆոնդերը փոքր են, հիմնականում տատանվում են 2500–6500 միավորի սահմաններում, համալրվում են նվիրատվություններով և պետական/մարզային աջակցությամբ:

Բոլոր գրադարանները հանդես են գալիս որպես կրթական կենտրոններ, մշակութային միջոցառումների հարթակներ, սոցիալական շփման վայրեր, դպրոցականների ինքնակրթության աջակցման միջավայր: Գրեթե բոլոր գյուղերում գրադարանների հիմնական

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

օգտվողները աշակերտներն են, ինչը ցույց է տալիս կրթական համակարգի հետ փոխկապակցվածությունը:

Ուսումնասիրության արդյունքում նաև պարզ դարձավ, որ առկա են համակարգային խնդիրներ: Դրանցից մեկը համալրումն է, որը տեղի է ունենում հիմնականում նվիրատվությունների արդյունքում, ինչը չի ապահովում արդի տեղեկատվական պահանջներին համապատասխան թարմացում: Հաջորդ խնդիրը շենքային պայմաններն են: Շատ գրադարաններ ունեն հին կամ մասնակի նորոգված շենքեր, սահմանափակ տեխնիկական միջոցներ և թվային ենթակառուցվածքների բացակայություն: Գրադարանները չունեն հնարավորություն՝ ստեղծելու էլեկտրոնային գրացուցակներ կամ օգտվելու թվային պաշարներից: Սակավ է ֆինանսավորումը, առկա է անձնակազմի վերապատրաստման հրատապությունը:

Կարծում ենք՝ համայնքային գրադարանների հետագա զարգացումը պահանջում է պետական և համայնքային համակարգված ռազմավարություն, թվային ենթակառուցվածքների զարգացում, գրքային ֆոնդերի նպատակային թարմացում և մասնագիտական կարողությունների շարունակական բարձրացում:

**THE VOSKAN BIBLE OF ARCHBISHOP ASTVADZADOUR
FAKHRABADTSI IN THE MORGAN LIBRARY & MUSEUM
(PML 199389):**

*An Inscribed New Julfa Binding and Armenian Practices of
Commemorative Book Patronage and Distribution**

ՀՏԴ: 929:800(479.25)Ոսկանյան

DOI: 10.54503/2953-8092.2026.1(7)-145

STYOPA PETOYAN

*Institute of History of Ministry of Education, Science, Culture and Sports
of the Republic of Armenia, PHD in History
Deputy editor of “Historical-Philological Journal”
Accredited expert in printed and manuscript cultural heritage materials
certified by the MoESCS*

ORCID: [0009-0004-7040-688X](https://orcid.org/0009-0004-7040-688X)

EMMA CHOOKASZIAN

*Doctor of Medieval History and Art History, Paul-Valéry University
Adjunct Lecturer at the American University of Armenia,
Curator of the Armenian manuscript collection
at Gary Tatintsian’s Museum (Dubai, UAE).*

ORCID: [0009-0008-1691-1294](https://orcid.org/0009-0008-1691-1294)

Սույն հոդվածը նվիրված է “Morgan Library & Museum”-ի հավաքածուում պահպանվող Ոսկանյան Աստվածաշնչի մի բացառիկ օրինակին: 2025 թ. հունվարին գրավաճառ Ադամ Վայնբերգերը (Նյու Յորք, ԱՄՆ) և “Konstantinopel Rare & Fine Books” գրավաճառ ընկերության ներկայացուցիչ Ռոբերտ վան դեր Գրաֆենը (Էնսխեդե, Նիդերլանդներ) դիմեցին մեզ՝ պատրաստելու մինչ այդ անհայտ այս օրինակի մատենագիտական նկարագրությունն ու փորձագիտական եզրակացությունը:

* The article was submitted on 17.05.2026, reviewed on 22.06.2026, accepted for publication on 24.06.2026.

Հոդվածը ներկայացվել է 17.05.2026, գրախոսվել է 22.06.2026, ընդունվել է տպագրության 24.06.2026:

Կարճ ժամանակ անց գիրքը ձեռք բերվեց “Morgan Library & Museum”-ի կողմից, որտեղ այն ներկայումս պահպանվում է PML 199389 գույքահամարի ներքո: Հողվածում ներկայացվում է գրքի մանրամասն նկարագրությունը, քննարկվում են դրա տպագրական առանձնահատկությունները, լրացումները, ձեռագիր հավելումները և հետագա կիրառությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվում գրքի բնօրինակ կաշվե կազմին, որը կրում է 1699 թ. թվագրված արձանագրություն և հիշատակում Ֆահրապապոցի Աստվածատուր վարդապետին, նրա ծնողներին ու ընտանիքի անդամներին: Կազմը պատկանում է Նոր Ջուղայի արձանագիր կազմերի ավանդույթին և հանդիսանում է այդ դպրոցի պահպանված լավագույն օրինակներից մեկը:

Կազմի արձանագրության, ձեռագրական աղբյուրների և համեմատական նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նույնականացնել գրքի տիրոջը 1725–1745 թթ. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թեմակալ առաջնորդ, նշանավոր մանկավարժ և եկեղեցական գործիչ Աստվածատուր Ֆահրապապոցու հետ: Վերլուծվում են նաև Աստվածատուր վարդապետի կյանքն ու գործունեությունը, նրա դերակատարությունը Կոստանդնուպոլսի և Նոր Ջուղայի կրթական ու հոգևոր կյանքում, ինչպես նաև նրա կապերը հայկական գրքային մշակույթի հետ:

Հատուկ կարևորություն ունի նաև Հակոբ Դ. Ջուղայեցու (1655–1680) կաթողիկոսական կնիքի առկայությունը, որը պահպանվել է Աստվածաշնչի երկու առանցքային էջերում: Այդ կնիքը վկայում է գրքի վաղ շրջանառության մասին և թույլ է տալիս այն կապել կաթողիկոսի հովանավորությամբ տարածված օրինակների խմբի հետ:

Բացի դրանից՝ ուսումնասիրվում են գրքում պահպանված այլ հետքեր՝ ձեռագիր լրացումները, փոխարինված վերջաբանը և Ղաջարական շրջանի իշխանական կերպարի մատիտանկարը, որոնք վկայում են գրքի երկարատև օգտագործման և փոխանցման պատմության մասին:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ “Morgan Library & Museum”-ում պահվող Ոսկանյան Աստվածաշնչի այս օրինակը կարևոր սկզբնաղբյուր է հայկական տպագրության, կազմարարական արվեստի, Նոր Ջուղայի մշակութային միջավայրի և վաղ նոր շրջանի հայկական մտավոր կյանքի պատմության համար՝ բացահայտելով առաջին տպագիր հայերեն Աստվածաշնչի մինչ այժմ անհայտ դրվագները:

Keywords: Voskan Bible, New Julfa, inscribed bindings, Archbishop Astvazadour Fakhreadtsi, Provenance Studies, Armenian Printing, Catholicos Hakob Jughayetsi, seals, Armenian Bookbinding, Pierpont Morgan Library and Museum.

How to cite (APA style): Petoyan, S., Chookaszian, E. (2026), The Voskan Bible of Archbishop Astvazadour Fakhreadtsi in the Morgan Library & Museum (PML 199389): An Inscribed New Julfa Binding and Armenian Practices of Commemorative Book Patronage and Distribution, *Herald of the Armenian Library Association*, 1(7), 145-170. [https://doi.org/10.54503/2953-8092.2026.1\(7\)-145](https://doi.org/10.54503/2953-8092.2026.1(7)-145)

Introduction

The present article examines a remarkable copy of the first printed Armenian Bible, commonly known as the Voskan Bible, distinguished by a number of exceptional features that set it apart from other known examples of the edition. In January 2025, we were contacted by Adam Weinberger (New York, USA) and Robert van den Graven of Konstantinopol Rare & Fine Books (Enschede, the Netherland) to prepare an expert assessment of this previously unpublished copy. Shortly thereafter, the volume was acquired by the Pierpont Morgan Library and Museum (New York City), where it is now preserved under the shelfmark PML 199389.

Beyond its importance as a witness to the history of Armenian printing, this particular copy presents a unique combination of provenance marks, ownership inscriptions, and binding features that shed new light on the reception and circulation of the Voskan Bible within Armenian communities of the early modern period.

This study employs a multidisciplinary approach combining codicological, art-historical, and historical analysis. The research is based on the examination of the Morgan Library copy of the Voskan Bible, including its physical structure, binding, inscriptions, seals, annotations, and later additions. Comparative analysis was conducted with related manuscripts and inscribed bindings preserved in the Matenadaran, the Bibliothèque nationale de France, and the Monastery of the Holy Savior in New Julfa in order to identify the owner, reconstruct the provenance of the volume, and contextualize its binding. Archival, manuscript, and

published sources were further consulted to reconstruct the biography of the owner and to examine the broader practices of commemorative book patronage, ownership, and distribution in the Armenian communities of the seventeenth and eighteenth centuries. Through an analysis of its provenance, physical characteristics, and historical significance, this study seeks to highlight the unique qualities of the volume and to situate it within the broader history of Armenian printing, bookbinding, and book culture. By examining the evidence preserved within this copy, the article contributes to our understanding of the transmission, ownership, and continued veneration of the first printed Armenian Bible among Armenian communities of the seventeenth and eighteenth centuries.

The Voskan Bible and the Armenian Printing Revolution

The first printed Armenian Bible, published in Amsterdam between 1666 and 1668 under the supervision of Voskan Vardapet¹ Yerevantsi, occupies a foundational place in the history of Armenian printing and early modern Armenian culture. Commonly referred to as the “Voskan Bible,” this monumental publication represented not only a technological and intellectual achievement, but also a major artistic and cultural synthesis that united Armenian manuscript traditions with the visual and typographic language of early modern European printing. The publication became one of the most influential books in Armenian history, serving for centuries as the standard printed version of the Armenian Bible and profoundly shaping Armenian artistic production during the seventeenth and eighteenth centuries.

The project emerged through the combined efforts of numerous individuals, including Deacon Matevos Tsaretsi, merchant Avetis Ghlichentsi, Voskan Vardapet Yerevantsi, Hovhannes Yerevantsi, and Karapet Vardapet Andrianatsi (PETOYAN 2023: 229).

Catholicos Hakob IV Jughayetsi played a decisive role in initiating the project. Recognizing that such a monumental publication could only

¹ Vardapet – Archimandrite.

be realized in a major European printing center, he dispatched Matevos Tsaretsi to Europe in 1656 with instructions to establish an Armenian printing house.

After encountering difficulties in Italy due to Catholic ecclesiastical restrictions, Tsaretsi relocated to Amsterdam, whose relatively tolerant commercial environment allowed foreign printing enterprises to flourish. Before beginning the Bible itself, the printing house produced several smaller books in order to test the Armenian typefaces engraved by the renowned master Christophe van Dyck.

Following the death of Matevos Tsaretsi, Avetis Ghlichentsi assumed financial responsibility for the printing house and invited his brother Voskan Yerevantsi to Amsterdam. Voskan arrived carrying with him the royal manuscript Bible commissioned by Hetum II in 1295 (Matenadaran Ms. 180), which served as the principal textual prototype for the printed edition.

The Bible was printed between March 11, 1666 and October 13, 1668, an astonishingly rapid accomplishment for the period. The quality of the typography, engraving, layout, and ornamentation surpassed all previous Armenian printed books and established a new artistic and technical standard for Armenian publishing. The Bible is illustrated with numerous woodcuts derived from European engraving traditions, many of them associated with Christoffel van Sichem the Younger and ultimately based on compositions by artists such as Albrecht Dürer, Hendrick Goltzius, and Maarten de Vos. Closely related to illustrations published in seventeenth-century Dutch Bibles, these engravings introduced Western European iconographic models into Armenian book art and exerted a lasting influence on Armenian manuscript illumination, engraving, and decorative arts throughout the eighteenth century.

The Bible is printed in two columns, with the text block measuring approximately 21×14.7 cm. The title page is followed by a comparative table of Armenian and Arabic numerals and Voskan's preface dedicated to Catholicos Hakob IV Jughayetsi. The publication concludes with

an untitled poem attributed to Hetum II of Cilician Armenia, inherited from the manuscript prototype used for the edition (KHACHATRYAN 2018: 139).

The pages of the Bible are double-numbered in Armenian letters and Arabic numerals, dividing the publication into two principal sections.

Two distinct editions of the Voskan Bible may be identified among the surviving copies, differing from one another in several textual and structural features. The first edition is more closely aligned with the Vulgate tradition of the Catholic Church and includes the deuterocanonical works *The Prayer of Manasseh*, *King of Judah* and *Fourth Ezra*, both of which fall outside the biblical canon of the Armenian Apostolic Church. These two texts are absent from the second edition, resulting in a reduction of twenty-six pages in the second pagination when compared with the first edition (KHACHATRYAN 2018: 133-152).

In copies belonging to the first edition, the Bible consists of eight unnumbered preliminary pages, followed by a first pagination comprising 628 pages and a second pagination comprising 834 pages. The total extent of the volume is therefore 1,472 pages. Although the printed page numbers add up to only 1,470, a pagination error in the text causes pages 175 and 176 of the second pagination to be numbered twice (VOSKANYAN, KORKOTYAN, SAVALYAN 1988: 44), each occurrence corresponding to different content. As a result, the actual number of pages reaches 1,472.


In copies of the second edition, the first pagination remains unchanged, while the second pagination is reduced to 808 pages. Consequently, the total extent of the volume amounts to 1,446 pages.

General Description of PML 199389

The Morgan Library copy belongs to the first edition type of the Voskan Bibles. Its second pagination contains 834 pages.

Overall, the volume is in a remarkably good state of preservation. The leaves are generally clean and unworn, and both the original binding and title page remain intact. Nevertheless, the book exhibits se-

veral minor losses, restorations, and other noteworthy particularities that merit closer examination and will be discussed below. The present copy lacks the original printed colophon on folios 833–834, which was replaced during the eighteenth century by a handwritten version reproducing the content of the missing printed text [img. 1].



img. 1.

The original colophon replaced by a handwritten one, Voskan Bible, Pierpont Morgan Library and Museum, PML 199389, folio 834


Immediately after the handwritten replacement colophon appears the Prayer of Euphrates, copied by hand. This text is absent from printed editions of the Voskan Bible but appears in the royal manuscript Bible commissioned by Hetum II in 1295, which served as the principal manuscript prototype for the printed edition. The inclusion of this prayer demonstrates that the owner or scribe responsible for the additions maintained direct familiarity with manuscript traditions and consciously sought to restore elements omitted from the printed version.

The volume also contains an additional manuscript folio [img. 2] presenting twenty-two quotations under the title “The Assembly, Council

and Judgment of the Unbelieving Jew Against Jesus of Nazareth, the Savior of the World.” A concluding note associated with this appendix bears the date 1705. Several additional notes in the margins and throughout the book appear to have been written by the same hand, one of them dated 1820.

Img. 2.

An additional manuscript folio presenting twenty-two quotations under the title “The Assembly, Council and Judgment of the Unbelieving Jew Against Jesus of Nazareth, the Savior of the World.” A concluding note associated with this appendix bears the date 1705, Pierpont Morgan Library and Museum, PML 199389.



The printed text and replacement colophon are executed in boldgir script, while later annotations and additions are written in notgir.

It is also noteworthy that a blank leaf has been inserted between pages 718 and 719. Examination of the volume indicates that this leaf does not form part of the original printed structure of the Voskan Bible and was most likely added during a later rebinding or restoration campaign. Its absence from other known copies of the edition further supports the conclusion that it represents a subsequent intervention rather than an original component of the publication.

Another noteworthy feature of the Morgan Library copy is the system of red markings added throughout the volume to distinguish the

biblical text from the marginal commentary. The pages were ruled by hand with red vertical lines framing the two-column text block, closely following the layout conventions of medieval Armenian manuscripts. Since these lines were added after printing, they likely reflect a deliberate effort by an owner or binder to adapt the printed book to the visual standards of manuscript culture. Their presence demonstrates the enduring influence of manuscript traditions on the reception, use, and presentation of early Armenian printed books, blurring the boundaries between manuscript and print culture in the seventeenth century.

The Binding of PML 199389 and the New Julfa Tradition

The most remarkable feature of this copy, however, is its original leather binding [img. 3], which preserves a dated and inscribed colophon. Such evidence is exceptionally rare and offers unique insights into the provenance, ownership history, and circulation of the volume.



Img. 3.

The original leather binding of Morgan Library’s Voskan Bible, with the inscription mentioning the name of Astuatsatur of Fakhabad, Pierpont Morgan Library and Museum, PML 199389.

The binding itself represents an outstanding example of the New Julfa tradition of inscribed Armenian bindings, distinguished by the incorporation of historical and commemorative texts directly into the decorative program of the cover.

Within the artistic milieu of New Julfa between 1651 and 1698, the name of a certain Azaria Dpir, son of Priest Mkrtych, emerges as the founder of a distinctive workshop specializing in inscribed Armenian leather bookbindings (MALKHASYAN 2022: 68-78). The ornamental repertoire and decorative tools associated with this atelier continued to be employed for more than a century, until approximately 1736. During this period, over fifty dated and inscribed manuscript bindings were produced, four of which explicitly mention Azaria by name (IBID: 71-73). Nevertheless, despite the continuity of the workshop tradition, significant variations in design, composition, and decorative stamps can be observed among the surviving examples, suggesting the participation of multiple craftsmen and the gradual evolution of the atelier's artistic practices over time.

Ութաճալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Վերնագիրը՝ հոճ երկաթագիր: Մանր զարդանախշեր, լուսանցանիշեր: Տիտղոսաթեր-

թին՝ զարդանախշ և օսմաներեն գրություն:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակն ունի հնամաշ կազմ, տիպոգրսաթեր-թին, քնագրի վերջում՝ մատիտով իզբզանքներ: Մատենագիտական նկարա-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

գրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերի մեջ:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229426>

1907

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ Գ.

Թալիմաթ ը տին ի մէսիհի: Իքինճի թապ' / Էսէր ի վեր. Յ.Գ. Գրիգորեան.- Իսթանպոլ: Մաթ-պա'ա ի Ա.Յ. Պոյաճեան, 1907.- 126, 1 չի. էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԹԱԼԻՄԱԹ Ը / ՏԻՆ Ի ՄԷՍԻՀԻ / ԷՍԷՐ Ի / ՎԵՐ. Յ.Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ / ԻՔԻՆՃԻ ԹԱՊ' / ... / ԻՍԹԱՆՊՈԼ / ՄԱԹՊԱ՝Ա Ի Ա.Յ. ՊՕՅԱԾԵԱՆ / 1907 /

ԳՐԻԳՈՐԵԱՆ Յ.Գ. Քրիստոնէական կրոնի կանոնները: Երկրորդ տպագրութիւն /Գրեց վեր.

Յ.Գ. Գրիգորեան.- Կ. Պոլիս: Ա.Յ. Պոյաճեան տպարան, 1907:


Ութաձալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Վերնագրերը՝ հոճ երկաթագիր: Մանր զարդանախշեր, բաժանազարդեր: Տիտղոսաթերթին՝ զարդանախշ և օսմաներեն գրություն:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակն ուն զարդափակ կազմ, վրան՝ վերնագրի հակիրճ տվյալը: Ըստ Հ. Սրեփանյանի՝ գիրքը տպագրվել է նաև 1912 թ.: Առաջին տպագրության վերաբերյալ մատենագիտական տվյալ չունեն: Երկու գրառումներն էլ բացակայում են «Հայ գիրքը 1901-1920 թթ.» մատենագիտությունից:

Յ. Սրեփանյան, 2005 թ., թիվ 1271

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229396>

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ



ԶՕՃՈՒԳԼԱՐ իշխին միմեկիերաթ.- Տերսաատէթ: Մաթապա՛աի Յ. Մատթէոսեան, 1907.- 134 էջ:

ՏԻՏՆՈՒՄԱԹԵՐԹ

ԶՕՃՈՒԳԼԱՐ ԻԶԻԻՆ / ՄԻԻՃԷՎԿԷՐԱԹ / ՏԷՐՍԱ՛ԱՏԷԹ / ՄԱԹՊԱ՛ՍԻ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ / 1907 /

ԳՈՎԱՐՆԵՐ մանուկների համար.- Կ. Պոլիս: Յ. Մատթէոսեան տպարան, 1907:

Ոյթածալ, մամուկանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Մանր բաժանարարներ: Տիտղոսաթերթին՝


գարդանախշ, դարձերեսին՝ օսմաներեն գրույթուն:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակն ունի բարակ, զարդափակ կազմ, վրան՝ զարդապատկեր: Կազմի վերջերեսին՝ օսմաներեն գրույթուն և գրքի արժեքը. «Ֆիյ. 100 փարայ»: Մատենագիտական նկարագրույթունը չի ներառվել «Հայ գիրքը 1901-1920 թթ.» մատենագիտական ցանկում:

Յ. Ստեփանեան, 2005 թ., թիվ 1278

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229394>

1925



ԻՆԱՅԷԹ ի իլաիյէ /Ամէրիգան «Պօրտ» շիրքէթի թարաֆնտան.- Տերսա՛ատէթ: Սէլամէթ մաթապա՛, 1925.- 174 էջ:

ՏԻՏՆՈՒՄԱԹԵՐԹ

ԻՆԱՅԷԹ Ի / ԻԼԱՎԻՅԷ / ԱՄԷՐԻԳԱՆ «ՊՕՐՏ» ՇԻՐՔԷԹԻ ԹԱՐԱՖՆԸՆՏԱՆ / ՏԷՐՍԱ՛ԱՏԷԹ / ՍԷԼԱՄԷԹ ՄԱԹՊԱ՛ / 1925 /

ԱՍՏՅՈ ողորմութիւնը /Ամերիկեան Պօրտ ընկերութեան հրատարակութիւն.- Կ. Պոլիս: Սէլամէթ տպարան, 1925:

Ոյթածալ, մամուկանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Վերնագրերը՝ հոծ եր-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

կաթագիր: Մանր զարդանախշեր: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակն ունի բարակ, մասամբ վնասված կազմ: «Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության մեջ նկարագրվել է աստղանիշով՝ ըստ մատենագիտական աղբյուրի:

Հայ գիրքը 1921-1930 թթ թիվ 1523: Յ. Սյրեփանեան, 2005 թ., թիվ 1513
<https://archives.saltresearch.org/handle/123456789/229429>

1927

ԹԱՀՄԻՋԵԱՆ Վ.Պ.

Մինթէխապ րուհանի իլահիլէր /Ա.Գ. Սէֆէրեան.- Հալէպ: [Տպարան Մարանաթա], 1927.- Ժ, 552, 14 չի. էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

«Էօժրիւմ օլթուզնա Րապպա իլանի օգոյանաղըմ»: / Մէգ. 104,33: / ՄԻԻՆԹԵԽԱՊ / ՐՈՒՀԱՆԻ ԻԼԱՀԻԼԷՐ / ԸՆՏՐՈՒԱԾ / ՀՈԳԵԻՈՐ ԵՐԳԵՐ / ԵԻ / ՇԱՐԱԿԱՆՆԵՐ / Ա.Գ. ՍԷՖԷՐԵԱՆ / ՎԵՐ. Վ.Պ. Թահմիզեանըն ինթիպահ Իլա- /իլիլէրի էլրէ օլարագ պագիսինի ճէմ՝ թասիհի / վէ թէրթիպլէ նէշո


էլլէմիշիգ: / Կէլիհիգ Րապպա թէրէննիւմ էլրէլիւմ: Մէգ. 95,1: / ՀԱԼԷՊ / 1927 /

Մամուլանիշեր չունի: Բոլորգիր: Վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Բուն շարադրանքում՝ լուսանցանիշեր: 363-րդ էջից շարունակվող էջակալությամբ նոր վերնագիր. «Ընտրուած հոգեւոր երգեր: Հայերէն մաս»: Բնագրի վերջում ցանկեր:

Ծանոթ.՝ Բնագիրը՝ հայապատ թուրքերեն և հայերեն: Նկարագրված օրինակն ունի զարդափակ կազմ, վրան՝ վերնագրի տվյալը: «Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության մեջ նկարագրվել է աստղանիշով: Վերնագրի թարգմանությունը վերցվել է Հասմիկ Սյրեփանյանի մատենագիտությունից:

Հայ գիրքը 1921-1930 թթ թիվ 2817: Յ. Սյրեփանեան, 2005 թ., թիվ 1550ա

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229425>



**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՀԻՐԷԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ ***

ՀՏԴ: 364.4(620)

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ

«Գրիգոր Ե. Աղաթօն» գրադարանի գրադարանավար

ORCID: [0009-0003-4571-7523](https://orcid.org/0009-0003-4571-7523)

Յօդուածը կը ներկայացնէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) գրադարանային ժառանգութեան ձեւաւորման, զարգացման եւ պահպանման պատմութիւնը՝ յատուկ ուշադրութիւն դարձնելով 1911 թ. Գահիրէի մէջ հիմնուած Կեդրոնական գրադարանին: Արխիւային փաստաթուղթերու, նամակագրութեան, գրացուցակներու եւ վարչական հաշուետուութիւններու ուսումնասիրութեան հիման վրայ կը բացայայտուին գրադարանին ստեղծման գաղափարական նախադրեալները, հաւաքածոներու համալրման ուղիները, ինչպէս նաեւ անհաւր բարերարներու եւ ՀԲԸՄ մասնաճիւղերու ներդրումը գրադարանային հաւաքածոներու հարստացման գործին մէջ: Ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ, որ գրադարանը ոչ միայն մշակութային ժառանգութեան պահպանման կեդրոն մըն էր, այլ նաեւ կոչուած էր նպաստելու կրթական հաստատութիւններու գործունէութեան եւ ծառայելու հայ հասարակութեան մտաւոր զարգացման:

Յօդուածին մէջ քննութեան կ'առնուին նաեւ գրադարանին հետագայ վերակազմակերպման գործընթացները, հաւաքածոներու դասակարգման եւ պահպանման խնդիրները, ինչպէս նաեւ 1970-ական թուականներուն իրականացուած գնահատման եւ վերադասաւորման նախաձեռնութիւնները: Առանձնայատուկ ուշադրութիւն կը դարձուի «Աղաթօն» գրադարանին կազ-

* Հոդվածը ներկայացվել է 14.05.2026, ընդունվել է տպագրության 17.06.2026:

The article was submitted on 14.05.2026, accepted for publication on 17.06.2026.

մատրման պատմության, անոր հիմքը կազմած Կեդրոնական մատենադարանին հաւաքածոներուն, ինչպէս նաեւ հետագայ նուիրատուութիւններու շնորհիւ ձեւատրուած գրքային հարստութեան: Ներկայացուած են նաեւ գրադարանին մէջ պահպանուած հին փպագիր գիրքերուն եւ ձեռագիրներուն վերաբերող տուեալներ, որոնք կարեւոր նշանակութիւն ունին հայկական գրատպութեան եւ մշակութային ժառանգութեան ուսումնասիրութեան տեսանկիւնէն: Հետազոտութիւնը կը փաստէ, որ ՀԲԸՄ-ի գրադարանային գործունէութիւնը նշանակալի դեր ունեցած է սփիւռքահայ ինքնութեան պահպանման, կրթական ու մշակութային կեանքի կազմակերպման եւ հայկական գրքային ժառանգութեան փոխանցման գործին մէջ:

The article examines the history of the formation, development, and preservation of the library heritage of the Armenian General Benevolent Union (AGBU), with particular emphasis on the Central Library established in Cairo in 1911. Based on the study of archival documents, correspondence, catalogues, and administrative reports, the ideological foundations behind the establishment of the library, the mechanisms of collection development, and the contributions of individual benefactors and AGBU branches to the enrichment of its holdings are revealed. The research demonstrates that the library served not only as a center for preserving cultural heritage but was also intended to support educational institutions and contribute to the intellectual advancement of Armenian society.

The article further explores the subsequent reorganization of the library, issues related to the classification and preservation of its collections, and the evaluation and reclassification initiatives undertaken during the 1970s. Particular attention is devoted to the history of the formation of the "Agathon" Library, the Central Library collections that constituted its foundation, and the bibliographic wealth accumulated through later donations. The study also presents data on the early printed books and manuscripts preserved within the library, highlighting their significance for the study of Armenian printing history and cultural heritage. The research confirms that AGBU's library activities played a significant role in preserving Armenian diasporic identity, organizing educational

and cultural life, and ensuring the transmission of Armenian book heritage to future generations.

Բանալի բառեր՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն, Կեդրոնական գրադարան, Աղաթօն գրադարան, սփիւռքահայ ինքնություն, գրադարանային ժառանգություն, նուիրատուություններ, հնատիպ գիրքեր, մշակութային ժառանգություն, եգիպտահայ համայնք:

Ինչպես հղել՝ Երամեան, Մ. (2026), Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Գահիրեի գրադարանները, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(7), 187-201.

How to cite (APA style): Yeramyán, M. (2026), The Libraries of the Armenian General Benevolent Union in Cairo, *Herald of the Armenian Library Association*, 1(7), 187-201.

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը կը հիմնուէր Գահիրեի (Եգիպտոս) մէջ 1906 թ.: Հայոց Յեղասպանութիւնը տակաւին գրեթէ տասնամեակ մը հեռու էր, եւ Միութիւնը իր ուշադրութիւնը կեդրոնացուցեր էր զաւանդներուն մէջ դպրոցներու հիմնումին եւ գրաճանաչութեան տարածումին վրայ:

1911 թ., երբ ՀԲԸՄ-ն կը թեւակոխէր իր հիմնադրութեան հինգերորդ տարին, արդէն սկսած էր մտածել նաեւ հոգեւոր սնունդի մասին, որովհետեւ եթէ մնացեալ ազգերուն համար ճիշդ է Աւետարանին խօսքը՝ «Մարդ ոչ միայն հացի կեսցէ, այլ եւ բանի», մեզի՛ հայերուս համար, ատիկա վերապրումի նշանաբանը եղած է վաղուց:

Գիրին եւ մշակոյթի դերին մասին ՀԲԸՄ հիմնադիրներուն ունեցած խորունկ գիտակցութեան շնորհիւ, հակառակ բազմաթիւ տնտեսական դժուարութիւններու, 1911 թ. հիմը կը դրուի Կեդրոնական գրադարանի մը, որուն որպէս գրադարանավար-ատենապետ պաշտօնական նամակով մը եւ Պողոս Նուպար Փաշայի փափաքով կը հրաւիրուի Շէրիտճեան Պէյ: Այդ նամակին մէջ կ'ըսուի նաեւ, թէ

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«կրկին հատորները պիտի յատկացուին բնագաւառի կրթական հաստատութեանց՝ Ժողովիս որոշումով»:

Կեդրոնական գրադարանին գաղափարը տարածելու համար Միութիւնը 1911 թ. 10 մայիսին կը հրատարակէ շրջաբերական մը, ուր ըստած է. «Հայկական Ընդհ. Միութեան բազմադիմի նպատակին մէջ գլխաւոր տեղ մը կը գրաւէ միտքի մշակութեան բաժինը: Այս ընկերութիւնը իր հիմնարկութենէն ի վեր այդ ուղղութեամբ աշխատեցաւ, եւ ինչպէս արդէն իր վերջին տեղեկագրէն կ'երեայ՝ այժմ իր գլխաւոր ուշադրութիւնը դարձուցած է կրթական գործին: Բայց այդ գործունէութեան մէջ պակաս մը կար, զոր Կեդրոնական վարչական ժողովը վերջերս փափաքեցաւ լրացնել՝ հիմնելով իր Կեդրոնատեղւոյն մէջ (Հին Գահիրէի Մատապեղ շրջան) «Կեդրոնական գրադարան» մը»: Այս կոչ-շրջաբերականը անպատասխան չէ մնացած անշուշտ, ինչպէս կ'երեւի ստացուած նամակներէն, որոնցմէ առաջինը կու գայ Մաղաքիա արք. Օրմանեանէն. «Ի պատասխանի մայիս 10 (1911) թուակիր շրջաբերականին, զոր ինձ ալ յղել հաճեր էիք, կը փութամ իմ հեղինակութիւններէս տրամադրելի գտնուածներէն մի մի օրինակ յատկացնել նորահաստատ մատենադարանիդ»: Ան կ'ուղարկէ 19 անուն գիրք, որոնցմէ քանի՞ն կը հասնի, յստակ չէ, որովհետեւ նամակին այդ բաժինը ունի կարմիրով եւ կապոյտով ընդգծուած անուններ, որոնք, սակայն, ոչինչ կ'ըսեն:

26 դեկտեմբեր 1911 թ. Լ. Օտապաշեան, գերաշնորհ Մուշեղ սրբազանի յանձնարարութեամբ «Ամերիկահայ տարեցոյց»ներէն կ'ուղարկէ, ութ ապահովագրեալ ծրարներով, ինչպէս նաեւ երկու օրինակ Վիքթոր Հիկոյի «Իննսուներեքը» գիրքէն, Հայկական Միութեան Մատենադարանին համար:

ՀԲԸՄ-ի Քէմպրիճի մասնաճիւղէն գնահատանքի գիր մը կը հասնի 20 յուլիս 1911-ին, ուր կը կարդանք. «...որուն համար (գրադա-

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

րանին) մեր Քեմպրիճի մասնաճիւղը իր խնդակցութիւնը յայտնելով իր փանաքի դրամական կարողութեամբ օժանդակութիւնը կ'ընէ երկու անգլիական ոսկիով, որը գանձելի է Brown Brothers-էն ներփակ չէքով մը, թիւ 457»:

Շրջաբերականին մէջ յիշուած կէտը, որ կ'ըսէր «կրկին հատորները պիտի յատկացուին բնագաւառի կրթական հաստատութեանց՝ Ժողովիս որոշումով» իր արծագանգը կը գտնէ նոյնիսկ հեռաւոր Տիգրանակերտի (Տիարպէքի) մէջ, ուրկէ 26 հոկտեմբեր 1911-ին նամակ մը կը հասնի, գիրքերու խնդրանքով:

Նամակներ ստացուած են նաեւ հեռաւոր Չմշկածագէն. «Հալածանքի եւ տառապանքի օրերուն թողած տխուր ազդեցութենէն բնականաբար Չմշկածաքն ալ չըպիտի կրնար զերծ մնալ, քանի որ անիկա եւս կ'ուզէր յուսահատ գոյութեան կռիւ մղել հայրենական բոլոր աւանդութեանց եւ իրաւանց տէրը մնալու: ...Բարեբախտաբար այս քանդիչ եւ կորստաբեր քաղաքականութենէ վերջ եւ հրէշային բռնակալներուն տեղ, ուրախ ենք ըսելու թէ այսօր առաջինին տեղ ազատութեան լոյսն է որ կը տարածէ իւր թեւերը ...»:

Ղրկուած է նաեւ Չմշկածագի ազգային ուսումնասիրաց ընկերութեան ծրագիրը, որուն առաջին կէտը կ'ըսէ՝ «Ազգային գրադարան մը հիմնելու, լսարանի վերաբացման զարկ տալու, անխտիր կերպով ժողովուրդին մէջ ուսումնառութեան եռանդ ներշնչելու նպատակաւ Միութիւնս կը փափաքի գործի սկսիլ եւ յարատեւութեամբ շարունակել»:

Յաճախ, սակայն, Կեդրոնական գրադարանին ղրկուած ծրարները կամ տեղ չեն հասած, կամ անոնց Գահիրէ հասնիլը նամակատան կողմէ չէ ծանուցուած ՀԲԸՄ-ի կեդրոնին, որուն արդիւնքով նամակներ հասած են դժգոհելով, որ իրենց ղրկած բազմաթիւ

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

գիրքերը ուշադրութեան արժանացած չեն: Նման նամակ մը հասած է Կ. Պոլսէն, ներածում-արտածումի Պաղտատլեան ընկերութենէն:

Օտարալեզու գիրքերու 15 էջերէ բաղկացած ցուցակ մը կ'ըսէ, թէ այդ գիրքերը ՀԲԸՄ գրադարանին նուիրուած են Վսեմաշուք Արամ Պէյ Տ'Ապրոյի կողմէ, Մկրտիչ Անդրանիկեանի ձեռամբ: Այս 375 անուն գիրքերէն 36-ը երկու հատորնոց են, 7-ը՝ 3 հատորնոց, 4-ը՝ 4 հատորնոց, 4-ը՝ 5 հատորնոց, 1-ը՝ 6 հատորնոց, 3-ը՝ 7 հատորնոց, 1-ը՝ 8 հատորնոց, 1-ը՝ 30 հատորնոց եւ 1-ը՝ 38 հատորնոց: Ամբողջութիւնը կ'ընէ 607 հատոր, որոնց գրեթէ կէսը անգլերէն է, միւս կէսն ալ՝ ֆրանսերէն:

Այս գիրքերը իրապէ՛ս թանկարժէք են, որովհետեւ անոնց ջախջախիչ մեծամասնութիւնը հրատարակուած է 1900-էն առաջ եւ, ըստ այդ շրջանի սովորութեան, գրեթէ բոլորին ալ կազմը շքեղ է եւ կաշեպատ: Դժբախտաբար, սակայն, բոլորը չեն, որ կը պահեն իրենց սկզբնական շքեղութիւնը. գիրքերն ալ, մարդոց նման կ'ազդուին իրենց «ապրած» միջավայրէն եւ այդ միջավայրին պայմաններէն: Բայց Արամ Պէյ Տ'Ապրոյի նուիրաբերած այս հաւաքածոն կը մնայ իսկական հարստութիւն մը ՀԲԸՄ-ի Կեդրոնական գրադարանին համար:

1966 թ. սեպտեմբերին, Աղեքսանդրիայէն Ա.Յ. Կարինեան կը գրէ Կեդրոնական յանձնաժողովին, որպէս Զ.Հ.Բ.Ը.ի դիւանապետը եւ կ'ըսէ, թէ Հէքիմեան գրադարանի թիւով 1597 (հազար հինգ հարիւր իննսուն եւ եօթը) գիրքերը կը յանձնէ Ներսէս Պետրոսեանին, փոխան ընկալագրի: Կը նշանակէ, թէ Աղեքսանդրիոյ Հէքիմեան գրադարանին գիրքերը եւս պատսպարուած են Միութեանս գրադարանին մէջ, որ այդ թուականներուն դադրած էր «Կեդրոնական գրադարան» կոչուելէ, յստակ չէ՛ թէ ինչո՛ւ:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

1974-ի յունիսին Եգիպտոսի Կեդր. յանձնաժողովի գումարած նիստին օրակարգին վրայ եղած է «Միութեան գրասենեակը, գրադարաններուն, գիրքերուն օգտագործման հարց»ը, որ «Որոշումներ»ու թիւ 5-ի Գ. կէտով յանգած է եզրակացութեան մը. «հայ հասարակութիւնը չհետաքրքրող ֆրանսերէն բժշկական եւ այլ մասնագիտական գիրքերը նուիրել տեղոյս Ֆրանսական մշակութային կեդրոնին եւ կամ Գահիրէի պետական մատենադարանին»:

Այս առաջարկը աւելի կանուխ՝ 1973 թ նոյեմբերին արդէն եղած է. Միութեանս Եգիպտոսի Կեդրոնական յանձնաժողովի այդ օրերու ատենապետ Յովհաննէս Քէհեաեանի փափաքին համաձայն, Տիգրան Պապիկեան կը զբաղի Միութեան գրադարաններու գիրքերով եւ, ինչպէս ինք կ'ըսէ՝ «գիրքերուն տխուր ճակատագրով» եւ յետոյ կ'ընէ քանի մը առաջարկներ, որոնցմէ մէկն է «ընդհանուր զտում մը կատարել եւ անպէտ նկատուած գիրքերն ու դասագիրքերը ձեռքէ հանել որեւէ ձեւով»:

Բժշկական այս հատորները ունին իրենց առանձին ցանկեր եւ կը հաշուեն 247 կազմուած հատորներ:

Այս որոշումը չէ գործադրուած: Երբ 2018 թ. կը ստանձնէինք դասաւորումը գրադարանին, որուն գիրքերը աւելի քան տասնամեակէ մը ի վեր կը մնային ամբարանոցը, սնտուկներու մէջ, այդ բժշկական գիրքերը տակաւին այստեղ էին եւ կը մնան մինչեւ օրս, յատուկ բաժինի մը մէջ:

Այլ ցանկ մը խորագրուած է. «Ցանկ Եագուպ Արթին Փաշայի գրադարանէն դուրս հանուած գիրքերու», ուր կը գտնուին *Revue des Deux Mondes*-ի կազմուած 202 հատորներ, առաւել այլ՝ թիւով 228 գիրքեր:

Ըստ երեւոյթին ընդհանուր ընթերցողները նկատի առնելով՝ այս գիրքերը հետաքրքրական չեն դատուած եւ դուրս մնացեր են

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

շրջագայութեան դրուած գիրքերու ցանկերէն: Բարեբախտաբար, այս ամբողջ գիրքերը այսօր մաս կը կազմեն ՀԲԸՄ-ի Գահիրէի մասնաճիւղի «Աղաթօն» գրադարանին:

Երբ գրադարանը ՀԲԸՄ-ի Գահիրէի յաջորդ կեդրոնատեղին՝ Իմատ Էտտին փողոցին վրայ գտնուող շէնքին մէջ էր, գրադարանին համար առանձին սենեակ յատկացուած չէր: Գրասենեակներէն իւրաքանչիւրին մէջ գետեղուած էր մաս մը գրադարանէն: Արձանագրուած է իւրաքանչիւր սենեակի գրադարանին մէջ գտնուած գիրքերուն բնոյթը: Այսպէս.

- Հաշուակալութեան սենեակի գրադարան՝ Հայ ազգին պատմութեան վերաբերեալ ֆրանսերէն եւ անգլերէն գիրքեր.

- Տանկ թիւ 1 գրադարանի գիրքերուն.

- Տանկ թիւ 3 գրադարանի գիրքերուն.

ՀԲԸՄ Գահիրէի մասնաճիւղը, մտահոգուած իր Մատենադարանին վիճակով, 1973 թ. կը խնդրէ Տիգրան Պապիկեանէն, որ աչքէ անցնէ գիրքերը եւ կարծիք տայ անոնց մասին, դասաւորումի եւ այլ հարցեր կարգաւորելու համար:

Տիգրան Պապիկեան ուսումնասիրելէ ետք Մատենադարանին գիրքերը, հետեւեալ զեկոյցը կը յղէ Եգիպտոսի Կեդրոնական յանձնաժողովին եւ անոր ատենապետ Յովհաննէս Քէհեաեանին (*տե՛ս «Յաւելուած 1»-ը*):

Տարի մը ետք, նոյն Տիգրան Պապիկեանին կը տրուի խնդրանքը Աղեքսանդրիոյ Հէքիմեան մատենադարանին շուրջ նման ուսումնասիրութիւն մը կատարելու: 1974 թ. մարտին Տիգրան Պապիկեան Հէքիմեան մատենադարանի գիրքերու ցանկին կը կցէ իր «Նկատողութիւններ»ը, ուր կարմիր մատիտով խաչանիշ կրող կարգ մը գիրքեր կը նկատուին (*տե՛ս «Յաւելուած 2»-ը*):

ՀԲԸՄ գրադարանին ցանկերն ու տեսքերը

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Արխիւներուն մէջ գտնուեցան մէկէ աւելի ցանկերու եւ գիրքերու փոխառութեան տետրեր: Դժբախտաբար, այս տետրերուն մեծամասնութիւնը չ'ըսեր թէ ո՛ր գրադարանին կը պատկանի եւ չի նշեր թուականները: Ամենէն կանոնաւոր տետրերը կու գան Կեդրոնական մատենադարանէն: Բազմաթիւ ցանկեր կան այնտեղ, ինչ որ բնական է՝ նկատի առնելով գիրքերուն մեծ թիւը:

Այդ ցանկերը կազմուած են ֆրանսերէնով եւ բաժնուած են գլուխներու, իւրաքանչիւր իր խորագրով, գլուխին թիւով եւ էջաթիւերով: Բոլորն ալ մեքենագրուած են:

Այդ ցանկերէն մէկուն առաջին էջին վարի լուսանցքին գրուած հայերէն ձեռագիրը մեզի Վահան Մալէզեանին ձեռագիրը կը յիշեցնէ:

Գրադարանը ունեցեր է 11 տասնմէկ բաժիններ.

1. Բառարաններ եւ հանրագիտարաններ
2. Պարբերականներ – Նկարագարողումներ – Յուշեր
3. Դրամագիտական, կնքագիտական, հնախօսական
4. Հայաստան – Սուրիա
5. Վէպեր, ճանապարհորդական
6. Աշխարհացոյց (աթլաս) եւ աշխարհագրական
7. Բժշկական, հոգեբանական, քիմիագիտական,
8. Պատմութիւն, եգիպտաբանութիւն
9. Բարոյական եւ քաղաքացիական դաստիարակութիւն
10. Զանազան
11. Իրաւունք եւ օրէնսդրութիւն – դասական փիլիսոփայութիւն

Այս ցանկին մէջ հետաքրքրական երեւոյթ մը կը գրաւէ մեզ՝ երբ բոլոր գլուխները մէկ, երկու կամ երեք էջերէ կը բաղկանան, բժշկական բաժինը ամենէն ճոխն է եւ ունի տասնմէկ (11) էջեր:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ասիկա զարմանալի չէ, որովհետեւ ՀԲԸՄ հիմնադիր վարչութեան անդամներէն մին եւ Կեդրոնական մատենադարանին առաջին նուիրատուներէն մէկը՝ Նազարէթ Տաղաւարեան, ասպարէզով բժիշկ եղած է:

Այլ ցանկ մը կը հաշուէ ընդհանուր 29 էջ եւ կը բովանդակէ 1685 գիրքերու անուն: Այս ցանկն ալ ֆրանսերէնով գրուած է:

Երրորդ ցանկ մը, ամենէն մեծը այս երեքէն, գրուած է հայերէն, կազմուած է, կը հաշուէ 153 էջ եւ բովանդակէ 1822 հատորներ, ներկայացուած այբբենական կարգով:

1823 թիւով կը սկսի հնատիպ գիրքերու ցանկը.

1830 թիւով կը սկսի բառգիրքերու (բառարաններու) ցանկը

էջ 115-էն կը սկսի պարբերականներու այբբենական ցանկը

էջ 126-էն կը սկսի թատերական գիրքերու ցանկը, ապա

էջ 129-էն դպրոցական գիրքերու ցանկն է, եւ ի վերջոյ՝ գրացուցակներ, էջ 132-ի վրայ:

Այս հատորին վերջին էջերը նուիրուած են «Յանկ հեղինակներու», միշտ այբբենական կարգով եւ կը գրուեն էջ 133-153 էջերը:

Գիրքերու ընդհանուր թիւ՝ 2367 հատոր:

Եթէ ասոնց աւելցնենք 1685 ֆրանսերէն հատորները, Կեդրոնական մատենադարանին մէջ, 1912 թ. կ'ունենանք 4052 հատոր:

Քանի մը տասնամեակ ետք Մատենադարանը անուն կը փոխէ եւ կը կոչուի «Եագուպ Արթին գրադարան»:

Ասիկա կը հաստատուի այդ գրադարանէն մնացած մէկ տետրով, որուն մէջ արձանագրուեր են գիրքեր փոխ առնողներուն անունները, գիրքերուն անուններն ու փոխառնումի թուականները:

Այսօր Աղաթօն գրադարանը, որպէս կորիզ ունենալով Կեդրոնական մատենադարանի 4052 հատորները, ուռճացեր է Յովհաննէս Տէր Պետրոսեանի գիրքերով - գրեթէ ամբողջ գրադարանը՝ երեք

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

հազար գիրք, ինչպես նաև Տիգրան Գեորգեանի մատուորապէս չորս հազար գիրքերով եւ Պերճ Թէրգեանի ամբողջական գրադարանով՝ մատուորապէս երեք հազար գիրք:

Գրադարանում առկայ է նաև տասնհինգ անուն հայատառ թուրքերէն կրօնական բնոյթի գիրք, որոնք պահպանոււմ են առանձին դարակի վրայ:

Ասոնցմէ զատ գրադարանս վերջին տարիներուն ունեցած է անհատ նուիրատուներ, որոնք նուիրեր են 50-էն մինչեւ 500 եւ անլի գիրք՝ Տէօվլէթեան ընտանիք, Կասիա Ճղալեան, Գարոլին Ասլանեան, Անայիս Ճիզմէճեան, Ալիս Ճիզմէճեան, տոքթ. Սուրէն Պայրամեան, Հրանդ Քէշիշեան եւ այլք:

Աղաթօն գրադարանի հին ու հնարիպ գիրքերը

Կազմուած հայերէն ցանկագիրքին մէջ կը յիշուին թիւով եօթը (7) ձեռագիրներ, նոյն անունը կրող խորագրին տակ, եւ կը գրաւեն ցանկագիրքին երկու էջերը՝ 108-109:

Սակայն այս գիրքերէն ոչ իսկ մէկ հատ կարելի եղաւ գտնել բացուած սնտուկներուն մէջ, երբ կը դասաւորէինք Աղաթօն գրադարանը:

Իւրաքանչիւրին մասին մանրամասնօրէն գրուած է՝ չափը, կաշեկազմ թէ լաթակազմ ըլլալը, վայրն ու թուականը (եթէ ունին), էջաթիւերը, նկարագրութիւնը եւ այլն:

Այս եօթը մատեաններէն միայն երկուքը թուական ունին՝ 1723 եւ 1836: Մնացեալները տիտղոսաթերթ չունենալու պատճառով, նաև թուական չունին:

Ասոնցմէ զատ ունինք թիւով 244 գիրքեր, որոնցմէ երկուքը անգլերէն, մէկը ֆրանսերէն, իսկ չորրորդը իտալերէն են: Ասոնցմէ երկուքը կու գան 1700-ական թուականներէն.

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Պապմուսիսն վարուց Սրբ հորն մերոյ Գրիգորի Լուսաւոր-
չին Հայաստանեայց Հայրապետին, հայր Մատթէոս կրօնաւոր վար-
դապետ, ի տպարանի Անտոնի Պօռթոլի, ի Վէնէտիկ, 1749, 328 էջ.

Բ. Գիրք Սաղմոսաց ի Կոստանդնուպօլիս, 1782.

Բոլոր հին կամ հնատիպ գիրքերուն չափերը տարբեր են՝
շատ փոքրէն մինչեւ իրապէս շատ մեծ գիրքեր, ինչպէս «Շիրակ
տեղագրութիւն պարկերացոյց», հաւաքեց Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան, Վե-
նետիկ, Ս. Ղազար, ՌՅԼ – 1881, 192 էջ: Մնացեալ գիրքերը 1800-
ականներու սկիզբէն մինչեւ վերջ հրատարակուած գիրքեր են, տար-
բեր նիւթերու շուրջ՝ գրական, գիտական, կրօնախօսական եւ այլն:

Այսօր Աղաթօն գրադարանը կը ծառայէ փոքր թիւով եգիպ-
տահայերու եւ անլի մեծ թիւով այլ գաղութներէ պրպտումներ կատա-
րող անհատներու:

Յաւելուած 1

Հելիոպօլիս, 15 նոյեմբեր 1973

Մեծայարգ Տիար Յովհաննէս Քէիեաեան, ատենապետ

ՀԲԸՄ Եգիպտոսի Կեդր. յանձնաժողովի, Գահիրէ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԲԸՄ-ի Մատենադարանի մասին

Մեծայարգ տիար,

Վերջերս մեր նիստերէն մէկուն ընթացքին Ձեր կողմէ յայտ-
նուած փափաքին ընդառաջելով, մի քանի առաւօտներ զբաղուեցայ
Միութեան գրասենեակի գրադարաններուն պարունակած գիրքերով:
Զարմանքով հաստատեցի նոյն առթիւ, որ անոնցմէ զատ բազմաթիւ
հատորներ գոյութիւն ունին յարակից մառանի մը մէջ: Իբրեւ լուծում
երկար տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող գիրքերու այս տխուր ճա-
կատագրին՝ կը փութամ հետեւեալ առաջարկները ներկայացնել
ոստուարժան ժողովիդ.

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր զտում մը կատարել եւ անպէտ նկատուած գիրքերն ու դասագիրքերը ձեռքէ հանել որեւէ ձեւով մը, մնացեալ հատորները կարենալ դասաւորելու համար, մանաւանդ հայաստանեան հրատարակութիւններու ստուար թիւով հատորներ, որոնք, տեղի պակասի հետեւանքով, սաստիկ խոնուած վիճակի մէջ կը գտնուին եւ ցարդ չեն օգտագործուած:

2. Կարգ մը հատորներու շարքեր կան, որոնք թէպէտեւ մեր հասարակութիւնը հետաքրքրելու բնոյթը չունին, սակայն շահագրգռեն պետական եւ կամ տեղւոյս ֆրանսական մշակութային հիմնարկներէն ոմանց: Ասոնցմէ են օրինակի համար.

✓ Documents officieles du Gouvernement Egptien 1884-էն... մօտ 20 հատոր:

✓ Revue des Deux Mondes 1890-էն... մօտ 20 հատոր (այսօր այս անունին տակ ունինք 144 հատորներ):

✓ L'Année Scientifique Industrielle 1859-էն... մօտ 17 հատոր եւ այլն:

3. Նոյնքան եւ թերեւս աւելի մեծ քանակութեամբ բժշկական զանազան մասնագիտութեանց վերաբերեալ հատորներ, որոնց մասին յարմարագոյն կարգադրութիւն մը կարելի է ընել, մասնագէտ բժիշկներու կարծիքը առնելէ վերջ միայն:

4. Վերելը յիշուած մառանին մէջ դիզուած գտայ բազմաթիւ այլազան հատորներու կողքին մեծ թիւով օրինակներ հետեւեալներէն.

✓ ա. Ողբացեալ Արշակ Ալպօյաճեանի «Պատմութիւն հայ Կեսարիոյ» եւ «Պատմութիւն հայ գաղթականութեան» երկերէն.

✓ բ. Ողբացեալ Վահան Զարդարեանի «Յիշատակարան»-երէն եւ այլն:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Այս հատորները կարելի է նույնիսկ տեղադրել կամ գաղթաշխարհի, կամ հայրենի մատենադարաններում, ինչպես նաև վարժարաններում՝ իբրև մրցանակ տրուելու համար, անոնցմէ որոշ թիով օրինակներ պահելով հանդերձ Միությանս մատենադարանին մէջ:

5. Ի մի հաւաքել հայոց պատմութեան եւ առ հասարակ հայ մշակոյթին եւ հայկական դատին վերաբերեալ բոլոր երկասիրութիւնները՝ հայերէն ըլլան անոնք կամ օտար լեզուով: Զանոնք պահել մէկ պահարանի մէջ եւ մասնաւոր հոգածութեան առարկայ ընել, նկատի ունենալով որ անոնցմէ շատեր թանկագին վկայութիւններ են ըլլայ հեղինակներու արժէքին, ըլլայ անոնց հրատարակութեան տեսակետէն: Կը թելադրեմ նման աշխատանք մը տանիլ նաեւ ՀԲԸՄ բոլոր հրատարակութիւններուն համար, որոնցմէ գէթ մի քանի օրինակ կազմուած վիճակի մէջ պահելով տարուէ տարի:

6. Վերոյիշեալ կարգադրութիւնները ամբողջացնել, մնացեալ հատորները ցանկագրելով յատուկ տոմարի մը մէջ. այդ ցանկէն որոշ թիով օրինակներ բազմապատկել «սթենսիլ»ով եւ ուղարկել հետաքրքրուող մշակութային կազմակերպութիւններու:

7. Վերջապէս անձ մը նշանակել, որ պատասխանատու ըլլայ ոչ միայն անոնց անվթար պահպանութեան, այլ մասնաւոր զանոնք մշտապէս կերպով օգտագործելու միջոցներ ստեղծելու աշխատանքին, ըլլայ անհատներու կողմէ, ըլլայ հաւաքական եղանակով, ինչպէս դասախօսութիւններ, ասանդական հաւաքոյթներ եւ այլն, որպէսզի Մատենադարանը, որ տարիներու ընթացքին գոյացած է պատուական ազգայիններու նուիրատուութիւններով եւ Միութեան նիւթական զոհողութիւններով, իր նպատակին ծառայէ, փոխանակ ըլլալու լոկ գոց պահարաններու ցուցադրութիւն մը:

Այն յոյսով, որ վերոյիշեալ առաջարկները պատասխանատու վարչութեանդ շնորհիւ մօտաւոր ժամանակի մը մէջ իրականութեան

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կը վերաճուին եւ կը ծառայեն մեր ներկայ նորահաս սերունդներու մտաւոր զարգացումին, կը փոխան յայտնել յաջողութեան սրտագին մաղթանքներս:

*Տ. Պապիկեան
(ստորագրութիւն)*

Յաւելում 2

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Իսաչանիշով նշանակուած գիրքերը պահել եւ դասաւորել ըստ սեռի (գրականութիւն, պատմութիւն, թատրերգութիւն, կենսագրութիւն, բառարաններ):

2. Կրկին եւ երեակ օրինակներ կան. կարելի է զանոնք նուիրել այլ գրադարաններու:

3. Ժողովրդական վէպերը առանձին պահարանի մը մէջ տեղաւորել:

4. Պատանեկան վէպերը առանձին պահարանի մը մէջ տեղաւորել:

5. Հայաստանի հեղինակները առանձին պահարանի մը մէջ տեղաւորել:

6. Պր. Հայկ Կարինեանի յանձնուած 10 հատոր «Սաւառնակ» (տես թիւ 16):

*Տիգրան Պապիկեան
(ստորագրութիւն)*


ԱՇԽԱԿԵՐՏԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

ՆԵՐԼԻ ՉՈՓՈՒՅԱՆ

Հիմնարար գիտական գրադարան

ՀՏԴ 070(479.25)

Հիմնարար գիտական գրադարանի հավաքածուներում իրականացվող մատենագիտական որոնողական աշխատանքները հաճախ հնարավորություն են տալիս բացահայտելու մինչ այժմ անհայտ կամ քիչ ուսումնասիրված նյութեր, որոնք կարևոր նշանակություն



ունեն հայ տպագիր մշակութային ժառանգության ուսումնասիրության գործում: Նման նյութերից է «Լոյս» աշակերտական ձեռագիր ամսագիրը, որը հայտնաբերվել է ՀԳԳ Պողարյան հավաքածուում և ներկայացնում է սփյուռքահայ կրթական կյանքի ուշագրավ վկայություններից մեկը: Հայոց ցեղասպանությունից հետո Մերձավոր Արևելքում, մասնավորապես Սիրիայի Հալեպ քաղաքում հաստատված գաղթականության և որբերի համար ազգային ինքնության պահպանման գլխավոր գործոնը դարձել էր հայ դպրոցն ու մամուլը: Այս առումով բացառիկ պատմական, լեզվաբանական և ազգագրական արժեք է ներկայացնում Հալեպի Կրթասի-

* Հոդվածը ներկայացվել է 12.05.2026, ընդունվել է տպագրության 26.06.2026:
The article was submitted on 12.05.2026, accepted for publication on 26.06.2026.

րաց երկսեռ վարժարանի սաների նախաձեռնությամբ ստեղծված «Լոյս» աշակերտական ձեռագիր ամսագիրը (1927 թ. ապրիլ-1932 թ. մարտ), որը պահպանվում է գրադարանի «Գրիգոր Պողարյան» անհատական հավաքածուում:

Ձեռագիր աշակերտական մամուլը հայկական կրթամշակութային համակարգի յուրահատուկ դրսևորումներից է, որը ձևավորվել է XIX դարի վերջից և առավել ակտիվ զարգացել XX դարի առաջին կեսին: Այս երևույթը հատկապես ընդգծված է սփյուռքահայ համայնքներում, որտեղ հայկական դպրոցը ոչ միայն կրթական, այլև ազգային ինքնության պահպանման հիմնական ինստիտուտն էր: Սփյուռքահայ իրականության մեջ հետեղեռնյան տարիներին ձեռագիր պարբերականները դարձել են մշակութային դիմադրության, ինքնության պահպանման և մայրենի լեզվի պահպանման կարևոր միջոցներ:

Ձեռագիր պարբերականների ստեղծումը պայմանավորված էր մի շարք գործոններով: Առաջին հերթին՝ տպագրական հնարավորությունների սահմանափակումը ստիպում էր օգտագործել ձեռագիր ձևաչափը որպես տեղեկատվության տարածման միջոց: Երկրորդ՝ այն հնարավորություն էր տալիս զարգացնել աշակերտների ստեղծագործական ունակությունները, խթանել գրավոր խոսքի մշակույթը և ձևավորել լեզվական ինքնագիտակցություն: Երրորդ՝ այս պարբերականներն ունեին նաև դաստիարակչական և համայնքային միավորող գործառույթ, քանի որ հաճախ ընթերցվում էին դպրոցական հավաքների ժամանակ և դառնում քննարկման առարկա:

Սփյուռքահայ կրթական միջավայրում, հատկապես Հալեպում, Բեյրութում և Կահիրեում, ձեռագիր աշակերտական մամուլը ձևավորվեց դպրոցական գործընթացի ինքնակազմակերպման բարձր մակարդակի հիման վրա: Այս պարբերականները սովորաբար խմբագրվում էին աշակերտների կողմից՝ ուսուցիչների վերահսկողությամբ, պարունակում էին գրական ստեղծագործություններ,

թարգմանություններ, պատմական նյութեր, ինչպես նաև դպրոցական կյանքի նկարագրություններ: Դրանց բովանդակությունը հաճախ արտացոլում էր ոչ միայն կրթական գործընթացը, այլև ժամանակի սոցիալ-մշակութային իրականությունը: Պարբերականները նպաստում էին աշակերտների ինքնարտահայտմանը և միաժամանակ ծառայում էին որպես լեզվական փորձարարական դաշտ, որտեղ ձևավորվում էին արևմտահայերենի գրավոր տարբերակի տարբեր շերտեր:

Ձեռագիր աշակերտական մամուլի կարևոր առանձնահատկություններից է նաև դրա գեղարվեստական ձևավորումը: Շատ պարբերականներ ներառում էին աշակերտների կողմից արված նկարազարդումներ, որոնք վկայում են ստեղծագործական բարձր մակարդակի մասին: Այս հանգամանքը թույլ է տալիս դրանք դիտարկել ոչ միայն որպես տեքստային աղբյուր, այլև որպես տեսողական մշակույթի օրինակ:

«Լոյս. աշակերտական ամսագիր Կրթասիրաց երկսեռ վարժարանաց»¹ պարբերականը հրատարակվել է Հալեպում 1927 թ. ապրիլից մինչև 1932 թ. մարտը: Ամսագրի վերաբերյալ տեղեկությունները մատենագիտական գրականության մեջ առկա են, սակայն դրանք սահմանափակ և հատվածային բնույթ ունեն: Ա. Տեր-Խաչատուրյանն, իր «Սուրիահայ մամուլի պատմութիւն» աշխատության մեջ (Պէյրոս, 1972, էջ 223) նշում է, որ հայտնի է ամսագրի առնվազն 16 համար: Նա փաստում է, որ ամսագիրը ձեռագիր է և սփյուռքահայ աշակերտական մամուլի շրջանակում ունի յուրահատուկ տեղ: Ա. Կիրակոսյանի «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն 1794-1967» գրքում (Երևան, 1970, էջ 296) ամսագիրը նկարագրված է աստղանիշով: Ընդգծված են միայն անհրաժեշտ մի քանի տվյալները: Մանրամասն տեղեկություններ կան «Սուրիոյ հայկական տպա-

¹ Համահայկական թվանշային գրադարան՝ <https://arar.sci.am/dlibra/publication/455605/edition/422960/content>


րանները» գրքում (Հալէպ, 1973, էջ 202), ուր նշվում է նաև, թե որտեղ են պահվում ամսագրի համարները:

Հիմնարար գիտական գրադարանի «Պողարյան» հավաքածուի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց ճշգրտել, հստակեցնել «Լոյս» ամսագրի պահպանված օրինակների ժամանակագրական շրջանակը: Պարզվեց, որ գրադարանում պահպանվում են 1927–1930 և 1932 թթ. համարները. բացակայում է 1931 թ. ամբողջությամբ: Ամսագրի ֆիզիկական օրինակները հնարավորություն տվեցին առաջին անգամ ուսումնասիրել դրա կառուցվածքը, թեմատիկ ուղղվածությունը, բովանդակային առանձնահատկությունները:

«Լոյս» ամսագիրը ստեղծվել է հետեղեռնյան պայմաններում ապրող սաների կողմից և հանդես է եկել որպես կրթական, գրական և մշակութային ինքնարտահայտման հարթակ: Այն միաժամանակ ծառայել է որպես դպրոցական ուսուցման, ստեղծագործական փորձի և ազգային ինքնության պահպանման միջոց: Պարբերականի էջերում տեղ են գտել աշակերտների ինքնուրույն ստեղծագործություններ, գրական մշակումներ, թարգմանություններ, ինչպես նաև հայ և արտասահմանյան հեղինակների երկերի վերարտադրություններ ու մեկնաբանություններ: Այս բազմաշերտ բովանդակությունը վկայում է ոչ միայն ուսումնական գործընթացի ակտիվության, այլև աշակերտական միջավայրում ձևավորված բարձր մակարդակի մշակութային ինքնագիտակցության մասին:

Ձեռագիր ամսագրի առանձնահատկություններից է նաև դրա գեղարվեստական ձևավորումը: Այն գրված է արևմտահայ ուղղագրությամբ, աչքի է ընկնում խնամքով մշակված ձեռագրով և աշակերտների կողմից կատարված նկարազարդումներով:

Բովանդակային առումով «Լոյս»-ը ներառում է գրական, կրթական և դաստիարակչական բնույթի նյութեր՝ բանաստեղծու-



թյուններ, պատմվածքներ, թարգմանություններ, ինչպես նաև անդադարձներ դպրոցական կյանքի տարբեր կողմերին: Հատուկ արժեք են ներկայացնում այն նյութերը, որոնք արտացոլում են հետեղեռնյան սիրիահայ որբերի առօրյան, լեզվական առանձնահատկությունները, այդ թվում՝ Այնթապի բարբառի տարրերը, ինչպես նաև արհեստագործական և սոցիալական փորձառությունները: Այս տեսանկյունից ամսագիրը հանդես է գալիս որպես եզակի վա-

վերագիր, որն արձանագրում է ոչ միայն կրթական գործընթացը, այլև համայնքի սոցիալ-մշակութային վերակազմավորման փուլը:

Թեև ամսագրի ամբողջական բովանդակության ուսումնասիրությունը դեռևս պահանջում է շարունակական աշխատանք, առկա նյութերը բավարար են այն գնահատելու՝ որպես 1920–1930-ական թվականների սիրիահայ դպրոցական կյանքի կարևոր վավերագիր:



ՀԱՄԱՁԱՍԴ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. ԳՐՔԻ ՆՎԻՐՅԱԼԸ

ՀՏԴ 929:069.5(479.25)Համբարձումյան

Հայ մտավորականության պատմության մեջ կան անուններ, որոնց գործունեությունը միավորում է գիտությունը, գրականությունը և կրթությունը: Այդպիսի բացառիկ դեմքերից է Համազասպ Ասատուրի Համբարձումյանը՝ գրականագետ, թարգմանիչ, մանկավարժ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, որի կյանքն ու գործունեությունը կարևոր էջ են հայկական մշակույթի և գիտության պատմության մեջ:

Համազասպ Համբարձումյանը ծնվել է 1880 թ. սեպտեմբերի 25-ին Բասարգեչարում, չնայած փաստաթղթերի մեջ արձանագրված է 1883 թ.: Նրա մանկությունն անցել է Գեղարքունիքի գեղեցիկ բնության մեջ, որտեղից էլ սկսվել է գիտելիքի հանդեպ առաջին հետաքրքրությունը: Սկզբնական կրթությունը ստացել է գյուղական դպրոցում՝ ամեն օր ոտքով հասնելով հարևան Մեծ Մազրա գյուղում գտնվող դպրոցը: Այնուհետև ուսանել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, շարունակել կրթությունը Մոսկվայի Լազարյան ճեմարանում, որից հետո ընդունվել Սանկտ Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, որն ավարտել է 1907 թ.:

Կյանքի մի հատվածում զբաղվելով իրավաբանությամբ՝ այնուհետև նա ընտրել է կրթության և գիտության ճանապարհը: Դասավանդել է Թիֆլիսի դպրոցներում, համագործակցել է ժամանակի հայտնի պարբերականների հետ՝ «Մշակ»-ի, «Հորիզոն»-ի և թերթերում հրապարակելով իր հոդվածներն ու բանաստեղծությունները:

Համազասպ Համբարձումյանի ստեղծագործական գործունեությունը սկսվել է երիտասարդ տարիներից: Նրա առաջին բանաստեղծական ժողովածուները՝ «Արյուն էջեր», «Անհունի էջերում», և «Հպարտ հոգու երգերից», լույս են տեսել դեռևս 20-րդ դարի սկզբին: Ավելի ուշ նրա բանաստեղծությունները հրատարակվել են նաև Վիեննայում՝ երեք հատորով:

Համազասպ Համբարձումյանի գիտական գործունեության կարևորագույն ուղղությունը անտիկ գրականության ուսումնասիրությունն ու թարգմանությունն էր: Տիրապետելով հին հունարենին և լատիներենին՝ նա համաշխարհային գրականությունը ներկայացրել հայ ընթերցողին՝ թարգմանելով անտիկ գրողների ստեղծագործությունները հայերեն: Նրա թարգմանության մը լույս են տեսել «Հույն ողբերգակներ» ժողովածուն, Հոմերոսի հանրահայտ «Իլիականը»: Հոմերոսի ստեղծագործության գիտական ուսումնասիրության համար նրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան:


Վաստակաշատ գիտնականի իր մահկանացուն կնքել է 1965 թ. և հուղարկավորվել է Բյուրականում, որտեղ թաղված է նաև որդին՝ աշխարհահռչակ աստղագետ Վիկտոր Համբարձումյանը:



Լինելով գրքասեր անձնավորություն՝ Համբարձումյանը կյանքի ընթացքում հավաքել է եզակի արժեք ներկայացնող գրքեր և պարբերականներ, որոնք տպագրվել էին աշխարհի տարբեր վայրերում 18-րդ դարից սկսած՝ հայերեն և օտար լեզուներով: Հայտնի է, որ 1904 թ. նա ունեցել է ընդամենը 150 միավոր գրականություն, մինչդեռ կյանքի վերջում գրադարանի միավորների թիվը հասել է 2214-ի:

1965 թ., նրա մահից հետո, կինը՝ Հռիփսիմե Համբարձումյանը անձնական գրադարանը նվիրել է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ակադեմիայի գրադարանին, որի հիման վրա էր կազմավորվել է գրադարանի առաջին անհատական հավաքածուն: 1968 թ. գրադարանում բացվել է նոր սրահ՝ «Պրոֆեսոր Համազասպ Ասատուրի Համբարձումյանի գրադարանային ֆոնդ» վերտառությամբ: Համբարձումյան ընտանիքի առաջարկով Հիմնարար գիտական գրադարանին է տրվել նաև գիտնականի աշխատասենյակի գույքը, որը մինչ այդ գտնվում էր Բյուրականի առանձնատան առաջին հարկում: Դրանք Համբարձումյան գերդաստանի ընտանեկան պահարաններն էին, հայելին և մի շարք անձնական իրեր:

Անհատական հավաքածուի մեջ կա 385 միավոր հայերեն, 1521



միավոր ռուսերեն, 307 միավոր այլ լեզուներով գրականություն, որոնց բոլորի վրա դրված է «Համազասպ Համբարձումյանի գրքերից» կնիքը:

Գրականությունը պահպանված է խնամքով և տեղակայված շքեղ, հնաոճ գրապահարանների մեջ:

ՀԱՂՈՐԴՈՒՄ

1965 թվականից սկսած առ այսօր անհատական հավաքածուն և աշխատասենյակի կահույքը պահպանվում են գրադարանում: Ժամանակը, սակայն, իր հետքն ու փոշին էր դրել դրանց վրա, և հուշասենյակը վերանորոգման կարիք ուներ:

2025 թ. հոկտեմբերին գրադարանի տնօրենության դիմումի հիման վրա այդ կարևոր գործը հանձն առավ «Մարտին Սթար» ընկերությունը: Վերանորոգման աշխատանքները մեկնարկեցին 2026 թ. հունվարից: Կարճ ժամանակահատվածում հուշասենյակը ստացավ իր բովանդակությանը համահունչ տեսք՝ պատրաստ ընդունելու այցելուներին: Մեր երախտագիտությունն ենք հայտնում Համբարձումյան գերդաստանին՝ այս շքեղ նվիրատվության և «Մարտին Սթար» ընկերության ղեկավարությանը՝ մշակութային արժեքների նկատմամբ ունեցած հոգատար վերաբերմունքի համար:

Համազասպ Համբարձումյանի կյանքը և թողած ժառանգությունը վկայում են, թե ինչպես կարող է մեկ անձը միավորել գիտությունը, գրականությունը և կրթությունը՝ թողնելով հարատև հետք ազգային մշակույթի պատմության մեջ:

Մայա Գրիգորյան
Հիմնարար գիտական գրադարան

ԲՈՎԱԼՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագրի սյունակ 3

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ԳԱՐԵԳԻՆ ՂՈՉԻԿՅԱԼ

Յուզական (մասնագիտական) այրումը
գրադարանավարների մոտ..... 5

21-րդ դարի գրադարան

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈՔՅԱԼ, ՆԵԿՏԱՐ ԱՎԵՏԻՍՅԱԼ

Թվային գրադարանների զարգացման
միտումները Հայաստանում..... 50

ԿՐԹԱԿԱԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱԼ

Թվային պահոցները որպես բուհի
գիտական տեսանկյունից քարտեզացման գործիք..... 78

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՍԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱԼ

Ռազմավարական մտածողության բանալին.
SWOT վերլուծություն..... 91

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ՌՈՒԶԱՆԱԿ ՆԵՐՍԻՍՅԱԼ

Կոտայքի մարզի գրադարանները..... 110

ԶԱՐՈՒՅԻ ՏՈՆՈՅԱԼ, ԷԼՄԻՐԱ ՂԱՆԴԻՆՅԱԼ

Արագածոտնի մարզի համայնքային գրադարանները..... 124

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՎԱԳՈՒԹՅՈՒՆ

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱԼ, ՄԵՐԻ ՄԱՆՈՒԿՅԱԼ, ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱԼ

Մատենագիտական հետախուզումներ..... 124

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄՅԱԼ

*Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության
Գահիրէի գրադարանները 187*

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՆԵԼԼԻ ՉՈՓՈՒՐՅԱԼ

Աշակերտական ձեռագիր պարբերականի հետքերով..... 202

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱԼ

Համազասպ Համբարձումյան. Գրիք նվիրյալը..... 207

CONTENTS

Editor-in-Chief's Column 3

THEORY AND PRACTICE

GAREGIN GHOCHIKYAN

Emotional (professional) burnout among librarians 5

21ST CENTURY LIBRARY

ARMINE HAKOBYAN, NEKTAR AVETISYAN

*Trends and Perspectives in the Development of
Digital Libraries in Armenia, 2015–2025..... 50*

LIBRARIES OF EDUCATIONAL INSTITUTIONS

NARINE HARUTYUNYAN

*Digital Repositories as a Tool for University Scientific Visibility: A Case Study of
the Library of Brusov State University 78*

LIBRARY STATISTICS

VARSENIK SARGSYAN

The Key of Strategic Thinking: SWOT Analysis 91

REGIONAL AND COMMUNITY LIBRARIES

RUZANNA NERSISYAN

Libraries of Kotayk Region..... 110

ZARUHI TONoyAN, ELMIRA GHANDILYAN

Community libraries of Aragatsotn region..... 124

CULTURAL HERITAGE

STYOPA PETOYAN, EMMA CHOOKASZIAN

*The Voskan Bible of Archbishop Astvadzadour Fakhrabadtsi
in the Morgan Library & Museum (PML 199389):*

*An Inscribed New Julfa Binding and Armenian Practices of Commemorative
Book Patronage and Distribution*..... 145

TIGRAN ZARGARYAN, MERY MANUKYAN,

MAYA GRIGORYAN

Bibliographical Searches 171

Հայերեն բաժնի խմբագիր
Հայերեն բաժնի սրբագրիչ
Անգլերենի խմբագիր և սրբագրիչ՝
Համակարգչային ձևավորում և էջադրում՝

Նելլի Հայրապետյան
Գոհար Սարգսյան
Նունե Շահումյան
Ռուզաննա Թումանյան

Editor of Armenian section
Proofreader for Armenian section
Editor and proofreader of English
Computer design and pagination

Nelly Hayrapetyan
Gohar Sargsyan
Nune Shahumyan
Ruzanna Sargsyan

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24/6

Address: Marshal Baghramyan ave. 24/6, 0019, Yerevan, Armenia

Ամսագրի պաշտոնական կայքէջը՝
<https://www.flib.sci.am/journal/Lratu/>

Official site of the journal
<https://www.flib.sci.am/journal/Lratu/>

